





ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱԾՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՍ





ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

Հեղինակային խոմբ՝
ՌՈՒՍԱՄ ՄԱԽՄՈՒՅՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՅՑ
ԱՐՄԻՆԵ ՍԱԴԻԿՅԱՆ
ՌՈՒԲԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Սույն գեկույցը ֆինանսավորվել է ԱՄՆ պետդեպարտամենտի դրամաշնորհի շրջանակներում:
Սույն գեկույցում արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները
հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ԱՄՆ պետդեպարտամենտի
տեսակետներին:

2013թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
• Հետազոտության նպատակը և խմբիրները	
• Հետազոտության մեթոդաբանությունը	
• Ընդհանուր տվյալներ անցկացված սոցիոլոգիական հարցումների վերաբերյալ	
2. << ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԳՈՅՉՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՏԱՁՆԱՀԱՅԵՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅԱՆ	6
• Իրավական և սոցիոլոգիական վերլուծություն	
3. ԻՐԱՎԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ << ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ	28
• Զինծառայողների իրավական պաշտպանության հիմքերը (միջոցները)	
• Զինծառայողների կողմից իրենց խախտված իրավունքների վերականգնման միջոցների համակարգը և դրանց կիրառության հիմնախնդիրները	
• Բողոքարկման իրավունքը որպես իրավական պաշտպանության արդյունավետ միջոց	
• Դատական կարգով բողոքարկման մեխանիզմների (կառուցակարգերի) արդյունավետությունը << զինված ուժերում	
• Բողոքարկման հնարավորությունները և արդյունավետությունը ըստ սոցիոլոգիական հարցումների տվյալների	
4. ՏՈՒՅՔԵՐԻ ԵՎ ԽՐԱԽՈՒՍԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ << ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ	42
• Տույժերի հասկացությունն ու համակարգը, դրանց տեսակների կիրառելիության արդյունավետությունը	
• << զինված ուժերում հաճախ կիրառվող տույժերը ըստ սոցիոլոգիական հարցման տվյալների	
• Խրախուսանքների հասկացությունը, տեսակները, կիրառության արդյունավետությունը	
5. ԲՈՒԺՄԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ << ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ	60
• Բուժսպասարկման և բուժօգնության իրավական ամրագրման հիմունքները	
• << Զինված ուժերում բուժսպասարկման և բուժօգնության որակն ու խնդիրները, բուժօգնություն տրամադրող անձանց մասնագիտական որակը ըստ սոցիոլոգիական հարցման տվյալների	
• Առողջական վիճակի վերաբերյալ կայացված ակտերի հասանելիության և դրանց բողոքարկման հիմնախնդիրները	
• << զինված ուժերում սննդի, ջրի որակը եւ սանիտարահիգիենիկ պայմանները ըստ հարցման տվյալների	
6. ԵԶՐԱԿԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	72
7. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	74

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում գինված ուժերի բնագավառում բարեփոխումների իրականացման մասին պաշտոնական հավաստիացումներին զուգահեռ շարունակվում են գինված ուժերում մարդու իրավունքների խախտումները: Ելնելով << Սահմանադրության 8.2 հոդվածի՝ գինված ուժերը գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո, դրույթից՝ <ելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը շարունակելով իր առաքելությունը գինված ուժերում մարդու իրավունքների վիճակի բարելավման ուղղությամբ իրականացրել է հերթական ուսումնասիրությունը:

Ձեկույցում ներկայացված են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են գինվորական կարգապահության, գինծառայողներին տրվող սույժերի ու խրախուսանքների, արդյունավետ իրավական պաշտպանության, բողոքարկման մեխանիզմների և դրանց արդյունավետության, որակյալ բժշկական օգնության ու սպասարկման վերաբերյալ օրենսդրությունը և դրա կիրառումը: Այդ հարցերը հիմնականում ներկայացվել են << Ներպետական օրենսդրության, միջազգային իրավական փաստաթղթերի, ինչպես նաև ծրագրի շրջանակներում անցկացված սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների հիման վրա:

Ի տարբերություն նմանատիպ այլ հետազոտությունների, այս գեկույցը կազմվել է գինված ուժերից արդեն գորացրված գինծառայողների կողմից ներկայացված տեղեկությունների հիման վրա. մարդիկ, ովքեր չգտնվելով որևէ ենթակայական հարաբերություններում սպայակազմի հետ, ազատ ու անկաշկանդ ներկայացրել են հիմնախնդիրների վերաբերյալ իրենց կարծիքները՝ ունենալով գինվորական ծառայության վերաբերյալ թարմ տպավորություններ:

Սոցիոլոգիական հարցումներն իրականացվել են 19-30 տարեկան արական սեռի այն քաղաքացիների շրջանում, ովքեր բնակվել կամ բնակվում են << մի քանի մարզերի (Լոռի, Տավուշ, Շիրակ և Երևան) քաղաքներում, գյուղերում, և որոնք պարտադիր ժամկետային գինվորական ծառայության են անցել << գինված ուժերում ու գորացրվել են 2012թ. ընթացքում¹:

Հետազոտության նպատակն է պարզել 2012 թ. մարտին ընդունված << գինված ուժերի կարգապահական կանոնագրքի կիրառման արդյունավետությունը:

Հետազոտության իրականացման համար մշակվել է որոշակի մեթոդաբանություն, որը բաղկացած է 2 փուլից. 1) ուսումնասիրություն 2) տեղեկատվության աղբյուրներն ու դրանց հիման վրա ստացված տվյալների վերլուծություն:

Ուսումնասիրության փուլում որպես նախապատրաստական գործընթաց, հեղինակային խմբի կողմից ուսումնասիրվել է ոլորտին վերաբերող օրենսդրությունը, մշակվել են հարցաշարերը, հետազոտության կազմման համար օգտակար այլ փաստաթղթերն ու աշխատությունները, այնուհետև, կատարվել է տվյալները համակարգող անձանց ընտրությունն ու ուսուցումը: Հարցազրուցավարների հավաքված տեղեկությունների հիման վրա կազմվել է վերլուծության համար անհրաժեշտ տեղեկատվական բազա, որը համապատասխան մասնագիտական մշակվածության է ենթարկվել, իսկ հետագայում դրա հիման վրա կազմվել է սույն հետազոտությունը՝ ներառելով համապատասխան առաջարկություններ:

Տեղեկատվության աղբյուրները հիմնականում եղել են սոցիոլոգիական հարցումների արդ-

¹ Այստեղ նկատի ենք ունեցել այն անձանց, ովքեր, զորակովել են ոչ ուշ, քան 2010թ. և բնականաբար երկու տարին լրանալուց հետո զորացրվել են, ինչը համապատասխանում է 2012թ., սակայն կան դեպքեր, երբ հարցվողները օրենքով նախատեսված հանգանաքներից ելնելով զորացրվել են վաղաժամկետ, հետևաբար զորակոչման ժամկետը կարող է լինել ոչ միայն 2010, այլ նաև հաջորդաբար 2011 և 2012 թթ. գարնանային և աշնանային զորակոչերը:

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅՈՒՆԻ ՊԱՇՏՊԱՍՈՒԹՅԱՆ ՀԻՄԱԽԱԴՐՄԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

յունքները և որոշ իրավապաշտպան կազմակերպությունների կողմից ոլորտին վերաբերող իրապարակված գեկուցներն ու հաշվետվությունները: Արդեն դրանցից ստացված տվյալները իրավական վերլուծության են ենթարկվել տեսական գրականության մեջ տեղ գտած կարծիքների, իրավակարգավորման մեխանիզմների, ինչպես նաև ձևավորված իրավակիրառ պրակտիկայի հաշվառմամբ: Հետազոտության մեջ հաճախակի է օգտագործվել համեմատաիրավական վերլուծության մեթոդը:

Սոցիոլոգիական հարցումներն իրականացվել են 2012 թ. ընթացքում գորացրված թվով 778 գինծառայողների շրջանում, որոնցից 336 անձ հարցման է ենթարկվել Երևանում, իսկ 442 անձ՝ Հայաստանի մարզերում, մասնավորապես հարցվողներից 178-ը՝ Լոռու, 187-ը՝ Շիրակի և 77-ը Տավուշի մարզերից:

Հետազոտության ընտրանքը: Համաձայն Հայաստանի Հանրապետության Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից 2012թ. մայիսի 7-ին իրապարակված «Տեղեկատվության. <<Ազգային ժողովի 2012թ. մայիսի 6-ի ընտրությունների համամասնական ընտրակարգով քվեարկության ընթացիկ արդյունքների (նախնական)» տվյալների՝ 19-30 տարեկան արական սեռի <<քաղաքացիների թիվը նշյալ մարզերում և Երևան քաղաքում կազմում է 281521 մարդ՝ ինչը կազմում է հետազոտության գլխավոր համախմբությունը, որտեղ, հետազոտության տվյալների 3,4% ծշգրտության դեպքում 95% վստահության միջակայքում, ընտրանքային համախմբությունը հաշվարկվում է 778 մարդ:

Սույն ուսումնասիրության համար կառուցվում է բազմաստիճան (շերտավորված) նպատակադիրված պատահական ընտրանք: Ընտրանքի կառուցման սկզբնական փուլում նպատակադիրված կերպով առանձնացվել են ընտրանքային միավորները (մարզերը, բնակելի տարածքները):


1. Մարզերի ընտրություն: Հետազոտությունում ընդգրկված են հանրապետության 3 մարզերը և Երևան քաղաքը (Երևան քաղաքն ունի համայնքի հատուկ կարգավիճակ և սույն ուսումնասիրության մեջ այն դիտարկվում է որպես առանձին միավոր):

2. Բնակելի տարածքների, հարցման կետերի ընտրություն: Ապահովելու համար գյուղական և քաղաքային բնակավայրերի բնակիչների ներկայացվածությունը ընտրանքում՝ նախ հաշվարկվել է յուրաքանչյուր մարզի գյուղական և քաղաքային բնակավայրերում ապրողների տոկոսային հարաբերակցությունը: Հստ այդմ որոշվել է, թե յուրաքանչյուր մարզում իրականացվելիք հարցագրույցների որ մասը պետք է անցկացնել քաղաքներում, իսկ որ մասը՝ գյուղերում: Ցուրաքանչյուր մարզում, ինչպես նաև քաղաք Երևանում, համայնքներն ընտրելիս հաշվի է առնվել կենտրոնի հետ ունեցած հեռավորությունը: Այդպիսով առանձնացվել է հարցման կետերի 3 տիպ՝


ա) Մարզկենտրոն, բ) մարզային համայնքներ, որոնք գտնվում են մարզկենտրոնի և ծայրամասերի մեջտեղում և գ) ծայրամասային համայնքներ, որոնք գտնվում են մարզի ծայրամասում: Հարցման կետերում հարցվողների թիվը որոշվում է ըստ բնակչության թվի համամասնության:

3. Հարցման միավորի և հարցվողի ընտրություն: Հարցման միավորի ընտրության համար կարևորվել է առաջին միավորի ընտրությունը, որը կատարվել է պատահականության սկզբունքով: Այնուհետև կիրառվել է «ձնակույտի» մեթոդը, որի շնորհիվ կոնկրետ հարցման կետերում կազմվել է այն անձանց ցուցակը, որոնք համապատասխանում են ուսումնասիրության համար նշանակալի չափանիշներին (19-30 տարեկան, արական սեռի <<քաղաքացիներ, ովքեր պարտադիր ժամկետային գինվորական ծառայության են անցել <<գինված ուժերում ու զորացրվել են 2012 թ. ընթացքում): Կազմված ցուցակները ծշգրտվել են, համապատասխանության դեպքում իրականացվել են հարցագրույցները:


Գծապատկեր 1




Գծապատկեր 2



Գծապատկեր 3



Գծապատկեր 4



2. << ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԳՈՅՉՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԻՄԱԽԱՆԴԻՐՆԵՐՆ

ՀԱՅ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅԱՆ

Իրավական և սոցիոլոգիական վերլուծություն

<< զինված ուժերի կարգապահական կանոնագրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ զինվորական կարգապահությունը յուրաքանչյուր զինծառայողի կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, այլ օրենքներով ու զինված ուժերում գործող այլ կանոնագրքերով, ինչպես նաև հրամանատարների (պետերի)՝ իրենց լիազորությունների շրջանակներում տված հրամաններով սահմանված պարտականությունների և կարգուկանոնի խստիվ ու ծշգրիտ պահպանումն է:

Զինվորական կարգապահությունը հիմնվում է օրինականության, մարդու իրավունքների և ազատությունների հարգման, հրապարակայնության, խրախուսման ու կարգապահական պատասխանատվության անխուսափելիության և անհատականացման, զինծառայողների զինվորական, իրավական ու բարոյական դաստիարակության սկզբունքների վրա:

Զինվորական կարգապահությունն ապահովվում է յուրաքանչյուր զինծառայողի կողմից Հայաստանի Հանրապետության պաշտպանության, զինվորական պարտքի և իր պարտականությունների կատարման համար անձնական պատասխանատվության գիտակցմանբ, ինչպես նաև հրամանատարների (պետերի) կողմից իրենց լիազորությունների շրջանակներում տրված հրամանների ծշգրիտ ու ժամանակին կատարմամբ:

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ)² մասնակից երկրների կողմից ստորագված անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտների վերաբերյալ վարքագիծ կանոններով նույնպես անդրադարձ է կատարվել զինվորական կարգապահությանը, մասնավորապես, համաձայն այդ կանոնների՝ մասնակից պետություններից յուրաքանչյուրն ապահովում է, որ իր ռազմական, ռազմականացված և անվտանգության ուժերում ծառայող անձնակազմի հավաքագրումն ու զորակոչը համահունչ լինեն մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ոլորտում իր կողմից ստանձնած պարտավորություններին:

Մասնակից պետությունները նաև իրենց օրենքներում և այլ համապատասխան փաստաթյերում ամրագրել են զինված ուժերի անձնակազմի իրավունքներն ու պարտականությունները: Նրանք քննության են առնում բանակում ծառայելուց ազատելու կամ այլընտրանքային տարբերակների հնարավորությունները: Պետություններն ապահովում են, որ զինված ուժերի՝ հրամանատարական լիազորություններով օժտված անձնակազմի յուրաքանչյուր անդամ իրականացնի դրանք ազգային և միջազգային օրենսդրության համաձայն և գիտակցի, որ համաձայն վերոհիշյալ օրենքների՝ անձամբ պատասխանատու է իշխանության անօրինական գործադրման, ինչպես նաև ազգային կամ միջազգային իրավունքով արգելված կարգադրություններ տալու համար:

Հիշատակված դրույթների իրականացումը բավարար կլիներ զինված ուժերում կարգապահությունը եւ մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովելու համար, մինչդեռ սոցիոլոգիական հետազոտությունները բոլորովին այլ պատկեր են բացահայտում:

Այսուակ 1-ում ներկայացված են հարցման մասնակիցների կարծիքները զինված ուժերում չծառայելու պատճառների վերաբերյալ տվյալները:

² <http://www.osce.org/hy/yerevan/84944?download=true>, <http://www.osce.org/hy/yerevan/78303>

Աղյուսակ 1.

	Ինչու չէիք զորակոչվի << Զինված ուժեր		Եթե չէիք ցանկանա, որ Ձեր բարեկամը կամ ընկերը ներկայումս ծառայեր << զինված ուժերում, ապա ինչու	
1.	Ծառայության ժամկետի երկարատևության պատճառով (2 տարին շատ է)	19.9%	<< զինված ուժերում բախումների ընթացքում վիրավորվելու/մահանալու հավանականության պատճառով	28.3%
2.	Զինված ուժերում զինծառայության ժամանակահատվածը անհմաստ ժամանակի վատնում է	19%	Ոչ կանոնադրային հարաբերությունների, զինված ուժերում բռնությունների, բռնարարքների և նման այլ պատճառներով	17.9%
3.	<< զինված ուժերում բախումների ընթացքում վիրավորվելու/մահանալու հավանականության պատճառով	18.2%	Ծառայության ժամկետի երկարատևության պատճառով (2 տարին շատ է)	15.5%
4.	Ոչ կանոնադրային հարաբերությունների, զինված ուժերում բռնությունների, բռնարարքների և նման այլ պատճառներով	13.3%	Զինված ուժերում զինծառայության ժամանակահատվածը անհմաստ ժամանակի վատնում է	13.8%
5.	Անբավարար կենցաղային և սանհիտարահիգիենիկ պայմանների, վատորակ սննդի պատճառներով	11.7%	Անբավարար կենցաղային և սանհիտարահիգիենիկ պայմանների, վատորակ սննդի պատճառներով	10%
6.	Ոչ պատշաճ բժշկական սպասարկման պատճառով	7.2%	Զինված ուժերի հանդեպ իշխանության ոչ պատշաճ, անպատասխանատու և անհեռատես քաղաքականություն վարելու պատճառներով	5.5%
7.	Զինված ուժերի հանդեպ իշխանության ոչ պատշաճ, անպատասխանատու և անհեռատես քաղաքականություն վարելու պատճառներով	5.9%	Ոչ պատշաճ բժշկական սպասարկման պատճառով	5.1%
8.	Ծառայության հանդեպ բացասական վերաբերմունքի պատճառով	1.3%	Զինված ուժերում հանցագործության թվաքանակի ավելացման և հաճախակիացման, զինծառայողներին հանցագործությունների մեջ ներգրավելու պատճառով	1.8%
9.	Միջերնիկ բացասական վերաբերմունքի պատճառով	1%	Զինված ուժերում մարդկային հարաբերություններում բացասական կարծրատիպերի ներդրման պատճառով (օրինակ՝ հարթեցողության և թմրամոլության)	0.7%
10.	Զինված ուժերում հանցագործության թվաքանակի ավելացման և հաճախակիացման, զինծառայողներին հանցագործությունների մեջ ներգրավելու պատճառով	0.9%	Դժվարանում եմ պատասխանել	0.5%
11.	Դժվարանում եմ պատասխանել	0.5%	Ծառայության հանդեպ բացասական վերաբերմունքի պատճառով	0.4%
12.	Զինված ուժերում մարդկային հարաբերություններում բացասական կարծրատիպերի ներդրման պատճառով (օրինակ՝ հարթեցողության և թմրամոլության)	0.4%	Երկիրի հանդեպ բացասական վերաբերմունքի պատճառով	0.2%

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅԵՐԻ ՊԱՇՏՊԱՌՈՂՅԱՆ ՀԻՄԱԿԱԴՐՈՒԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԻՆՎԱԾ

13.	Զորակոչվելու անհավասար պայմանների պատճառով	0.4%	Միջեթևի բացասական վերաբերմունքի պատճառով	0.1%
14.	Սոցիալ-հոգեբանական խնդիրների պատճառով	0.2%	Սոցիալ-հոգեբանական խնդիրների պատճառով	0.1%
15.	Երկիրի հանդեպ բացասական վերաբերմունքի պատճառով	0.1%	Զորակոչվելու անհավասար պայմանների պատճառով	0.1%
	Ընդամենը	100%	Ընդամենը	100%

Նախկին զինծառայողները կրկին ծառայության չգնալու պատճառների թվում կարևորում են ծառայության ժամանակահատվածի երկարատևությունը (19.9 %), ծառայության ժամանակահատվածը որպես ժամանակի անհմաստ վատնում (19 %), բախումների հետևանքով վիրավորվելու, մահանալու հավանականության պատճառով (18.2 %), ոչ կանոնադրային հարաբերությունների, բռնությունների, բռնարքների և նման այլ պատճառների հետևանքով (13.3 %), անբավարար սանհիտարարիկենիկ և կենցաղային պայմանների, վատորակ սննդի պատճառներով (11.7 %), ոչ պատշաճ բժշկական սպասարկման պատճառով (7.2 %), զինված ուժերի հանդեպ իշխանության ոչ պատշաճ, անպատասխանատու և անհեռատես քաղաքականություն վարելու պատճառով (5.9 %):

Նկատենք, որ կրկին զինծառայության չգնալու պատճառների թվում ներքին խնդիրներն առավել մեծ նշանակություն ունեն, քան զինադադարի հնարավոր խախտումները: Զինծառայության պայմանների (ոչ կանոնադրային հարաբերություններ, անբավարար սանհիտարարիկենիկ և կենցաղային պայմաններ, վատորակ սննդ, ոչ պատշաճ բժշկական սպասարկում) հետ կապված խնդիրների պատճառով զորացրվածների մեկ երրորդը չէր գնա ծառայության (32.2 %): Զինծառայության բուն նշանակության և բովանդակության ոչ պատշաճ կազմակերպումը և իրականացումը (ծառայության ժամկետի երկարատևություն, ժամանակի անհմաստ վատնում) հանդիսանում է զորացրվածների մոտ 39 %-ի համար կրկին զինծառայության չգնալու հիմնական պատճառը: Զինված ուժերում իրենց ընկերների և բարեկամների չծառայելու պատճառները ըստ զորացրվածների ունեն նույն հիմնավորումը այլ առաջնահերթությամբ. Ներքին խնդիրների պատճառով՝ 33 %, նշանակության և բովանդակության ոչ պատշաճ կազմակերպումը և իրականացումը՝ 29.3 տոկոս բախումների հետևանքով վիրավորվելու և մահանալու հավանականության պատճառով՝ 28.3 % (տես աղյուսակ 2):

Աղյուսակ 2.

	Ինչու չէիք զորակոչվի		Ինչու Ձեր ընկերը չէր զորակոչվի	
1.	Զինծառայության բուն նշանակության եւ բովանդակության ոչ պատշաճ կազմակերպումը եւ իրականացումը	38.9%	Ներքին խնդիրներ	33%
2.	Ներքին խնդիրներ	32.2%	Զինծառայության բուն նշանակության եւ բովանդակության ոչ պատշաճ կազմակերպումը եւ իրականացումը	29.3%
3.	Բախումների հետեւանքով վիրավորվելու եւ մահանալու հավանակնություն	18.2%	Բախումների հետեւանքով վիրավորվելու եւ մահանալու հավանակնություն	28.3%

Ձեռնպահ մնալով ծառայության ժամկետի երկարատևության վերաբերյալ հետևողին կատարելուց՝ քանի որ այն նշված հետազոտության առարկան չի հանդիսանում, մտահոգիչ է զինվորական ծառայության ժամանակահատվածը անիմաստ ժամանակի վատնում դիտարկելը: Այսինքն՝ զինվորական ծառայությունը զինծառայողների համար համարժեք բովանդակությամբ չի ընկալվում: Մեր խորին համոզմամբ, նման բովանդակության բացակայության համար անմիջական պատասխանատվությունը կրում է << զինված ուժերի գլխավոր շտաբը, մասնավորապես անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով վարչությունը և զորամասերում այդ գծով հրամանատարների տեղակալները:

Դետք է նկատի ունենալ, որ հարցման ենթարկված նախկին զինծառայողների գերակշիռ մասը՝ 93.2%-ը, այն անձինք են, ովքեր << զինված ուժերում ծառայել են 18-24 ամիս ժամկետով /տես աղյուսակ 3/, ինչը հետազոտության համար օբյեկտիվությունն արտացոլելու նախապայման է:

Աղյուսակ 3.

Որքան ժամանակ եք Դուք ծառայել << զինված ուժերում որպես պարտադիր ժամկետային զինծառայող	
18-24 ամիս /2 տարի	93.2%
24 ամսից ավել	4.9%
12-18 ամիս	1.0%
6-12 ամիս	0.6%
1-6 ամիս	0.3%
Ընդամենը	100%

«Զինվորական ծառայության անցնելու մասին» << օրենքով սահմանված 24-ամսյա ծառայություն չանցած նախկին զինծառայողները հարցվողների մեջ կազմում են մոտ երկու տոկոս:

Ժամկետից շուտ զորացրվելու մի քանի պատճառներ են արձանագրվել, որոնցից են մասնավորապես 2-րդ երեսայի ծնունդը, ծառայության ընթացքում հիվանդություն ձեռք բերելու հանգամանքը: Օրինակ, հարցվածների շուրջ 15%-ը հայտնել է, որ ժամկետից շուտ զորացրումն եղել է ծառայության ընթացքում ձեռք բերված հիվանդությունը: Այսուամենայնիվ, պաշտպանական գերատեսչության աշխատանքի մեջ հասարակությանը հայտնի չէ այն արդյունքները, թե արդյոք առաջացած կամ ստացած հիվանդությունների պատճառահետևանքքային կապը որոշելիս << ՊՆ ուղամական ուստիկանությունը, քննչական ծառայությունը և << զինվորական դատախանակությունը ինչպիսի քայլեր է ձեռնարկել, որովհետև, եթե չի ապահովվել համապատասխան պայմաններ զինվորական պատշաճ ծառայությունն իրականացնելու համար, քննականաբար նման հետևանքներն անխուսափելի են, և այստեղից բխող հաջորդ հարցն է առաջ գալիս, եթե նման պայմանները իրավասու պաշտոնատար անձանց կողմից չեն ապահովվում, ապա ինչպիսի պատասխանատվության են նրանք ենթարկվել:

Աղյուսակ 4.

Ինչու եք Դուք այդքան ժամանակ ծառայել << զինված ուժերում	
Դժվարանում եմ պատասխանել	29.2%
Զինծառայության ընթացքում կատարված անօրիանական գործողությունների պատճառով	27.1%
<< զինված ուժերում ծառայության ընթացքում ձեռք եմ բերել հիվանդություն	14.6%
Ծնվել է 2-րդ երեսա	14.6%
Փոխարինող ուշացման պատճառով իմ զինվորական ծառայության ժամկետը հետաձգվել է	14.6%
Ընդամենը	100%

Վերոշարադրյալից զատ, մտահոգիչ է նաև սոցիոլոգիական հարցման այն արդյունքները, ըստ որի, հարցվածների շուրջ 5 %-ը << զինված ուժերում ծառայել է 24 ամսից ավելին /տես այդուսակ 3/: <իմք ընդունելով նշված սոցիոլոգիական հարցման արդյունքները, կարող ենք եզրակացնել, որ նրանց նկատմամբ կատարվել է բացահայտ մարդու իրավունքների խախտում: Մամնավորապես, ինչպես գարնանային, այնպես էլ աշնանային զորակոչերի ընթացքում զորացրված զինծառայողները դժգոհում են, որ զորամասերի հրամանատարների կողմից երկու տարվա զինվորական ծառայություն անցած քաղաքացիներին չեն զորացրում: Ընդ որում, հենց հարցվածների այդ զանգվածի նման փաստարկումներին ավելացվում են կազմակերպություն բանավոր կերպով դժգոհություն ներկայացնող մի շարք զինծառայողների ծնողներ:

Իրավակիրառ փորձը ցոյց է տալիս, որ զորամասերի հրամանատարների մեծ մասը իրենց նման գործելառօք պատճառաբանում են նրանով, որ իրենք դեկավարվում են << պաշտպանության նախարարի հրամանով, զորացրման աշխատանքները անցկացվում են մի քանի փուլերով և ըստ գրաֆիկի: Ու եթե նախորդ զորակոչերին հրամանատարների նման պատճառաբանությունները երբեմն իրավական ամրագրում չեն ստանում, ապա վերջին զորակոչերին դեկավարվել են << պաշտպանության նախարարի մի այնպիսի հրամանով, որը հնարավորություն է տալիս «օրինական կարգով» զինծառայողին զորամասում պահել 24 ամսից ավելին: Նման ոչ իրավաչափ գործողության հետևանք է հենց կարգապահության բացակայությանը, որն ունի հետևյալ իրավական հիմնավորվածությունը: Մասնավորապես ակնհայտ է, որ զորացրման այդ ընթացակարգը նախ հակասում է << Սահմանադրության, իսկ այնուհետև գործող օրենսդրության պահանջներին, իսկ զորամասերի նման հրամանատարների կամ բարձրաստիճան սպաների մեկնաբանությունները օրենքից չբխող են և անհիմն: Այսպես, համաձայն «Զինվորական ծառայության անցնելու մասին» << օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասին 1-ին կետի՝ պարտադիր զինվորական ծառայության ժամկետը սահմանվում է շարքային կազմի համար՝ 24 ամիս: Նշված նորմի բովանդակությունից հետևում է, որ օրենսդրությունը դա ֆիքսել է շատ հստակ, սակայն, օրենքը նախատեսում է նաև բացառություններ՝ ամրագրելով անհրաժեշտության դեպքում ծառայության ժամկետի երկարացման կարգը, ըստ որի՝ անհրաժեշտության դեպքով կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունը կարող է երկարաձգվել մինչև երկու ամիս ժամկետով: Եվ անգամ նման որոշման բացակայության դեպքում հրամանատարությունը իր նախաձեռնությամբ զինծառայողի ծառայության ժամկետը մինչև ամսով երկարաձգում է: Սա նշանակում է, որ զինված ուժերի գերատեսչության կողմից անտեսվում է << Սահմանադրության 14.1 հոդվածի պահանջը, ըստ որի: «Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խորականությունը, կախված սեղից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնության պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

Այդ հարցի վերաբերյալ << մարդու իրավունքների նախկին Պաշտպանն իր տարեկան գեկույցներում նույնպես անդրադառնալով այս խնդրին, պաշտոնական գրություններով առաջարկել էր << պաշտպանության նախարարին՝ վերանայելու վերջինիս կողմից ընդունված 14.10.2009 թ. թիվ 2044 հրամանը՝ այն << Սահմանադրությանն ու «Զինվորական ծառայության անցնելու մասին» << օրենքի 4-րդ հոդվածին համապատասխանեցնելու նպատակով: Այստեղ, իհարկե, մեծ անելիք ունի << ԶՈՒ գլխավոր շտաբի համապատասխան վարչությունը, որը պետք է կարողանա ձիւտ մոտեցում դրսնորել զորակոչիկների բաշխման գործընթացի նկատմամբ՝ ապահովելով նաև կազմված բաշխման պլանի համաշափությունը:

Իհարկե, վերջին խնդրի վերլուծությունը կարգապահության համատեքստում քննարկելը կարող

Է հարց առաջացնել,թե ինչ կապ ունի ծառայության օրենքով նախատեսված ժամկետից երկար ժամկետով ծառայելը կարգապահության ապահովման հետ: Միանգամայն իիմնավորումն հետևյալն է՝ զինծառայողը, քաջ գիտակցելով, որ իր պարտադիր զինվորական ծառայության ժամկետը երկու տարի է, փորձում է իրեն դրսնորել դրականորեն, որպեսզի ժամանակին կարողանա զորացրվել, բայց երբ որևէ տույժ չունեցող, իսկ երբեմն նաև խրախուսանքի արժանացած զինծառայողը զորամասում պահվում է ավելի երկար ժամանակ, բնականաբար, սկսում է նաև ընդվզել, կասկածի տակ է դնում բանակում մարդու իրավունքների հարգման սկզբունքի պահպանումը, իսկ այդ բոլորի համար իրավական հիմք է հանդիսանում բարձրագույն հրամանատարական կազմի համապատասխան հրամանը: Այս խնդիրը վիճարկելի է նաև քրեական իրավունքի տեսանկյունից, քանի որ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ սուբյեկտը հասուկ է, հանցանք կատարած անձը պետք է լինի զինծառայող:

Մեր բնորոշմամբ՝ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունները զինված ուժերի բնագավառում կատարված հանրութեն վտանգավոր այն արարքներն են, որոնք սահմանված են քրեական օրենսդրությամբ: Իսկ ահա իրավաբանական գրականության մեջ տեղ գտած բնորոշման համաձայն՝ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններ են համարվում քրեական օրենքով նախատեսված այն հանցագործությունները, որոնք ուղղված են զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ և կատարվում են զինծառայողների, ինչպես նաև պահեստագորում ընդգրկված այն քաղաքացիների կողմից, ովքեր անցնում են վարժական հավաքներ:

Իհակե, թե որն է վարժական հավաքը, ովքեր են զինծառայողները ու նման այլ հարցերի պատասխանները տրվում են ոչ թե քրեական օրենսգրքի, այլ հարակից համապատասխան օրենսդրական ակտերի ուժով: Նշվածը վերաբերում է մասնավորապես «զինծառայող» եզրույթի բացահայտմանը: Համաձայն «Զինվորական ծառայության անցնելու մասին» << օրենքի՝ զինծառայող են համարվում զինված ուժերում և այլ զորքերում պետական ծառայություն անցնող քաղաքացիներն ու ռազմառուտմանական հաստատությունների կուրսանտները:

Մեր իրականության մեջ եղել են դեպքեր, երբ զորացրման ժամկետը լրացած զինծառայողը զորամասում հանցանք է կատարում այն ժամանակ, երբ ինքն ըստ էության դադարել է զինծառայող լինելու հանգամանքից: Մինչդեռ իրավապահ մարմինները, ի դեմս << զինվորական դատախազության, շատ հաճախ են անտեսում նման հանգամանքերը և անձին ենթարկում պատասխանատվության: Իհարկե այստեղ մեծ անելիք ունի դատարանը, սակայն հաշվի առնելով դատարանների ու դատախազության երկիրկվածությունը՝ կայացվում են նման դատական ակտեր: Իսկ քննարկվող խնդիր ամենավառ ու ցավալի օրինակը 2012 թ. Հայկ Մովսիսյանի վերաբերյալ քրեական գործն է³, որը վերցերս հասարակության մեջ հնչեղություն էր ստացել: Խնդիրը վերաբերում է նրան, որ զինծառայող Հայկ Մովսիսյանը << ՊՆ Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի որոշմամբ ձանաչվել է ոչ

³ <http://hcav.am/events/անդրամիկ-միրզոյանի-պաշտոնից-ազատման/>, <http://hcav.am/events/հքա-վանաձորի-գրասենյակի-հայտարարութ-12/>, <http://hcav.am/events/հքա-վանաձորի-գրասենյակի-հայտարարութ-13/>, <http://hcav.am/events/ա-սաքունց-հքծ-պետի-պաշտոնանկությունը/>, <http://hcav.am/events/դրոշեցին-կծիկը-չքանից/>, <http://hcav.am/events/ինքնասպանություն-առանց-հետքերի-շուշ/>, <http://hcav.am/events/քննիչը-հակասել-է-հնքն-իրեն-բանտում-մահ/>, <http://hcav.am/events/ինքնասպան-եղած-զինվորի-մորը-հրավահաջ/>, <http://hcav.am/events/մինչ-մահանալը-զինծառայողը-ենթարկվել/>, <http://hcav.am/events/դատարան-մերժել-է-մահացած-զինվորի-մոր/>, <http://hcav.am/events/մամուլի-ասուլիս-լղի-շուշի-քկի-ում-մահա/>, <http://hcav.am/events/արթուր-սաքունց-«հայկ-մովսիսյանի-դեպ/>, <http://hcav.am/events/լղի-շուշի-քկի-ում-մահացած-հայկ-մովսիսյանի-մ/>, <http://hcav.am/events/մահացած-զինծառայող-հայկ-մովսիսյանի-մ/>, <http://hcav.am/events/հքծ-ն-կարծել-է-լղի-քննչական-մեկուսարան/>, <http://hcav.am/events/հայաստանի-համրապետությունը-սպանեց-h/>, <http://hcav.am/events/hh-հքծ-է-ուղարկվել-դիմում-հայկ-մովսիսյանի-մ/>

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅԵՐԻ ՊԱՇՏՊԱՍՈՒԹՅԱՆ ՀԻՄԱԿՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

պիտանի զինվորական ծառայության համար, սակայն շարունակել է ծառայել, իսկ հետագայում զինվորական դատախազության ակտիվ ջանքերի շնորհիվ <. Մովսիսյանին մեղադրանք է առաջադրվել ինքնախեղման նպատակով զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու փաստով և Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից դատապարտվել է երեք տարվա ազատազրկման: Դժբախտաբար, ընդամենը երեք օր անց, Հայկ Մովսիսյանը կախվելու միջոցով քրեակատարողական հիմնարկում ինքնասպան է լինում: Միայն այդ դեպքից հետո գլխավոր դատախազությունը ձեռնամուխ է եղել դիմել վերաբննիչ դատարան և << քրեական վերաբննիշ դատարանի 2013 թ. ապրիլի 16-ի որոշմամբ բեկանվել է առաջին ատյանի դատարանի դատավճոր և կայացվել արդարացման դատավճոր՝ իմբքում մասնավորապես դնելով այն հանգամանքը, որ Զինծառայողին պատշաճ սուբյեկտ ծանաչելու և նրան քրեական պատասխանատվության ենթարկելու համար, բացի << քրեական օրենսգրքի 23-րդ հոդվածում մատնանշված պայմաններից (ֆիզիկական անձի, օրենքով նախատեսված տարիքի հասնելու և մեղսունակության առկայությունը), յուրաքանչյուր գործով անհրաժեշտ է պարզել և հաստատել, որ նա զինվորական ծառայության պիտանի սուբյեկտ է, և վերագրվող արարքը կատարելու պահին առկա չեն եղել ծառայության համար ոչ պիտանի լինելու մասին վկայող իմբքերը:

Միևնույն ժամանակ, Վերաբննիշ դատարանը փաստում է, որ ոչ բոլոր դեպքերում է, որ զինվորական ծառայությանը ոչ պիտանի դարձած և պահեստազոր զորացրված զինծառայողը, զինվորական ծառայության դեմ ուղղված արարք կատարած լինելու դեպքում, քրեական պատասխանատվության պատշաճ սուբյեկտ չէ:

Եթե կատարված զինվորական հանցագործության բնույթը և գործի կոնկրետ հանգամանքներն այնպիսին են, որ արարքի կատարումը պայմանավորված չի եղել ծառայությանը ոչ պիտանի լինելու հանգամանքով, ապա անձը ենթակա է քրեական պատասխանատվության ընդհանուր իմբքերով, բանի որ վերագրվող արարքը կատարելու պահին պիտանի է եղել զինվորական ծառայությանը: Օրինակ, եթե զինծառայողը զինվորական ծառայությունից խուսափելու նպատակով իրեն վնաս է հասցնում /անդամախեղում/ և դրա հետևանքով դառնում է ոչ պիտանի ծառայության համար և զորացրվում պահեստազոր, նրա արարքում առկա են << քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշները:

Նման դեպքերում արարքը կատարելու պահին առկա չէ այնպիսի հանգամանք, որը հիմք չէ զինծառայողին ծառայությանը ոչ պիտանի ձանաչելու համար: Նման դեպքերում անձի մեղսունակության վերաբերյալ դատահոգերութական փորձաքննությունն ունի առաջնային նշանակություն, բանի որ չի հակասում ծառայության համար ոչ պիտանի ձանաչելու եզրակացությանը: Մինչդեռ, սույն քրեական գործի շրջանակներում հաստատվել է, որ << Հայկ Մովսիսյանը վերագրվող արարքը կատարելու պահին ակնհայտորեն գտնվել է այնպիսի հոգեկան վիճակում, որը հիմք է հանդիսացել նրան ծառայությանը ոչ պիտանի ձանաչելու համար: Ուստի, նա քրեական պատասխանատվության պատշաճ սուբյեկտ չէր կարող լինել:

Բացի այդ, Վերաբննիշ դատարանը փաստում է, որ << Հայկ Մովսիսյանի արարքում բացակայում է նաև << քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածում նախատեսված հանցակազմի այլ տարրերը (Այդ մասին մանրամասն տե՛ս թիվ ՍԴ/0389/01/11 դատական գործը):

Զինվորական ծառայության ընթացքում առաջացած խնդիրները ըստ առաջնահերթության ներկայացված է աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5.

	Առաջնային խնդիրներ		Երկրորդական խնդիրներ		Երրորդական խնդիրներ	
1.	Զինված ուժերում ծառայության ժամկետը	14.9%	Զինված ուժերում ծառայության ժամկետը	11.9%	Սպայակազմի կողմից անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը	12.9%
2.	Սպայակազմի մասնագիտական որակի և պրոֆեսիոնալիզմի բացակայությունը	13.6%	Սպայակազմի մասնագիտական որակի և պրոֆեսիոնալիզմի բացակայությունը	10.7%	Զինված ուժերի ոչ բավարար կենցաղային պայմանները, վատ սնունդը	11.3%
3.	Մահվան դեպքերը / սպանություններ, ինքնասպանություններ//	13.6%	Սպայակազմի կողմից անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը	9.7%	Մահվան դեպքերը / սպանություններ, ինքնասպանություններ/	10.8%
4.	Զինված ուժերում ոչ կանոնադրային հարաբերությունների առկայությունը	11.6%	Զինված ուժերի ոչ բավարար կենցաղային պայմանները, վատ սնունդը		Սպայակազմի մասնագիտական որակի և պրոֆեսիոնալիզմի բացակայությունը	9.5%
5.	Զինված ուժերում ծառայության պարտադիր լինելը	7.8%	Զինված ուժերում ծառայության պարտադիր լինելը	8.8%	Խախտումներով զուգորդված զորակոչը	7.3%
6.	Խախտումներով զուգորդված զորակոչը	5.8%	Խախտումներով զուգորդված զորակոչը	8.4%	Զինված ուժերում ոչ կանոնադրային հարաբերությունների առկայությունը	7.1%
7.	Բննությունների կամ բոնարարքների առկայությունը, պատշաճ կարգապահության բացակայությունը	5.4%	Զինված ուժերում ոչ կանոնադրային հարաբերությունների առկայությունը	7%	Զինված ուժերում ծառայության ժամկետը	6.9%
8.	Զինված ուժերի ոչ բավարար կենցաղային պայմանները, վատ սնունդը		Զինծառայողների նկատմամբ խիստ/բիրտ վերահսկողությունը	6.2%	Զինծառայողների նկատմամբ խիստ/բիրտ վերահսկողությունը	5.8%
9.	Սպայակազմի կողմից անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը	4.8%	Բննությունների կամ բոնարարքների առկայությունը, պատշաճ կարգապահության բացակայությունը	5.9%	Բննությունների կամ բոնարարքների առկայությունը, պատշաճ կարգապահության բացակայությունը	5.6%
10.	Զինված ուժերի խնդիրները ինձ չեն անհանգստացնում	3.5%	<< զինված ուժերում կաշառակերությունը, կոռուպցիան, գողությունը	5.9%	Զինծառայողներին հասանելի գումարներ չտրամադրելը	5.6%

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅՈՒՆԻ ՊԱՇՏՊԱՍՈՂԻ ՀԻՄԱՆԴՐԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

11.	ՀՀ գինված ուժերում կաշառակերությունը, կոռուպցիան, գողությունը	2.7%	Մահվան դեպքերը / սպանություններ, ինքնասպանություններ/	5.6%	ՀՀ գինված ուժերում կաշառակերությունը, կոռուպցիան, գողությունը	5.2%
12.	Հասարակության շրջանում ՀՀ գինված ուժերի նկատմամբ անվստահությունը/ցածր հեղինակությունը	2.4%	Հասարակության շրջանում ՀՀ գինված ուժերի նկատմամբ անվստահությունը/ցածր հեղինակությունը	5.3%	Հասարակության շրջանում ՀՀ գինված ուժերի նկատմամբ անվստահությունը/ցածր հեղինակությունը	5.1%
13.	Զինծառայողների նկատմամբ խիստ/բիրս վերահսկողությունը	1.9%	Զինծառայողներին հասանելի գումարներ չտրամադրելը	2%	Զինված ուժերում ծառայության պարտադիր լինելը	4.7%
14.	Վերոնշյալ բոլոր խնդիրները	1.7%	Զինված ուժերում պատշաճ բժշկական սպասարկման որակի բացակայությունը	1.4%	Զինված ուժերի խնդիրները ինձ չեն անհանգստացնում	0.7%
15.	Զինծառայողներին հասանելի գումարներ չտրամադրելը	1.4%	Զինված ուժերի խնդիրները ինձ չեն անհանգստացնում	0.6%	Զինված ուժերում պատշաճ բժշկական սպասարկման որակի բացակայությունը	0.7%
16.	Դժվարանում եմ պատասխանել	1.3%	Զորակոչիկների զինծառայությանը անպատրաստ լինելը	0.6%	Զինծառայության ընթացքում զինծառայողների մտավոր կարողությունների զարգացնելու հնարավորության բացակայությունը	0.5%
17.	Զորակոչիկների զինծառայությանը անպատրաստ լինելը	1.2%	Զինծառայության ընթացքում զինծառայողների մտավոր կարողությունների զարգացնելու հնարավորության բացակայությունը	0.5%	Զորակոչիկների զինծառայությանը անպատրաստ լինելը	0.2%
18.	Զինված ուժերում պատշաճ բժշկական սպասարկման որակի բացակայությունը	0.6%	Վերոնշյալ բոլոր խնդիրները	0.2%	Վերոնշյալ բոլոր խնդիրները	0.2%
19.	ՀՀ Զինված ուժերում զինծառայողները խնդիր չունեն	0.5%	ՀՀ ԶՈՒ լավ տեխնիկական միջոցներով հագեցվածության բացակայությունը	0.2%	Ընդամենը	100%
20.	Զինծառայության ընթացքում զինծառայողների մտավոր կարողությունների զարգացնելու հնարավորության բացակայությունը	0.1%	Ընդամենը	100%		
	Ընդամենը	100%				

Զորացրվածներին առաջարկվել է ընտրել 14 առաջադրված և իրենց կողմից լրացուցիչ տարբերակներից 3 առաջնայինը: Ինչպես տեսնում ենք այդուակ 5-ից, հարցման մասնակիցները որպես առաջնային խնդիր նշել են 20 տարբերակ, որոնցից իրավական բնույթի խնդիրները՝ կազմում են խնդիրների 47.2 %-ը, գինված ուժերում ծառայության ժամկետը 14.9%, գինծառայողների պատրաստվածության հետ կապված խնդիրները (սպաների մասնագիտական որակ և պրոֆեսիոնալիզմ) զորակոչվելու անպատրաստվածությունը կազմում է 14.8 %, ծառայության կենցաղային և բժշկական սպասարկման պայմանները՝ 5.7 %:

Երկրորդական խնդիրների շարքում իրավական բնույթի խնդիրները նույնպես կազմում են ամենամեծ տոկոսը՝ 50.7 %, գինված ուժերում ծառայության ժամկետը 11.9 %, գինծառայողների պատրաստվածության հետ կապված խնդիրները կազմում են 11.3 %, ծառայության կենցաղային և բժշկական սպասարկման պայմանները՝ 10.5 %:

Երրորդական խնդիրների շարքում իրավական բնույթի խնդիրները կազմում են 60.3 %, գինված ուժերում ծառայության ժամկետը 6.9 %, գինծառայողների պատրաստվածության հետ կապված խնդիրները կազմում է 9.7 %, ծառայության կենցաղային և բժշկական սպասարկման պայմանները՝ 12 %:

Անկախ առաջնահերթությունից՝ իրավական բնույթի խնդիրները հանդիսանում են գինված ուժերում որպես հիմնական չլուծված խնդիր:

Նմանապես ըստ տարածվածության (տես այդուակ 6) առաջնային առավել տարածված խնդիրների թվում իրավական բնույթի խնդիրները կազմում են 55.9 %, գինծառայողների պատրաստվածության հետ կապված խնդիրները կազմում է 11 %, գինված ուժերում ծառայության ժամկետը 9.5 %, ծառայության կենցաղային և բժշկական սպասարկման պայմանները՝ 8.3 %:

Երկրորդական խնդիրների շարքում իրավական բնույթի խնդիրները կազմում են 61.4 %, գինված ուժերում ծառայության ժամկետը 6.7 %, գինծառայողների պատրաստվածության հետ կապված խնդիրները կազմում է 9.5 %, ծառայության կենցաղային և բժշկական սպասարկման պայմանները՝ 12.5 %:

Երրորդական խնդիրների շարքում իրավական բնույթի խնդիրները կազմում են 58.9 %, գինված ուժերում ծառայության ժամկետը 7.2 %, գինծառայողների պատրաստվածության հետ կապված խնդիրները կազմում են 12.2 %, ծառայության կենցաղային և բժշկական սպասարկման պայմանները՝ 11.5 %:

Այդուակ 6.

	Առաջնային առավել տարածված խնդիրներ		Երկրորդական առավել տարածված խնդիրներ		Երրորդական առավել տարածված խնդիրներ	
1.	Մահվան դեպքերը / սպանություններ, ինքնասպանություններ/	12.5%	Սպայակազմի կողմից անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը	12.2%	Մահվան դեպքերը / սպանություններ, ինքնասպանություններ/	16%
2.	Զինված ուժերում ոչ կանոնադրային հարաբերությունների առկայությունը	11.6%	Զինված ուժերի ոչ բավարար կենցաղային պայմանները, վատ սնունդը	10.9%	Սպայակազմի մասնագիտական որակի և պրոֆեսիոնալիզմի բացակայությունը	12.2%

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅԵՐԻ ՊԱՇՏՊԱՌՈՂԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՂԱՅԱ ՁԻՆՎԱԾ ՈՒԺՐՈՒՄ

3.	Սպայակազմի մասնագիտական որակի և արոֆեսիոնալիզմի բացակայությունը	9.8%	Զինված ուժերում ոչ կանոնադրային հարաբերությունների առկայությունը	9.8%	Զինված ուժերի ոչ բավարար կենցաղային պայմանները, վատ սնունդը	10.5%
4.	Սպայակազմի կողմից անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը	9.8%	Սպայակազմի մասնագիտական որակի և պրոֆեսիոնալիզմի բացակայությունը	8.9%	Սպայակազմի կողմից անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը	10.3%
5.	Զինված ուժերում ծառայության ժամկետը	9.5%	Խախտումներով զուգորդված զորակոչը	8.8%	Զինված ուժերում ծառայության ժամկետը	7.2%
6.	Զինված ուժերի ոչ բավարար կենցաղային պայմանները, վատ սնունդը	7.5%	Զինծառայողների նկատմամբ խիստ/բիրտ վերահսկողությունը	7.8%	Խախտումներով զուգորդված զորակոչը	7.2%
7.	Բննությունների կամ բռնարարքների առկայությունը, պատշաճ կարգապահության բացակայությունը	6.6%	<< զինված ուժերում կաշառակերությունը, կոռուպցիան, գողությունը	7.7%	Զինված ուժերում ոչ կանոնադրային հարաբերությունների առկայությունը	6.2%
8.	<< զինված ուժերում կաշառակերությունը, կոռուպցիան, գողությունը	6.3%	Մահվան դեպքերը / սպանություններ, ինքնասպանություններ/	7.2%	Զինծառայողների նկատմամբ խիստ/բիրտ վերահսկողությունը	5.9%
9.	Զինված ուժերի խնդիրները ինձ չեն անհանգստացնում	6.3%	Զինված ուժերում ծառայության ժամկետը	6.7%	Բննությունների կամ բռնարարքների առկայությունը, պատշաճ կարգապահության բացակայությունը	5.7%
10.	Խախտումներով զուգորդված զորակոչը	4.4%	Բննությունների կամ բռնարարքների առկայությունը, պատշաճ կարգապահության բացակայությունը	5.9%	Զինված ուժերում ծառայության պարտադիր լինելը	4.6%
11.	Զինծառայողների նկատմամբ խիստ/բիրտ վերահսկողությունը	3.7%	Զինված ուժերում ծառայության պարտադիր լինելը	4.7%	<ասարակության շրջանում << զինված ուժերի նկատմամբ անվստահությունը/ցածր հեղինակությունը	4.6%
12.	<ասարակության շրջանում << զինված ուժերի նկատմամբ անվստահությունը/ ցածր հեղինակությունը	3.2%	<ասարակության շրջանում << զինված ուժերի նկատմամբ անվստահությունը/ցածր հեղինակությունը	3.9%	<< զինված ուժերում կաշառակերությունը, կոռուպցիան, գողությունը	4.5%

13.	Դժվարանում եմ պատասխանել	2.8%	Զինծառայողներին հասանելի գումարներ չտրամադրելը	2%	Զինծառայողներին հասանելի գումարներ չտրամադրելը	3.1%
14.	Զինված ուժերում ծառայության պարտադիր լինելը	2.6%	Զինված ուժերում պատշաճ բժշկական սպասարկման որակի բացակայությունը	1.6%	Զինված ուժերում պատշաճ բժշկական սպասարկման որակի բացակայությունը	1%
15.	Զորակոչիկների զինծառայության անպատրաստ լինելը	1.2%	Զինված ուժերի խնդիրները ինձ չեն անհանգստացնում	0.8%	Զինված ուժերի խնդիրները ինձ չեն անհանգստացնում	0.3%
16.	Զինծառայողներին հասանելի գումարներ չտրամադրելը	1%	Զորակոչիկների զինծառայության անպատրաստ լինելը	0.6%	<< Զինված ուժերում զինծառայողները խնդիր չունեն	0.3%
17.	Զինված ուժերում պատշաճ բժշկական սպասարկման որակի բացակայությունը	0.8%	<< Զինված ուժերում զինծառայողները խնդիր չունեն	0.3%	Վերոնշյալ բոլոր խնդիրները	0.2%
18.	Վերոնշյալ բոլոր խնդիրները	0.4%	Վերոնշյալ բոլոր խնդիրները	0.2%	Ընդամենը	100%
19.	<< Զինված ուժերում զինծառայողները խնդիր չունեն	0.3%	Ընդամենը	100%		
	Ընդամենը	100%				

Համադրելով զինված ուժերում խնդիրների ցանկը ըստ առաջնայնության և տարածվածության՝ (տես աղյուսակ 7) նկատում ենք, որ առաջին 3 խնդիրների թվում, զորացրվածների կարծիքով, հանդիսանում են զինված ուժերում մահացության դեպքերը /սպանություններ, ինքնասպանություններ/ և սպայական կազմի մասնագիտական որակի և պրոֆեսիոնալիզմի բացակայության խնդիրը:

Աղյուսակ 7.

	Ըստ Ձեզ՝ որոնք են << զինված ուժերում, զինծառայողի համար երեք առաջնային խնդիրներն այսօր		Ըստ Ձեզ՝ որոնք են << զինված ուժերում, զինծառայողի համար երեք առավել տարածված խնդիրներն այսօր	
1.	Զինված ուժերում ծառայության ժամկետը	11.6%	Մահվան դեպքերը /սպանություններ, ինքնասպանություններ/	11.7%
2.	Սպայակազմի մասնագիտական որակի և պրոֆեսիոնալիզմի բացակայությունը	11.5%	Սպայակազմի կողմից անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը	10.7%
3.	Մահվան դեպքերը /սպանություններ, ինքնասպանություններ/	10.2%	Սպայակազմի մասնագիտական որակի և պրոֆեսիոնալիզմի բացակայությունը	10.1%

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅԵՐԻ ՊԱՇՏՊԱՌՈՂՅԱՅ ՀԻՄԱՆԴՐԻՐԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՂՅԱՅ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

4.	Զինված ուժերում ոչ կանոնադրային հարաբերությունների առկայությունը	8.8%	Զինված ուժերում ոչ կանոնադրային հարաբերությունների առկայությունը	9.5%
5.	Սպայակազմի կողմից անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը	8.7%	Զինված ուժերի ոչ բավարար կենցաղային պայմանները, վատ սնունդը	9.5%
6.	Զինված ուժերի ոչ բավարար կենցաղային պայմանները, վատ սնունդը	8.2%	Զինված ուժերում ծառայության ժամկետը	8.0%
7.	Զինված ուժերում ծառայության պարտադիր լինելը	7.3%	Խախտումներով գուգորդված զորակոչը	6.6%
8.	Խախտումներով գուգորդված զորակոչը	7.1%	<< զինված ուժերում կաշառակերությունը, կոռուպցիան, գողությունը	6.2%
9.	Բնոնությունների կամ բռնարարքների առկայությունը, պատշաճ կարգապահության բացակայությունը	5.6%	Բնոնությունների կամ բռնարարքների առկայությունը, պատշաճ կարգապահության բացակայությունը	6.1%
10.	<< զինված ուժերում կաշառակերությունը, կոռուպցիան, գողությունը	4.5%	Զինծառայողների նկատմամբ խիստ/բիրտ վերահսկողությունը	5.7%
11.	Զինծառայողների նկատմամբ խիստ/բիրտ վերահսկողությունը	4.4%	Զինված ուժերում ծառայության պարտադիր լինելը	3.9%
12.	Հասարակության շրջանում << զինված ուժերի նկատմամբ անվստահությունը/ցածր հեղինակությունը	4.1%	Հասարակության շրջանում << զինված ուժերի նկատմամբ անվստահությունը/ցածր հեղինակությունը	3.8%
13.	Զինծառայողներին հասանելի գումարներ չտրամադրելը	2.8%	Զինված ուժերի խնդիրները ինձ չեն անհանգստացնում	2.8%
14.	Զինված ուժերի խնդիրները ինձ չեն անհանգստացնում	1.7%	Զինծառայողներին հասանելի գումարներ չտրամադրելը	2.0%
15.	Զինված ուժերում պատշաճ բժշկական սպասարկման որակի բացակայությունը	0.9%	Զինված ուժերում պատշաճ բժշկական սպասարկման որակի բացակայությունը	1.1%
16.	Զորակաչիկների զինծառայության անպատճաստ լինելը	0.7%	Դժվարանում եմ պատասխանել	1.1%
17.	Վերոնշյալ բոլոր խնդիրները	0.7%	Զորակաչիկների զինծառայության անպատճաստ լինելը	0.7%
18.	Դժվարանում եմ պատասխանել	0.6%	<< Զինված ուժերում զինծառայողները խնդիր չունեն	0.3%
19.	Զինծառայության ընթացքում զինծառայողների մտավոր զարգանալու հնարավորության բացակայությունը	0.3%	Վերոնշյալ բոլոր խնդիրները	0.2%
20.	<< Զինված ուժերում զինծառայողները խնդիր չունեն	0.2%	Ընդամենը	100.0%
21.	<< զինված ուժերի լավ տեխնիկայով հագեցվածութան պակաս	0.1%		
	Ընդամենը	100.0%		

Նկատենք, որ ըստ տարածվածության խնդիրների շարքում, անկախ առաջնայնության, ծառայության ժամկետը զինծառայողների համար չի հանդիսանում որպես գլխավոր մտահոգող հարցը: Զորացրվածների համոզմամբ՝ թե՛ ըստ առաջնայնության, թե՛ ըստ տարածվածության, զինված ուժերում հիմնական խնդիրները ուղղակիորեն պայմանավորված են զինծառայությունը կարգավորող իրավական նորմերի խախտումներով: Այս համատեքստում ուշագրավ է, որ զորացրվածները կարևորում են մի կողմից սպաների մասնագիտական պատրաստվածությունը, մյուս կողմից զորակոչիկների՝ զինծառայությանը նախապատրաստելու հարցերը (տես աղյուսակ ամփոփում 8):

Աղյուսակ 8.

	Խնդիրներ	Առաջնային առավել տարածված խնդիրներ	Երկրորդական առավել տարածված խնդիրներ	Երրորդական առավել տարածված խնդիրներ
1.	Զինծառայությունը կարգավորող իրավական նորմեր	55.9%	61.4%	58.9%
2.	Սպաների մասնագիտական պատրաստվածությունը	11%	9.5%	12.2%
3.	Ծառայության ժամկետը	9.5%	6.7%	7.2%
4.	Ծառայության կենցաղային եւ բժշկական սպասարկման պայմանները	8.3%	12.5%	11.5%

Բնականաբար, զինված ուժերում փոփոխություններին ուղղված գործողությունների ցանկում ԶՈՒ իրավիճակի փոփոխությանն ուղղված հարցերում զորացրվածները մեծ տեղ են հատկացնում իրավական բնույթի խնդիրների լուծմանը:

Առաջին հերթին փոփոխվելիք խնդիրների շարքում զորացրվածների կողմից ներկայացված առաջարկությունների 27.5 %-ը ուղղված են իրավական բնույթի խնդիրներին: Իրավական բնույթի խնդիրների լուծմանն ուղղված առաջարկությունները կազմում են երկրորդ և երրորդ հերթին փոփոխվելիք խնդիրների շարքում համապատասխանաբար 36.3 % և 43.4 % (տես աղյուսակ 9):

Աղյուսակ 9.

	Խնդիրներ	Առաջնային առավել տարածված խնդիրներ	Երկրորդական առավել տարածված խնդիրներ	Երրորդական առավել տարածված խնդիրներ
1.	Զինծառայությունը կարգավորող իրավական նորմեր	27.5 %	36.3 %	43.4 %
2.	Սպաների մասնագիտական պատրաստվածությունը	11.1%	9.5%	10.2%
3.	Ծառայության ժամկետը	15.3%	9%	4.1%
4.	Ծառայության կենցաղային եւ բժշկական սպասարկման պայմանները	9%	11.9%	11.9%

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅՈՒՆ ՊԱՇՏՊԱՍՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆԴՐԻՐԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

Հետաքրքիր է, որ սպայակազմի մասնագիտական կարողությունների բարձրացման խնդրի (11.1%) լուծման հետ միասին, զորացրվածները համարժեք չեն կարևորում զորակոչիկների՝ զինծառայությանը պատրաստելու հարցի նշանակությունը (տես աղյուսակ 10):

Աղյուսակ 10.

	առաջին հերթին կփոխեին	երկրորդ հերթին կփոխեին	երրորդ հերթին կփոխեին	
1.	Արձակուրդների քանակի շատացում	16.2% Զինված ուժերի ոչ բավարար կենցաղային պայմանները, վատ սնունդը	11.4% Զինված ուժերի ոչ բավարար կենցաղային պայմանները, վատ սնունդը	11.5%
2.	Զինված ուժերում ծառայության ժամկետը	15.3% Սպայակազմի մասնագիտական որակի և պրոֆեսիոնալիզմի բացակայությունը	9.5% Սպայակազմի կողմից անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը	11.2%
3.	Սպայակազմի մասնագիտական որակի և պրոֆեսիոնալիզմի բացակայությունը	11.1% Զինված ուժերում ծառայության ժամկետը	9% Զինված ուժերում ծառայության ժամկետը	10.2%
4.	Զինված ուժերի ոչ բավարար կենցաղային պայմանները, վատ սնունդը	7.1% Բանակը դարձնել պրոֆեսիոնալ	8.6% Բանակը դարձնել պրոֆեսիոնալ	8.6%
5.	Զինված ուժերում ծառայության պարտադիր լինելը	6.6% Զինված ուժերում ծառայության պարտադիր լինելը	7.9% Մահվան դեպքերը / սպանություններ, ինքնասպանություններ/	8%
6.	Զինված ուժերում ոչ կանոնադրային հարաբերությունների առկայությունը	5.4% Սպայակազմի կողմից անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը	6.8% Արձակուրդների քանակի շատացում	5.8%
7.	Սպայակազմի կողմից անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը	4.6% Խախտումներով զուգորդված զորակոչը	6.5% Խախտումներով զուգորդված զորակոչը	5.4%
8.	Զինծառայողների նկատմամբ խիստ/բիրտ վերահսկողությունը	4.5% Զինծառայողների նկատմամբ խիստ/բիրտ վերահսկողությունը	6.5% Զինված ուժերում ծառայության պարտադիր լինելը	5%
9.	Մահվան դեպքերը / սպանություններ, ինքնասպանություններ/	4.4% Արձակուրդների քանակի շատացում	5.2% Զինված ուժերում ոչ կանոնադրային հարաբերությունների առկայությունը	4.8%
10.	ՀՀ զինված ուժերում կաշառակերությունը, կոռուպցիան, գողությունը	3.9% ՀՀ զինված ուժերում կաշառակերությունը, կոռուպցիան, գողությունը	4.3% Զինծառայողների նկատմամբ խիստ/բիրտ վերահսկողությունը	4.3%

11.	ՀՀ գինված ուժերի լավ տեխնիկայով հագեցվածութան պակաս	3.9%	Բոնությունների կամ բռնարարքների առկայությունը, պատշաճ կարգապահության բացակայությունը	4%	Զինված ուժերում ծառայության ժամկետը	4.1%
12.	Բանակը դարձնել պրոֆեսիոնալ	3.5%	ՀՀ գինված ուժերի լավ տեխնիկայով հագեցվածութան պակաս	3.6%	ՀՀ գինված ուժերում կաշառակերությունը, կոռուպցիան, գողությունը	3.5%
13.	Զինված ուժերի խնդիրները ինձ չեն անհանգստացնում	2.2%	Մահվան դեպքերը / սպանություններ, ինքնասպանություններ/	3.5%	Զինծառայողներին հասանելի գումարներ չտրամադրելը	3.2%
14.	Խախտումներով զուգորդված զորակոչը	1.9%	Զինված ուժերում ոչ կանոնադրային հարաբերությունների առկայությունը	3.3%	Բոնությունների կամ բռնարարքների առկայությունը, պատշաճ կարգապահության բացակայությունը	3%
15.	Զինված ուժերում պատշաճ բժշկական սպասարկման որակի բացակայությունը	1.9%	Ոչինչ հնարավոր չէ փոխել	2.7%	ՀՀ գինված ուժերի լավ տեխնիկայով հագեցվածութան պակաս	3%
16.	Ոչինչ հնարավոր չէ փոխել	1.8%	Հասարակության շրջանում ՀՀ գինված ուժերի նկատմամբ անվստահությունը/ցածր հեղինակությունը	2.2%	Հասարակության շրջանում ՀՀ գինված ուժերի նկատմամբ անվստահությունը/ցածր հեղինակությունը	2.4%
17.	Դժվարանում եմ պատասխանել	1.8%	ՀՀ զինված ուժերում զինծառայողները խնդիր չունեն	1.6%	ՀՀ զինված ուժերում զինծառայողները խնդիր չունեն	2%
18.	Բոնությունների կամ բռնարարքների առկայությունը, պատշաճ կարգապահության բացակայությունը	1.5%	Զինծառայողներին հասանելի գումարներ չտրամադրելը	1.4%	Ոչինչ հնարավոր չէ փոխել	2%
19.	Զինծառայողներին հասանելի գումարներ չտրամադրելը	1.3%	Վերոնշյալ բոլոր խնդիրները	1.3%	Վերոնշյալ բոլոր խնդիրները	1.3%
20.	ՀՀ զինված ուժերում զինծառայողները խնդիր չունեն	0.8%	Զինված ուժերում պատշաճ բժշկական սպասարկման որակի բացակայությունը	0.5%	Զինված ուժերում պատշաճ բժշկական սպասարկման որակի բացակայությունը	0.4%
21.	Հասարակության շրջանում ՀՀ գինված ուժերի նկատմամբ անվստահությունը/ցածր հեղինակությունը	0.4%	Վճարվող գումարի բարձրացում	0.2%	Զինված ուժերի խնդիրները ինձ չեն անհանգստացնում	0.2%
22.	Վճարվող գումարի բարձրացում	0.1%	Ընդամենը	100%	Վճարվող գումարի բարձրացում	0.2%
	Ընդամենը	100%			Ընդամենը	100%

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅՈՒՆԻ ՊԱՇՏՊԱՍՈՒԹՅԱՆ ՀԻՄԱԿԱՂԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

Առաջարկությունների երկրորդ ուղղությունը կապված է ծառայության պայմանների բարելավման հետ՝ 8.9 % /կենցաղային և բժշկական ապահովության խնդիրներին/: Զորացրվածները գտնում են, որ պետք է վերանայվի ծառայության ժամկետը՝ 15.3 %, և որ միաժամանակ պետք է ավելացվի արձակուրդների քանակը՝ 16.2 %: Զորացրվածները առաջարկում են նաև գինված ուժերի բարեփոխումներին ուղղված առաջարկություններ՝ պրոֆեսիոնալ բանակի ստեղծումը՝ 3.5 % և բանակի նյութական և տեխնիկական համալրումը՝ 3.9 %:

Երկրորդային և երրորդային փոփոխությունների շարքում զորացրվածները առավելացնեն կարևորում են գինված ուժերում պայմանների բարելավման խնդիրները, սպայակազմի մասնագիտական որակի և պրոֆեսիոնալիզմի մակարդակի բարձրացումը և պրոֆեսիոնալ բանակին անցնելու խնդիրը:

Անկախ առաջնահերթությունից՝ գինված ուժերում խնդիրների լուծմանն ուղղված առաջարկությունների ցանկում (տես այդուսակ 11) զորացրվածների կողմից կարևորվում է սպայակազմի մասնագիտական կարողությունների բարձրացումը և գինվորների նկատմամբ նրանց վերաբերմունքի փոփոխությունը, ծառայության ժամկետի վերանայումը, պրոֆեսիոնալ բանակի ձևավորումը և ծառայության պայմանների բարելավումը:

Աղյուսակ 11.

Եթե Դուք հնարավորություն ունենայիք, առաջին հերթին ինչը կփոխեիք << գինված ուժերում

1.	Սպայակազմի մասնագիտական որակի և պրոֆեսիոնալիզմի բացակայությունը	10.3%
2.	Զինված ուժերում ծառայության ժամկետը	10.2%
3.	Արձակուրդների քանակը կշատացնեի	9.8%
4.	Զինված ուժերի ոչ բավարար կենցաղային պայմանները, վատ սնունդը	9.7%
5.	Սպայակազմի կողմից անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը	7.1%
6.	Զինված ուժերում ծառայության պարտադիր լինելը	6.6%
7.	Բանակը դարձնել պրոֆեսիոնալ	6.5%
8.	Զինծառայողների նկատմամբ խիստ/բիրտ վերահսկողությունը	5.1%
9.	Մահվան դեպքերը /սպանություններ, ինքնասպանություններ/	5.1%
10.	Զինված ուժերում ոչ կանոնադրային հարաբերությունների առկայությունը	4.6%
11.	Խախուսմերով զուգորդված զորակոչը	4.4%
12.	<< գինված ուժերում կաշառակերությունը, կոռուպցիան, գողությունը	3.9%
13.	<< բանակի նյութական և տեխնիկական հագեցվածությունը	3.5%
14.	Բոնությունների կամ բռնարարքների առկայությունը, պատշաճ կարգապահության բացակայությունը	2.7%
15.	Ոչինչ էլ հնարավոր չէ փոփոխել	2.2%
16.	Զինծառայողներին հասանելի գումարներ չտրամադրելը	1.8%
17.	Հասարակության շրջանում << գինված ուժերի նկատմամբ անվստահությունը/ցածր հեղինակությունը	1.5%
18.	<< Զինված ուժերում զինծառայողները խնդիր չունեն	1.4%
19.	Զինված ուժերում պատշաճ բժշկական սպասրկման որակի բացակայությունը	1.0%

20.	Զինված ուժերի խնդիրները ինձ չեն անհանգստացնում	0.9%
21.	Վերոնշյալ բոլոր խնդիրները	0.8%
22.	Դժվարանում եմ պատասխանել	0.7%
23.	Վճարվող գումարի չափը կբարձրացանեի	0.2%
	Հնդամենը	100.0%

Նկատենք, որ **Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայազորային և պահակային ծառայությունների կանոնագիրը⁴ կայազորներում** նախատեսում է կայազորի պետի՝ իրավական աշխատանքի գծով օգնականի պաշտոն, որը պատասխանատու է կայազորի պետի և պաշտոնատար անձանց գործունեության՝ վերադաս պետերի հրամաններին, գործող օրենսդրությանը համապատասխանության համար:

Նա պարտավոր է՝ **Հայաստանի Հանրապետության օրենքների, զինվորական երդման, կանոնադրությունների և նորմատիվ այլ ակտերի պահանջները կատարելու նպատակով կայազորի անձնակազմի հետ անցկացնել իրավական կուլտուրայի ձևավորմանը նպաստող միջոցառումներ, որոնք կանոնակարգում են նրանց ծառայողական գործունեությունը զորամասերի հրամանատարների իրավական հարցերով օգնականների օժանդակությամբ՝ ամփոփելով նրանց աշխատանքային փորձը, պաշտոնատար անձանց բացատրել նրանց կողմից ընդունված կամ նախապատրաստվող որոշումների համապատասխանությունը գործող օրենսդրությանը, պարզաբանել կայազորի մեջ մտնող գորամասերի, զինծառայողների, բանվոր-ծառայողների և նրանց ընտանիքների անդամների՝ օրենքով սահմանված իրավունքների պաշտպանության հարցերը, մասնակցել կայազորի զինվորական կարգապահությունն ամրապնդելու, կայազորային և պահակային ծառայություններ, ինչպես նաև կարգուկանոն հաստատելու վերաբերյալ կայազորային միջոցառումներ կազմակերպելու և անցկացնելու իրավական ապահովմանը:**

Եթե վերլուծելիս լինենք նշված նորմերը, ստացվում է, որ զորամասերում պետք է գոյություն ունենան հրամանատարի իրավական հարցերով օգնականի հաստիք, բացի այդ, կարգապահությանն ուղղված միջոցառումներ նույնպես պետք է կազմակերպվեն, սակայն, այսօր մեր գիտակցության մեջ կայազորների գործունեությունը մշտապես դիտարկվում է մարդկանց նկատմամբ կիրառվող ներգործության միջոցների հետ:

Այսինքն, զինծառայության ընթացքում իրավական բնույթի խնդիրների լուծման համար օրենսդրությամբ նախատեսված է համապատասխան ինստիտուտ:

Այդուսակ 11-ում ներկայացված խնդիրների գոյության և դրանց վերացման նախապայմանը նաև արդյունավետ գործող կարգապահական կանոնագիրը ունենալն է, որը այդպես էլ չհաջողվեց <<ազգային ժողովին ընդունել:

Արդյունքում, 2012 թվականի մարտի 21-ին «<<ԶՈՒ կարգապահական կանոնագիր» օրենքը ներառում է գերազանցապես պարտականությունների մի մեծ զանգված, ինչն ակնհայտորեն մարդու իրավունքների, ազատությունների և պարտականությունների միասնության սահմանադրական սկզբունքի խախտում է:

Այսպես. «<<զինված ուժերի կարգապահական կանոնագիր» <<օրենքը (այսուհետև՝

⁴ «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայազորային և պահակային ծառայությունների կանոնագիրը հաստատելու մասին» <<օրենքը ընդունվել է <<Աժ կողմից 1996թվականի դեկտեմբերի 3-ին: Սույն օրենքի ընդունումից հետո անցել է շուրջ 17 տարի, հետևաբար նշված կանոնագիրը նորով փոխարինելու խիստ անհրաժեշտություն կա: Օրինակ, վաղուց չօգտագործվող բանվոր-ծառայող եզրույթը շարունակում է դեռևս օգտագործվել հենց նշված կանոնագրով:

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅԵՐԻ ՊԱՇՏՈԱՌՈՅԱՅ ՀԻՄԱՆԴՐԻՐԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԻՆՎԱԾ ՈՒԺՐՈՒՄ

նաև Կանոնագիրք) ընդունվել է 2012 թ. մարտի 21-ին: Չնայած կանոնագրքի նախագծի բարելավման նպատակով << ազգային ժողովում կազմակերպվեցին խորհրդարանական լսումներ, տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացվեցին մարդու իրավունքների պաշտպանվածությանն ուղղված առաջարկներ, այնուամենայնիվ օրենքը այդպես էլ չի համապատասխանում մարդու իրավունքների նվազագույն չափորոշիչներին⁵:

Զինծառայողը, գտնվելով հատուկ իրավական վիճակում (նկատի ունենալով, որ նրա որոշ իրավունքներ և ազատություններ սահմանափակվում են, իսկ պարտականությունների շրջանակը լայնացվում) շարունակում է մնալ որպես պետության պաշտպանության ներքո գտնվող անձ, որի իրավունքները, ազատությունները և օրինական շահերը պետք է հարգվեն, իսկ դրանք խախտած անձինք՝ ենթարկվեն պատասխանատվության:

<< զինված ուժերում ծառայության բնականոն ընթացքն ապահովելու նպատակով հրամանատարների համար օրենսդրությունը իբրև պարտականություն սահմանում է ապահովել իրեն վստահած զորամասի/ստորաբաժանման զինվորական կարգապահությունը, բարոյահոգեբանական վիճակը և զինվորական ծառայության անվտանգությունը, ներքին կարգուկանոնը, բժշկական, սոցիալ-իրավական և կենցաղային ապահովումը:

<< զինված ուժերում ծառայության բնականոն ընթացքն ապահովելու նպատակով հրամանատարների հիմնարար իրավունքներն ու ազատությունները՝ ղեկավարվելով << սահմանադրությամբ նախատեսված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին ու ազատություններին վերաբերող դրույթներով:

Յուրաքանչյուր խախտման համար հրամանատարը, սպան ենթակա է օրենքով սահմանված պատասխանատվության: << զամանատարի, սպայի կողմից իր պարտականությունների անշեղ կատարումը, ինչպես նաև նրա պատժելիության ապահովումը զինված ուժերում մարդու իրավունքները առավել պաշտպանված լինելու իրական երաշխիք են:

Եթե խոսում ենք կարգապահության ապահովման մասին, ապա պետք է նկատի ունենալ, որ կարգապահության ապահովման հարցում դերակատարում կարող են ունենալ թե՛ շարքային կազմի զինծառայողները, թե՛ սպայական ու ենթասպայական անձնակազմը: Մինչդեռ Կանոնագրքի ընդհանուր բովանդակությունից ակնհայտ է դառնում, որ շուրջ իհսուն հոդվածից բաղկացած օրենսդրական ակտի, այն է՝ Կանոնագիրքը, ընդամենը մեկ հոդված՝ 47-րդն է սահմանում կիրառված խրախուսանքի կամ տույժի վերաբերյալ անհամաձայնության դեպքում զեկուցագիր ներկայացնելու կարգը: Այնինչ, զորամասի հրամանատարությունը որպես վարչարարություն իրականացնող մարմին պետք է ղեկավարվի նաև «Վարչարարության հիմունքների ու վարչական վարույթի մասին» << օրենքով, իսկ դա նշանակում է, որ վարչարարության իրականացման արդյունքը վարչական ակտի ընդունումն է, որի բողոքարկման և վերանայման համար օրենքով նախատեսված ընթացակարգ գոյություն ունի: Բացի այդ, ուսումնասիրելով ողջ Կանոնագիրքը՝ պարզվում է, որ իրավահարաբերության մասնակից սուբյեկտները, բացի պարտականություններից օժտված չեն իրավունքներով, ուղղակի առկա է մեկ առանձին հոդված, որը վերնագրված է կարգապահական իրավունք վերտառությամբ, ինչը բոլորովին այլ բովանդակություն ունի: Այսպես, Կանոնագրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ Կարգապահական իրավունքը հրամանատարների (պետերի), ինչպես նաև այլ զինծառայողների իրավասությունն է՝ ենթակա կամ ստորադաս զինծառայողի նկատմամբ կիրառելու խրախուսանքի կամ կարգապահական տույժի տեսակներ: Նոյն Կանոնագրքի 3-րդ և 4-րդ հոդվածների բովանդակության վերլուծությունից պարզվում է, որ շարքային կազմի զինծառայողները ունեն միայն պարտականություններ, մինչդեռ սպաներն ունեն և իրավունքներ, և պարտականություններ: Առաջին հայացքից թվում է, թե սպաները

⁵ Տե՛ս ԵԱՀԿ/ՃՀՄԻԳ կարծիքը

Նույնպես իրավունքներ չունեն, քանի որ Կանոնագրքի 4-րդ հոդվածի վերնագիրը բոլորովին այլ է՝ հրամանատարի (պետի) դերը զինվորական կարգապահության ապահովման և ամրապնդման գործում, սակայն դրանց հաջորդող մյուս հոդվածների բովանդակությունը վկայում է դրա մասին:

Կանոնագրքի 3-րդ հոդվածի համաձայն, Զինվորական կարգապահությունը պարտավորեցնում է յուրաքանչյուր զինծառայողի՝

1) հավատարիմ լինել զինվորական երդմանը, խստորեն պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների պահանջները

2) իր զինվորական պարտքը և գործառնական պարտականությունները, օրվա կարգացուցակով նախատեսված միջոցառումները կատարել լիարժեք, բարեխղճորեն և արիաբար, պատշաճ ձևով ու սումնասիրել ռազմական գործը, պահպանել ռազմական և պետական գույքը

3) աննկուն կրել զինվորական ծառայության դժվարությունները, անմնացորդ նվիրվել զինվորական պարտքի կատարմանը

4) լինել զգոն, խստորեն պահպանել պետական և ծառայողական գաղտնիքը

5) պահպանել զինծառայողների միջև կանոնադրային փոխհարաբերությունները, ամրապնդել զորային ընկերականությունը

6) հարգել հրամանատարներին (պետերին) ու միմյանց, պահպանել զինվորական բարեկրթության և ողջոյնի կանոնները

7) թույլ չտալ զինծառայողի պատիվն արատավորող արարք:

Իսկ նույն հոդվածի երկրորդ մասն արդեն կարգավորում է զինվորական բարձր կարգապահության ապահովման միջոցները, որոնցից են մասնավորապես՝

1) զինծառայողների մեջ բարոյակամային ու մարտական հատկանիշներ դաստիարակելը, հրամանատարներին (պետերին) գիտակցաբար ենթարկվելը

2) իր պարտականությունների և զինվորական կանոնագրքերի պահանջների կատարման համար յուրաքանչյուր զինծառայողի անձնական պատասխանատվության գիտակցումը

3) զորամասում (ստորաբաժանումում) ներքին կարգուկանոնի պահպանումը

4) մարտական պատրաստության հստակ կազմակերպումը և այդ գործում ամբողջ անձնակազմի ընդգրկումը

5) ենթականների նկատմամբ հրամանատարների (պետերի) ամենօրյա պահանջկոտությունը, նրանց արժանապատվության հարգումը, նրանց հանդեպ մշտական հոգատարությունը, համոզման, հարկադրանքի և զինվորական կողեկտիվի հասարակական ներգործության միջոցների հմուտ զուգորդումն ու ծիշտ կիրառումը

6) զորամասում անհրաժեշտ նյութական-կենցաղային պայմանների ստեղծումը:

Նշված դրույթները ըստ էության կրում են հոչակագրային բնույթ և, ինչպես տեսնում ենք, կարգապահության ապահովման հիմքում զինծառայողների արժանապատվության և իրավունքների հարգման սկզբունքը նույնիսկ չի ամրագրված:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք փաստել, որ ՀՀ զինված ուժերում կարգապահության ապահովման կարեւոր երաշխիք է հանդիսանում զինծառայողների իրավունքների պաշտպանության ապահովմանն ուղղված արդյունավետ իրավական մեխանիզմների ձևավորումը:

Օրինակ, զինված ուժերում փոփոխություններին ուղղված առաջարկությունների թվում է պրոֆեսիոնալ բանակին անցնելը /6.5 տոկոս, տես այդուսակ 11/, որի ներդրման դեպքում կարծում ենք՝ բացահայտված շատ խնդիրներ կատանան արմատական լուծում:

Հետաքրքիր է հարցման մասնակիցների կարծիքը իրավիճակի փոփոխության մասին. հարց-

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅԵՐԻ ՊԱՇՏՊԱՌՈՂՅԱՅ ՀԻՄՆԱԴՐԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՂՅԱՅ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

ման մասնակիցների կեսի կարծիքով՝ 51.9 %, (տես աղյուսակ 12) զինծառայողների իրավունքների պաշտպանվածության վիճակը ծառայության ավարտին չի փոխվել: Միայն 38.8 %-ի կարծիքով այն լավացել է:

Աղյուսակ 12.

Հստ Ձեզ՝ ձեր ծառայության ժամկետի ավարտին՝ ծառայության ժամկետի սկզբի համեմատ զինծառայողների իրավունքների պաշտպանվածության վիճակը լավացել է, վատացել է, թե մնացել է նույնը:

1.	Մնացել է նույնը (չի փոփոխվել)	51.9%
2.	Լավացել է	38.7%
3.	Վատացել է	6.6%
4.	Դժվարանում եմ պատասխանել	2.8%
	Ընդամենը	100.0%

Նախկին զինծառայողների կեսը, եթե հնարավորություն ունենային, չէին գնա ծառայության (տես աղյուսակ 13):

Աղյուսակ 13.

Եթե Դուք հնարավորություն ունենայիք չծառայել ՀՀ զինված ուժերում որպես պարտադիր ժամկետային զինծառայող, ապա Դուք՝

1.	Չէիք գնա ծառայության	50.4%
2.	Այնուամենայնիվ կգնայիք ծառայության	49.1%
3.	Դժվարանում եմ պատասխանել	0.5%
	Ընդամենը	100.0%

Նմանապես, հարցվողների մոտ 53 %-ը չէր ցանկանա, որ իր բարեկամը կամ ընկերը ներկայումս ծառայեր զինված ուժերում (տես աղյուսակ 14):

Աղյուսակ 14.

Կցանկանայիք արդյոք, որ Ձեր բարեկամը կամ ընկերը ներկայումս ծառայեր ՀՀ զինված ուժերում

Ոչ	52.6%
Այո	47.4%
Ընդամենը	100.0%

Նկատենք, որ հարցվողների մոտ 63,1 %-ը գտնում է, որ զինված ուժերում գերակշռում են ոչ կանոնադրային հարաբերությունները (տես աղյուսակ 15):

Աղյուսակ 15.

Կարծիք կա, որ << զինված ուժերում գերակշռում են ոչ կանոնադրային հարաբերությունները, որքանով եք Դուք համամիտ այդ մտքի հետ

1.	Որոշ չափով համամիտ եմ	43.8%
2.	Այդքան էլ համամիտ չեմ	23.0%
3.	Լիովին համամիտ եմ	19.3%
4.	Բոլորովին համամիտ չեմ	13.9%
	Ընդհամենը	100.0%

Նմանապես, հարցվողների կեսը գտնում է, որ զինծառայության պայմանները մնացել են նույնը (55.3 %-ը, տես աղյուսակ 16):

Աղյուսակ 16.

Հստ Ձեզ՝ այսօր զինծառայողների ծառայության պայմանները (նկատի ունենք ֆիզիկական, մտավոր, հոգեբանական և մասնագիտական ծանրաբեռնվածությունը) ծանրացել են, թեթևացել են, թե մնացել են անփոփոխ:

1.	Մնացել է նույնը (չի փոփոխվել)	55.3%
2.	Թեթևացել են	31.5%
3.	Ծանրացել են	8.6%
4.	Դժվարանում եմ պատասխանել	4.6%
	Ընդհամենը	100.0%

Ի դեպ, միայն մեկ երրորդն է (31.5 %) գտնում, որ ծառայության պայմանները թեթևացել են, իսկ 8.6 %-ի կարծիքով՝ ծանրացել են: Այսինքն, մոտ 64 %-ը գտնում է, որ ծառայության պայմանները մնացել են անփոփոխ և ծանրացել են:

Քանի որ հարցվողների մոտ կեսը այնուամենայնիվ կգնային ծառայության, կարելի է եզրակացնել, որ միայն զինծառայողների իրավունքների պաշտպանության բարելավման դեպքում ծառայության գնալու կամ չգնալու 50/50 հարաբերությունը հնարավոր է փոխել:

Այսպիսով, << զինված ուժերում գոյություն ունեցող հիմնախնդիրները պայմանավորված են.

1. Օրենսդրության անկատարությամբ
2. Սպաների մասնագիտական ոչ պատշաճ մակարդակով
3. Զինծառայողների նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունքով
4. Ծառայության պայմանների /կենցաղային, բժշկական/ ոչ պատշաճ մակարդակով

3. ԻՐԱՎԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

1. Զինծառայողների իրավական պաշտպանության հիմքերը (միջոցները)

Ցուրաքանչյուր բնագավառում առանց իրավական համապատասխան միջոցների հնարավոր չէ անձի իրավական պաշտպանվածության մասին խոսել: Սակայն, այդ նպատակին հասնելու առաջնային գործոնները երկրի Սահմանադրությամբ հոչակված նորմերն են: Իրեն իրավական պետություն հոչակած ցանկացած պետություն պարտավոր է նման դրույթ ներառել իր երկրի Սահմանադրությամբ, ինչը բնութագրում է նաև տվյալ պետությանը որպես ժողովրդավարական կարգ ունեցող պետություն:

Ինչ խոսք, կարևորելով ընդհանրապես արդյունավետ իրավական պաշտպանության գաղափար՝ այն ավելի արդիական ու անհրաժեշտ է լինում մասնավորապես զինծառայողների շրջանում, քանի որ վերջիններս դիտվում են ավելի խոցելի ու նրանց իրավունքների խախտման ոիսկայնություն ավելի բարձր է: Որպեսզի, պետության ներսում սահմանադրական այդ իրավունքն անշեղորեն ապահովվի, նախ անհրաժեշտ են որոշակի իրավական կարգավորման հիմքեր, որպես այդ իրավունքի ապահովման նախադրյալ: Եվ այս դեպքում սահմանադրական նման նորմն ուղղակի հիմք կարող է հանդիսանալ այլ իրավասու մարմինների համար համապատասխան օրենսդրական և ենթաօրենսդրական ակտեր ընդունելու համար:

Կարևոր է, երբ այդ իրավահարաբերության մասնակիցը՝ ի դեմս շարքային զինծառայողի, տեղեկացված է լինում իրեն վերաբերող իրավական նորմերի էությանն ու բովանդակությանը, այդ թվում՝ միջազգային իրավական փաստաթղթերին: Արդյունավետ իրավական պաշտպանություն երևոյթում չափազանց կարևորվում է պետիցիայի իրավունքը, ինչն իրենից ենթադրում է պետական մարմիններին դիմելու և նրանցից ողջամիտ ժամկետներում, պատշաճ կարգով պատասխան ստանալու իրավունք: Ասվածն ավելի պարզ դարձնելու նպատակով, փորձենք ցույց տալ և վերլուծել այն իրավական կարգավորման հիմքերը, որոնք արդյունավետ իրավական պաշտպանության ապահովման միջոցներ են:

Այսպես, հաշվի առնելով << Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժով օժտված լինելու և << ողջ տարածքում Սահմանադրության նորմերն անմիջականորեն գործելու հանգամանքը՝ անհրաժեշտ է նախ նշել << Սահմանադրության դրույթները:

Համաձայն << Սահմանադրության 18-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Ցուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

Ցուրաքանչյուր ոք իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով ստանալու մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը:

Ցուրաքանչյուր ոք, <այսատանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին:

Վերոնշյալ դրույթի բովանդակությունից հետևում է, որ բանակում զինվորական ծառայություն անցնող զինծառայողը նույնպես ունի հնարավորություն նման միջոցներով իր իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու, մինչդեռ, ներկայիս իրավակիրառ պրակտիկան բոլորովին այլ պատ-

Կերի մասին է վկայում, ինչը մտահոգության տեղիք է տալիս, և աստիճանաբար այդ մեխանիզմների օգտագործումը << զինված ուժերում պետք է լինի պարտադիր պայման: Արդյունավետ իրավական պաշտպանության անարդյունավետության մասին վերլուծություններն ու մեխանիզմները կներկայացվեն սույն գլխի հաջորդ ենթահարցում, որտեղ քննարկման առարկա է դարձել նաև սոցիոլոգիական հարցման տվյալները:

Արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքի վերաբերյալ դրույթը արտացոլված է նաև «Մարդու իրավունքների և իմանարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայում (այսուհետ նաև՝ Կոնվենցիա), համաձայն որի, յուրաքանչյուր ոք, ում սույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

Զինծառայողների իրավական արդյունավետ պաշտպանության իրավունքի իրացման հաջորդ հիմքը «<< զինված ուժերի կարգապահական կանոնագիրը», «Ներքին ծառայության կանոնագիրը», «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայագորային և պահակային ծառայությունների կանոնագիրը հաստատելու մասին» << օրենքներն են, որոնք մանրամասնությամբ կարգավորում են այդ բնագավառում առաջացող հասարակական հարաբերությունները: Հաշվի առնելով զինվորական ծառայությամբ պայմանավորված պարտականությունների զանգվածի ածը՝ ժողովրդավարական պետության իրավական համակարգում դրանք պետք է հակակշռվեն զինծառայողի սահմանափակված իրավունքների առավել մեծ պաշտպանությամբ: Քննարկվող կանոնագրքերում զինծառայողներին ընդհանրապես, իսկ պարտադիր զինվորական ծառայություն իրականացնող անձանց համար պետք է հստակորեն սահմանվի իրավունքների ցանկ, հակառակ պարագայում զինծառայողին չի հաջողվի որևէ կերպ օգտվել արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներից:

Պակաս կարևորություն չի ներկայացնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» << օրենքի⁶ դրույթների կիրառումը քննարկվող իրավիճակում: Մասնավորապես, համաձայն նշված օրենքի 3-րդ հոդվածի, որպես օրենքում օգտագործվող հիմնական հասկացություն է նաև վարչական մարմիններ եզրույթը, որն իր մեջ ներառում է նաև << գործադիր իշխանության հանրապետական մարմիններ՝ << նախարարություններ և հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններ: Ասվածից հետևում է, որ սույն օրենքի դրույթները կիրառվում են նաև զինված ուժերի բնագավառում առաջացող հասարակական հարաբերությունների վրա, քանի որ << պաշտպանության նախարարությունը նույնպես գործադիր իշխանության հանրապետական մարմին է: Ավելին, նույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչարարությունը հանդիսանում է վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ: Այսինքն, զինծառայողի վերաբերյալ որոշում կայացնելիս, այն պետք է եզրափակվի համապատասխան ակտի ընդունմամբ՝ իրաման, որոշում և այլն:

Նշված ակտերը վիճարկելիս կիրառելի են << վարչական դատավարության օրենսգրքի նորմերը, ինչի արդյունքում կարող է լրիվ կամ մասնակիորեն անվավեր ծանաչվել վարչական մարմնի ակտը, ինչպես նաև վիճարկվել նրա գործողությունը (անգործությունը):

Արդյունավետ իրավական պաշտպանության միջոցների արդյունավետությունը պայմանավորված է իրականության մեջ գոյություն ունեցող գործուն մեխանիզմներից (կառուցակարգերից): Դրանց կարգավորման համար կիրառելի են ոչ միայն վերը նշված ակտերը, այլ նաև այնպիսի օրենսդրական

⁶ Ընդունվել է << Ազգային ժողովի կողմից 2004թ. փետրվարի 18-ին

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅՈՒՆԻ ՊԱՇՏՊԱՍՈՐՅԱՍ ՀԻՄԱԿԱՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՍ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

և ենթաօրենսդրական ակտերը, ինչպիսիք են «Քինապարտության մասին», «Քինվորական ծառայության անցնելու մասին» ՀՀ օրենքները, «ՀԿ Կառավարության որոշումները, ինչպես նաև «ՀԿ պաշտպանության նախարարի և ՀԿ գլխավոր շտաբի պետի հրամաններն ու հրահանգները»:

Կարևոր է իմանալ, որ գինապարտների բժշկական և գինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգը սահմանվում է պաշտպանության նախարարի 2010 թվականի փետրվարի 26-ի թիվ 175 հրամանով⁷: Հնդ որում, զորակոչիկների առողջական վիճակի մասին գրավոր եզրակացություն ներկայացնելու լիազորությամբ օժտված է ՀՀ կառավարության որոշմամբ կազմավորվող կենտրոնական բժշկական հանձնաժողովը (ԿԲՀ), որը բժշկական փորձաքննության ղեկավար մարմին է և հաշվետու է հանրապետական զորակոչային հանձնաժողովի նախագահին (պաշտպանության նախարարին):

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության դեմ ուղղված գանգատներ քննվում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանում, հաշվի առնելով որ արդյունավետ իրավական պաշտպանության վերաբերյալ դրույթ նախատեսված է նաև Կոնվենցիայով՝ ուստի որպես կարգավորման իրավական հիմք հանդիսանում է եվրոպական դատարանի կայացրած որոշումները, որոնք ներպետական դատական պաշտպանության միջոցները կիրառելուց հետո քաղաքացիները կարող են դիմել եվրոպական դատարան: Իհարկե դրա քաղկացուցիչ մաս կարող են հանդիսանալ նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված ակտերը, որոնք, ցավոք սրտի, այնքան էլ շատ չեն, ինչն, իհարկե, խոսում է ոչ միայն գինված ուժերում իրավական պաշտպանության միջոցների անարդյունավետության մասին, այլև հասարակության ցածր իրավագիտակցության, պետական կամքի, հասարակության կողմից մեխանիզմների նկատմամբ ձևավորված անվստահության պատճառով:

2. Զինծառայողների կողմից իրենց խախտված իրավունքների վերականգնման միջոցների համակարգը և դրանց կիրառության հիմնախնդիրները

Մարդու և քաղաքացու ցանկացած խախտված իրավունք ենթակա է վերականգնման: Իսկ վերականգնումը հնարավոր և իրատեսական է, եթե երկրի իրավական համակարգը հնարավորինս կատարյալ է ու ամբողջական: Հնդ որում, պետք է նկատի ունենալ, որ մարդու և քաղաքացու խախտված իրավունքների վերականգնման գաղափարը ոչ միայն այս կամ այն տեսաբանի ցանկությունն է կամ առաջարկությունը, այլև այն նախ և առաջ երկրի Հիմնական օրենքի՝ ՀՀ Սահմանադրության պահանջ: Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ Սահմանադրությունը ձանաչում է մարդու խախտված իրավունքը վերականգնելու իրավունքը: Ուստի, գինծառայողները նույնպես անմասն չպետք է մնան նման հնարավորություններից օգտվելու համար:

Իրավական նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ գինծառայողներն իրենց խախտված իրավունքների վերականգնման նպատակով կարող են դիմել նախ իրավունքը խախտող պետական լիազոր մարմնին կամ դրա պաշտոնատար անձին, իսկ դրա արդյունքների հետ համաձայն չինելու դեպքում՝ վերաբաս մարմնին կամ դրա պաշտոնատար անձին: Հաշվի առնելով բանակում ենթակայական հարաբերությունների հանգամանքը, ինչպես նաև վերլուծելով մեր իրականության մեջ գոյություն ունեցող կիրառական պրակտիկան՝ պարզվում է, որ նման եղանակներով խախտված իրավունքների վերականգնման «օգտակար գործողության գործակիցը» բավականին ցածր է, քանի որ մշտա-

⁷ Քանի որ հետազոտության անցկացման համար հիմք է հանդիսացել 2012թ. գարնանային և աշնանային զորակոչերի ընթացքում զորացրված նախկին գինծառայողներից ստացված տեղեկությունները, այդ պատճառով վերլուծությունն իրականացվել է ՀՀ Պաշտպանության նախարարի նշված հրամանով, մինչդեռ 2013թ, ապրիլի 8-ի թիվ 410 հրամանով սահմանվել է գինապարտների բժշկական և գինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության նոր կարգ:

պես լիազորությունների առումով գերակայություն ունեցող պաշտոնատար անձը, հրամանատարը «ծիշտ է», հետևաբար սահմանադրական նորմը տվյալ իրավիճակում կրում է հոչակագրային բնույթ:

Խախտված իրավունքների վերջին, թերևս մեր ընկալմամբ, արդյունավետ հաջորդ միջոցը դատական պաշտպանությունն է, որտեղ արդարադատություն իրականացնող մարմինը, վեր կանգնած լինելով բոլոր տեսակի շահերից, մարդու իրավունքների բարձրագույն և անօտարելի արժեք դիտելու հաշվառմամբ կոչված է իրականացնելու բացառապես արդարադատություն, ինչը նույնպես բխում է << սահմանադրությամբ նրա կարգավիճակից:

Ցավոք, այսօր նշված կառուցակարգը նույնպես այս իրավիճակում գործում է անարդյունավետ: Նշված դատողություններն իհարկե իհմնավորվում են նաև հարցվածների շրջանում արտահայտված կարծիքներով նույնպես: Մինչ դրանց անդրադառնալը, կարելի է արձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունում ինչպես շարքային քաղաքացու, այնպես էլ որևէ կարգավիճակ ունեցող՝ տվյալ պարագայում զինծառայողի խախտված իրավունքների վերականգնման երկու եղանակ՝ վերադասության և դատական կարգով: Իհարկե նման եղանակներից օգտվելու մի շարք միջոցներ գոյություն ունեն, մասնավորապես՝ իրենց խախտված իրավունքների վերականգնումը կարող է իրականացվել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր ձևով համապատասխան մարմնին կամ դրա պաշտոնատար անձին դիմելու միջոցով, հասարակական իրավապաշտպան կազմակերպություններին համապատասխան տեղեկատվություն ներկայացնելուց հետո հասարակական քննարկումների և քննադատությունների միջոցով, մարդու իրավունքների պաշտպանին դիմելու միջոցով և այլն: Պարզապես խնդիրն այն է, թե նշված միջոցներից որն է ավելի արդյունավետ, քանի որ շատ հաճախ նման միջոցներով իրենց խախտված իրավունքները վերականգնելու զինծառայողների փորձերը ավելի են վատթարացնում նրանց իրավական վիճակը՝ գտնվելով սահմանափակ հնարավորությունների պայմաններում:

3. Բողոքարկման իրավունքը որպես իրավական պաշտպանության արդյունավետ միջոց

Հայաստանի Հանրապետությունում զինվորական ծառայությունն իրականացվում է օրինականության, զինծառայողների իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության, միանձնյա ու կենտրոնացված ղեկավարման, ինչպես նաև կոլեգիալ կառավարման սկզբունքներով:

Զինծառայողների իրավունքների և ազատությունների պաշտպանության վերաբերյալ անգամ նման սկզբունքների օրենսդրական ամրագրումը դեռևս չի երաշխավորում այդ իրավունքների պաշտպանությունը:

Իրենց խախտված իրավունքների պաշտպանության նպատակով կարևոր է բողոքարկման մեխանիզմների արդյունավետությունը: Բողոքարկման կամ այլ կերպ ասած պետիցիայի իրավունքը հնարավորություն է յուրաքանչյուր զինծառայողին վիճարկելու այս կամ այն ակտը, նաև սպայակազմի գործողությունը (անգործությունը): Բողոքարկման իրավունքը արդյունավետ կարող է լինել բողոքարկման գործուն մեխանիզմների (կառուցակարգերի) եւ հրամանատարական անձնակազմի կամքի դեպքերում:

Զինված ուժերի կարգապահական կանոնագրքի 46-րդ հոդվածի համաձայն, զինծառայողին տրվող բանավոր կամ գրավոր հրամանները կամ ցուցումները պետք է համապատասխանեն հրամաններ կամ ցուցումներ տվողի կամ դրանք կատարողի լիազորությունների սահմաններին: Հետաքրքիրն այն է, որ զինծառայողների իրավունքների վերաբերյալ օրենսդրական ակտերը շատ սահմա-

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅՈՒՆԻ ՊԱՇՏՊԱՍՈՐՅԱՍ ՀԻՄԱԽԱՂԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՐՅԱՍ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՍ

նափակ են, միայն Կանոնագրքի 47-րդ հոդվածով սահմանվում է զինծառայողի կողմից գեկուցագիր ներկայացնելու կարգը: << զինված ուժերի կարգապահական կանոնագրքի 47-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ զինծառայողի կողմից գեկուցագրում ներկայացված հարցերի լուծումը մերժելու դեպքում այդ մասին գրավոր հայտնվում է գեկուցագիր ներկայացրած զինծառայողին՝ նշելով մերժման պատճառները, մերժման համար հիմք համարվող Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները, ինչպես նաև պարզաբանելով մերժումը բողոքարկելու կարգը: Մինչդեռ, բացի գեկուցագրից, զինծառայողին պետք է հնարավորություն տրվի իրամանատարությանը ներկայացնելու նաև գրավոր ձևով դիմում-բողոք, ինչպես նաև վերադասության կարգով բողոքարկել ստորադաս իրամանատարի իրամանն ու գործողությունը (անգործությունը): Ցավոք, օրենսդրական ակտերում նման ձևակերպումները շատ քիչ են: Սակայն, զինծառայողները նույնիսկ իրենց այդ հնարավորությունից էլ արդյունավետորեն ու ազատորեն չեն օգտվում: Կանոնագրքի նշված հոդվածի համաձայն, զինվորական ծառայության անցման հետ կապված հարցերով զինծառայողն իրավունք ունի իր անմիջական իրամանատարին (պետին), իսկ սույն օրենքի 46-րդ հոդվածում նշված սահմանների վերազանցման դեպքերում, ինչպես նաև իր նկատմամբ կիրառված կարգապահական տույժը բողոքարկելու կամ այլ զինծառայողների կողմից անօրինական ու անարդար գործողություններ կատարելու մասին վերադաս իրամանատարներին (պետերին) ներկայացնելու գեկուցագիր: Զեկուցագրում պարտադիր նշվում են առաջարկվող կամ բողոքարկվող հարցի Էռությունը, այն իրամանատարի (պետի) կամ այլ զինծառայողի տվյալները, որոնց գործողությունները կամ անգործությունը բողոքարկվում են, ինչպես նաև գեկուցագիր ներկայացնող զինծառայողի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը, զինվորական կոչումը, բնակության (ուսման) վայրը:

Զինծառայողն իրավունք չունի գեկուցագիր ներկայացնելու մարտական հերթապահության մեջ, շարքում, պահակախմբում, օրվա վերակարգում կամ ուսումնական պարապմունքներում գտնվելու ժամանակ, բացառությամբ նշված ժամանակ զինծառայողին տրվող նպատակային հարցման դեպքի: Իր նկատմամբ կիրառված կարգապահական տույժը զինծառայողը կարող է բողոքարկել տույժի մասին իրեն հայտարարվելու օրվանից ոչ ուշ, քան մեկամյա ժամկետում:

Բողոքարկման իրավունքն իրացնելու հետևալ ընթացակարգ է օրենսդրությունը նախատեսում զինծառայողի համար՝ այն իրամանատարը (պետը), որի իրավասությունների մեջ չի մտնում գեկուցագրում նշված հարցերի լուծումը, **3-օրյա ժամկետում** գեկուցագիրն ուղարկում է վերադաս կամ դրանք լուծելու իրավասություն ունեցող իրամանատարին (պետին)` այդ մասին տեղյակ պահելով գեկուցողին: Զեկուցագիրը չի կարող ուղարկվել այն իրամանատարի (պետի) քննարկմանն ու կարծիքին, որի գործողությունները կամ անգործությունը բողոքարկվում են գեկուցագրում: Մինչդեռ մեր իրականության մեջ հաճախակի են այն դեպքերը, երբ զինծառայողը բողոքարկում է, ասենք, գումարտակի իրամանատարի իրամանը, ու հետագայում զինծառայողը տեղեկացնում է, որ իր բողոքի հետագա ընթացքը լուծելու համար հանձնարարություն է տրվել այն սպային, ում գործողություններից զինծառայողը դժգոհում է:

Զեկուցագիր ներկայացրած զինծառայողի նկատմամբ անօրինական կամ անարդար գործողություններ կատարած կամ անգործություն թույլ տված իրամանատարը (պետը) ենթակա է սույն օրենքով նախատեսված պատասխանատվության, եթե նրա գործողությունները կամ անգործությունը չեն առաջացնում քրեական պատասխանատվություն: Արգելվում է խոշոնդրութել զինծառայողին ներկայացնելու գեկուցագիրը, դրա համար նրան պատճել նսեմացնել նրա պատիվն ու արժանապատվությունը կամ դրսնորել այլ անարդարացի վերաբերմունք, ինչպես նաև ամրող ծավալով իրականացնելու իր խախտված իրավունքների դատական կարգով պաշտպանությունը:

Զեկուցագրի մասին որոշումներն ընդունվում են անհապաղ, բայց ոչ ուշ, քան 15-օրյա ժամկետում, իսկ լրացուցիչ ուսումնասիրություն պահանջող գեկուցագրի մասին որոշումն ընդունվում է մինչև 30 օր ժամկետում՝ լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտության մասին տեղեկացնելով գեկուցագրի ներկայացնողին: Զեկուցագրում ներկայացված հարցերը համարվում են լուծված, եթե քննարկվել են ամբողջությամբ, ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ, և տրվել է Հայաստանի Հանրապետության օրենքների ու այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխանող սպառիչ գրավոր պատասխան:

Զեկուցագրում ներկայացված հարցերի լուծումը մերժելու դեպքում այդ մասին գրավոր հայտնվում է գեկուցագրի ներկայացրած զինծառայողին՝ նշելով մերժման պատճառները, մերժման համար հիմք համարվող Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները, ինչպես նաև պարզաբանելով մերժումը բողոքարկելու կարգը: Զորամասերում վարվում է զինծառայողների ներկայացրած գեկուցագրերի հաշվառման մատյան, որի վարման կարգը սահմանում է համապատասխան պետական լիազոր մարմնի ղեկավարը:

4. Դատական կարգով բողոքարկման մեխանիզմների (կառուցակարգերի) արդյունավետությունը << զինված ուժերում

Մարդու իրավունքների պաշտպանության ներպետական մեխանիզմներից առավել տարածված ձևը դատական պաշտպանությունն է: Այն կարևորվում է ոչ միայն «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում, այլ նաև Մարդու իրավունքների համընդիհանուր հոչակագրում, որի 8-րդ հոդվածում նշված է՝ *յուրաքանչյուր ոք իրավունք ունի Սահմանադրությամբ կամ օրենքով իրեն տրված հիմնական իրավունքները ուսնահարվելու դեպքում, իրավասու ազգային դատարանների միջոցով արդյունավետ վերականգնելու այդ իրավունքները:*

Իշխանության տարանջատման սկզբունքի հիման վրա դատական իշխանության մարմինները կոչված են ապահովելու՝ մի կողմից պետության և անհատի, մյուս կողմից՝ պետական իշխանության մարմինների միջև փոխհարաբերությունների ներդաշնակությունը, որի խախտման արդյունքում առաջին հերթին ուսնահարվում են մարդու իրավունքներն ու ազատությունները:

Հասարակական բազմաբնույթ ու բազմաբուվանդակ հարաբերությունների ոլորտում անհատը բազմաթիվ հակասություններ է ունենում հասարակության մյուս անդամների և պետական մարմինների հետ: Դատական իշխանության մարմինները կոչված են լուծելու այդ հակասությունները և ապահովելու անհատի իրավունքներն ու հիմնարար ազատությունները:

<< զինված ուժերում ծառայության մեջ գտնվող անձանց կողմից դատական պաշտպանության իրավունքից օգտվելը ունի որոշակի «առանձնահատկություններ»: Ամենամեծ առանձնահատկությունը նրանում է, թե որքանով է իրատեսական սպայի յուրաքանչյուր գործողությունը բողոքարկել դատարան և որքանով կարող է զինծառայողը ազատորեն օգտվել այդ իրավունքից:

<< դատահիրավական բարփոխումների արդյունքն եղավ նաև այն, որ 2008 թ. <<-ում ստեղծվեց վարչական դատարան, որը ղեկավարվում է հիմնականում << վարչական դատավարության օրենսգրքով: Համաձայն << վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅԵՐԻ ՊԱՇՏՊԱՍՈՒԹՅԱՆ ՀԻՄԱԿՆԴՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, այդ թվում, եթե՝ ա)խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար, բ) չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով:

Այսինքն, դատական կարգով զինծառայողները իրենց խախտված իրավունքների համար կարող են դիմել վարչական դատարան: Միևնույն ժամանակ դատական կարգով բողոքարկելու հնարավորությունից օգտվելու համար զինծառայողը իր ձեռքում պետք է ունենա իր վերաբերյալ սպայի կողմից կայացված և/կամ ուժի մեջ մտած համապատասխան փաստաթուղթը կամ հրամանը: Այս փաստաթուղթի մատչելիության հարցը օրենսդրությամբ կարգավորված չէ: Նմանապես, օրենսդրության ամրագրված չէ <<ՊՆ կենտրոնական բժշկական հանձնաժողովի և կենտրոնական ռազմական բժշկական հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների պատճենների տրամադրումը զորակոչիկներին և զինծառայողներին, որը էական ազդեցություն ունի նրանց կողմից այդ որոշումների դատական բողոքարկման հնարավության վրա:

5. Բողոքարկման հնարավորությունները և արդյունավետությունը ըստ սոցիոլոգիական հարցումների տվյալների

Հարցվածների մոտ 40 տոկոսը գտնում է, որ կարող է անկաշկանդ բողոքարկել հրամանատարների հրամանները և վիճարկել դրանց օրինականությունը /տես աղյուսակ 17/:

Աղյուսակ 17.

Կարծիք կա, որ զինծառայողները հնարավորություն ունեն անկաշկանդ բողոքարկելու իրենց հրամանատարների հրամանները, վիճարկելու դրանց օրինականությունը: Որքանով եք համամիտ այդ կարծիքի հետ:	
Լիովին համամիտ եմ	13.2
Որոշ չափով համամիտ եմ	26.5
Այդքան էլ համամիտ չեմ	36.6
Բոլորովին համամիտ չեմ	23.1
Դժվարանում եմ պատասխանել	0.4
Հրաժարվում եմ պատասխանել	0.1

Նոյնքանն էլ գտնում է, որ այդ բողոքարկման մեխանիզմները արդյունավետ են /տես աղյուսակ 18/: Բողոքարկման մեխանիզմները մատչելի են համարում հարցվածների կեսը /տես աղյուսակ 19/:

Աղյուսակ 18.

Որքանով են արդյունավետ հրամանների և որոշումների բողոքարկման մեխանիզմները <<զինված ուժերում	
Լիովին արդյունավետ են	8.9
Ավելի շատ արդյունավետ են	31.4
Ավելի շատ անարդյունավետ են	43.7

Բոլորովին անարդյունավետ են	12.8
Դժվարանում եմ պատասխանել	3.1

Աղյուսակ 19.

Որքանով են բողոքարկման մեխանիզմները մատչելի ժամկետային գինծառայողների համար	
Լիովին մատչելի են	13.6
Ավելի շատ մատչելի են	38.2
Ավելի շատ մատչելի չեն	33.2
Բոլորովին մատչելի չեն	12.0
Դժվարանում եմ պատասխանել	2.9

Մինչդեռ, հարցվածների միայն յուրաքանչյուր 6-ից մեկն է բողոքարկել հրամանատարի որոշումները կամ հրամանները /տես աղյուսակ 20/, որոնց 70%-ը հայտնում է, որ հազվադեպ է բողոքարկել /տես աղյուսակ 21/:

Աղյուսակ 20.

Դուք կամ Ձեր համաձառայակիցները բողոքարկել եք Ձեր հրամանատարի որոշումները և կամ հրամանները	
Այո	15.8
Ոչ	83.8
Դժվարանում եմ պատասխանել	0.3
Հրաժարվում եմ պատասխանել	0.1

Աղյուսակ 21.

Եթե այո, ապա որքան հաճախ	
Շատ հաճախ	8.7
Հաճախ	19.0
Հազվադեպ	70.6
Դժվարանում եմ պատասխանել	1.6
Հնդամենը	100.0

Միևնույն ժամանակ, որևէ հարցով ստորաբաժանման կամ զորամասի հրամանատարին դիմածների թիվը շատ ավելի մեծ է՝ հարցվածների մոտ կեսը /տես աղյուսակ 22/:

Աղյուսակ 22.

Երբևէ որևէ հարցով դիմել եք Ձեր ստորաբաժանման կամ զորամասի հրամանատարին	
Այո	46.7
Ոչ	53.3
Հնդամենը	100.0

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅԵՐԻ ՊԱՇՏՊԱՌՈՂՅԱՍ ՀԻՄԱԽԱՆԴՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՂՅԱՍ ՁԻՆՎԱԾ ՈՒԺՐՈՒՄ

Չնայած հարցվածների մոտ 80%-ը գտնում է, որ բողոքներում բարձրացված խնդիրները լուծվել են լիովին կամ մասամբ /տես աղյուսակ 23/, նկատենք, որ հարցվողների 56-57%-ը գտնում է բողոքարկման մեխանզիմները անարդյունավետ /տես աղյուսակ 24/:

Աղյուսակ 23.

Որբանով են լուծվել այդ բողոքում/երում եղած խնդիրները	
Լիովին	17.5
Մասամբ	61.9
Չեն լուծվել	15.1
Չեն լուծվել և ավելի վատթարացել են	3.2
Դժվարանում եմ պատասխանել	2.4
Հնդամենը	100.0

Աղյուսակ 24.

Որբանով են արդյունավետ հրամանների և որոշումների բողոքարկման մեխանիզմները << զինված ուժերում	
Լիովին արդյունավետ են	8.9
Ավելի շատ արդյունավետ են	31.4
Ավելի շատ անարդյունավետ են	43.7
Բոլորովին անարդյունավետ են	12.8
Դժվարանում եմ պատասխանել	3.1
Հնդամենը	100.0

Մյուս կողմից, հրամանատարին որևէ հարցով դիմողների /տես աղյուսակ 25/ մոտ 80%-ը գտնում է, որ դրանք լիովին կամ մասամբ լուծվել են /տես աղյուսակ 26/:

Աղյուսակ 25.

Երբևէ որևէ հարցով դիմել եք Ձեր ստորաբաժանման կամ գորամասի հրամանատարին	
Այո	46.7
Ոչ	53.3
Հնդամենը	100.0

Աղյուսակ 26.

Ինչպիսի լուծում է ունեցել	
Լիովին լուծվել են	48.9
Մասամբ լուծվել են	29.1
Չեն լուծվել	20.1
Չեն լուծվել և ավելի վատթարացել են	1.9
Հնդամենը	100.0

Կարելի է ենթադրել, որ հրամանատարներին ոչ բողոքի ձևով հարցերով դիմելու դեպքում դրանք, որպես կանոն, ավելի շատ են լուծում ստանում, քան բողոքարկման դեպքում:

Որպես կանոն, բողոքները ներկայացվում են բանավոր կերպով /տես աղյուսակ 27/ և հիմնականում վերադաս հրամանատարին /տես աղյուսակ 28/: <Ետաքրքիր է, որ բողոքներ ներկայացվում են նաև ինչպես անմիջապես հրաման տվողին՝ յուրաքանչյուր 6-ից մեկը, այնպես էլ լավ ծանոթին՝ յուրաքանչյուր 9-ից մեկը /տես աղյուսակ 28/:

Աղյուսակ 27.

Ինչ եղանակով եք/են (ինչպես) Դուք կամ Ձեր համաձառայակիցները բողոքարկել Ձեր հրամանատարի որոշումները և/կամ հրամանները	
Բանավոր	92.1
Գրավոր	6.3
Դժվարանում եմ պատասխանել	1.6
Ընդամենը	100.0

Աղյուսակ 28.

Ինչպես եք/են բողոքարկել (բողոքարկման որ մեխանիզմն եք օգտագործել)	
Վերադաս հրամանատարին	65.9
Դատարան	0.8
Լավ ծանոթի	11.9
Անմիջապես իրեն /հրաման տվողին/	17.5
ՊԲ հրամանատար	0.8
Բողոք հանրայացրել եմ (օրինակ՝ youtube-ում եմ տեղադրել)	0.8
Դժվարանում եմ պատասխանել	2.4
Ընդամենը	100.0

Նմանապես բողոքարկման արդյունքների մասին տեղեկացվել են, որպես կանոն, բանավոր ձևով /տես աղյուսակ 29/:

Աղյուսակ 29.

Ինչպես եք/են տեղեկացել բողոքարկման արդյունքներին	
Գրավոր	5.6
Բանավոր	88.1
Ոչ մի ձև	2.4
Դժվարանում եմ պատասխանել	4.0
Ընդամենը	100.0

Աղյուսակ 30.

Արդյոք զինված ուժերում կան հրամանների և որոշումների բողոքարկման մեխանիզմներ	
Այո	49.1
Ոչ	39.2
Դժվարանում եմ պատասխանել	11.7
Ընդամենը	100.0

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅԵՐԻ ՊԱՇՏՊԱՍՈՒԹՅԱՆ ՀԻՄԱԿԱԴՐԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

Հաշվի առնելով, որ բողոքարկման մեխանիզմների մասին իրազեկ են հարցվածների մոտ կեսը՝ /տես այդուսակ 30/ կարելի է ենթադրել, որ զինծառայողները իրենց հոգող հարցերը լուծելու նպատակով օգտագործում են ոչ թե բողոքարկման մեխանիզմները, այլ հրամանատարին դիմելու եւ անմիջապես նրա հետ հարցը լուծելու տարրերակը։ Նման իրավիճակի պատճառները ավելի են պարզաբանվում զինծառայողների կողմից տրված այն հարցի պատասխանները, թե ինչու չեն որեւէ հարցով դիմում զորամասի հրամանատարին /տես այդուսակ 31 և 32/: Այստեղից երևում է, որ նույնիսկ որեւէ հարցով դիմելու դեպքում զինծառայողի վիճակը կարող էր վատթարանալ՝ յուրաքանչյուր 7-ից մեկի կարծիքով։

Այդուսակ 31.

Երբևէ որևէ հարցով դիմել եք Ձեր ստորաբաժանման կամ զորամասի հրամանատարին	
Այո	46.7
Ոչ	53.3
Հնդամենը	100.0

Այդուսակ 32.

Եթե չեք դիմել, ապա ինչու	
Դրա կարիքը չեմ ունեցել	71.5
Մեզ արգելում էին անձամբ դիմել հրամանատարությանը	7.6
Դիմելու դեպքում մեր վիճակն ավելի էր վատթարանում	14.4
Իմաստ չկար ոչինչ չէր փոխվի	3.8

Վերլուծելով սոցիոլոգիական հարցման արդյունքները, պարզվում է, որ << զինված ուժերում զինծառայողների իրավունքների խախտման երկու մտահոգող խնդիր գոյություն ունի, այսինքն՝ հիմնականում նրանց բողոքները վերաբերել է նախ զինվոր-սպա ոչ կանոնադրային փոխհարաբերություններին (55.6%), և երկրորդ՝ արձակուրդ չտրամադրելուն (19.8%):

Պատահական չէ, որ զինվոր-սպա ոչ կանոնադրային փոխհարաբերությունների մասին պարբերաբար նշվում է նաև մամուլի տարբեր հրապարակումներում և սոցիալական կայքերում, որը վերաբերվում է սպաների կողմից շարքային զինծառայողի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու դեպքերին։ Չնայած որոշակի փոփոխություններին, այնուամենայնիվ շարունակում է չլուծված մնալ շատ զորամասերում կարգապահական որևէ պատասխանատվության չենթարկված զինծառայողներին արձակուրդ չտրամադրելը։ Միանշանակ է՝ արձակուրդը զինծառայողի իրավունքն է, որը հետևաբար հանդիսանում է հրամանատարի պարտականությունը։ Եվ արձակուրդից օգտվելու իրավունքը պետք է իրականացվի սոցիալական արդարության սկզբունքի հիման վրա և չկրի կամայական բնույթ։ Այս տեսակետից կարևոր նշանակություն ունի զինծառայողի իրազեկվածությունը իրիրավունքների և պարտականությունների, ինչպես նաև իրավական նորմերի վերաբերյալ։

Աղյուսակ 33.

Ինչպիսի խնդիրների էին վերաբերվում բողոքները	
Զինվոր-սպա փոխհարաբերությունների	55.6
Ոչ համաչափ պատիժների վերաբերյալ	4.8
Արձակուրդ չտրամադրելու	19.8
Կենցաղային հարցեր	6.3
Բժշկական սպասարկման-առողջապահական	0.8
Դժվարանում եմ պատասխանել	8.7
Հրաժարվում եմ պատասխանել	4.0
Ընդամենը	100.0

Իսկ զորամասի հրամանատարներին զինծառայողները դիմում են հիմնականում արձակուրդ տրամադրելու խնդրանքով /տես աղյուսակ 34/: Այսինքն՝ զինծառայողների կողմից բարձրացված հարցերը չեն առնչվում հրամանատարների գործողությունների անհամաչափությանն ու օրինականությանը:

Աղյուսակ 34.

Եթե այս ապա հիմնականում ինչ հարցերով	
Ստորաբաժանման սպաների կողմից անհարգալից վերաբերմունքի կամ այլ բռնարարքի արժանանալու դեպքում	2.9
Շարքային այլ զինծառայողների կողմից անհարգալից վերաբերմունքի կամ այլ բռնարարքի արժանանալու դեպքում	0.8
Առողջական վիճակի վատթարացման և զինվորական հոսպիտալ ուղարկելու դեպքում	6.4
Արձակուրդ գնալու դեպքում	63.0
Ժամանցի հարցերով	1.1
Կենցաղային հարցերով	4.3
Մեկ ուրիշ զինվորի հարցով	0.5
Բոլոր հարցերով	10.5
Ծառայության հետ կապված	2.4
Ժամանակին գորացրվելու հարցով	1.6
Անձնական	5.4
Դժվարանում եմ պատասխանել	1.1
Ընդամենը	100.0

Բողոքներում բարձրացված հարցերի չլուծման դեպքում զինծառայողները բողոքարկման որեւէ այլ միջոցների չեն դիմում /տես աղյուսակ 35/:

Աղյուսակ 35.

Եթե չեն լուծվել, ապա Դուք կամ Ձեր համաձառայակիցները ինչ եք/են արել	
Ոչինչ	90.3
Դիմել եմ դատարան	3.2
Դիմել եմ լավ ծանոթի մեխանիզմին	6.5
Ընդամենը	100.0

Այսպիսով, ի մի բերելով՝ կարող ենք եզրակացնել, որ գինծառայողներին հուզող հիմնական խնդիրը վերաբերում է սպաների հետ փոխհարաբերություններին, որոնց վերաբերյալ բողոքները քիչ են ներկայացվում, քանի որ ապահովված չէ նրանց պաշտպանվածությունը ենթադրյալ խախտումը կատարած իրամանատարի կողմից: Եվ հիմնականում գինծառայողները իրամանատարներին դիմում են արձակուրդի տրամադրման հարցերով:

Իհարկե, միանշանակ հետևողական անել չենք կարող, բայց և այնպես փաստ է, որ գինված ուժերում եղած «դրվագքն է» ստիպել գինծառայողներին բողոքարկել միայն բանավոր եղանակով, քանի որ տվյալ պարագայում արդեն որոշումների իրավաչափությունը իրամանատարությունը որոշել է նպատակահարմարությունից ելնելով, ինչը ոչ միշտ է դիտվում օրինականության ապահովման հիմք:

Բացի այդ, գինծառայողները իրենց խախտված իրավունքները վերականգնելու դեպքում, եթե գտնում են, որ քրեորեն հետապնդելի արարք կատարելու հետևանք է, ապա կարող են դիմել նաև իրավապահ մարմիններին, մասնավորապես ոստիկանություն և դատախազություն⁸, իսկ նշված մարմինները որոշումներն էլ հետագայում կարող էին բողոքարկել ինչպես վերադաս դատախազին, այնպես էլ դատական կարգով՝ համաձայն << քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի:

Մտահոգիչ է այն, որ նույնիսկ գինվորական ծառայություն անցած և 2012 թ. ընթացքում զորացրված գինծառայող հարցվածների կեսից քիչ պակասն է հայտնում, որ ծանոթ է գինված ուժերի կանոնակարգերին և կանոնագրքերին (տես աղյուսակ 36), մասամբ ծանոթ են մոտ 39 %-ը:

Աղյուսակ 36.

Դուք ծանոթ եք << Զինված ուժերի կանոնագրքերին եւ կանոնակարգերին	
Այո	46.8%
Մասամբ	38.9%
Ոչ	14.3%
Ընդամենը	100.0%

⁸ Այստեղ նկատի ենք ունեցել գինծառայողների՝ << ՊՆ ռազմական ոստիկանություն կամ << գինվորական դատախազություն դիմելու հնարավորությունը:

Նկատենք, որ կանոնակարգերին և կանոնագրքերին զորացրվածներից յուրաքանչյուր երեքից մեկն է ծանոթացել զորամասերում կազմակերպվող հատուկ դասընթացների ժամանակ (տես աղյուսակ 37):

Աղյուսակ 37.

Ինչպես եք ծանոթացել այդ կանոնագրքերին եւ կանոնակարգերին		
1.	Զորամասում անցկացված հատուկ դասընթացների ժամանակ	39.3%
2.	Բոլոր նշված միջոցներով	28%
3.	Սպայակազմի կողմից (ոչ դասընթացների ժամանակ)	13.8%
4.	Զինվորի գրքույկից	7%
5.	Այլ զինծառայողների միջոցով	4.6%
6.	Զորամասում անցկացված հատուկ դասընթացների ժամանակ և սպայակազմից	3.7%
7.	Զորամասում անցկացված հատուկ դասընթացների ժամանակ և այլ զինծառայողներից	2.2%
8.	Սպայակազմի կողմից (ոչ դասընթացների ժամանակ) և այլ զինծառայողներից	0.9%
9.	Դժվարանում եմ պատասխանել	0.3%
	Ընդամենը	100%

4. ՏՈՒՅՄԸ ԵՎ ԽՐԱԽՈԼՍԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

1. Տույմերի հասկացությունն ու համակարգը, դրանց տեսակների կիրառելիության արդյունավետությունը

Ինչպես ցանկացած իրավահարաբերություն, այնպես էլ ՀՀ զինված ուժերի բնագավառում առաջացող հասարակական հարաբերությունների անշեղորեն ապահովման նպատակով պետության կողմից սահմանվում են ոչ միայն վարքագծի համապարտադիր կանոններ, այլև դրանք չկատարելու համար վրա հասնող պատասխանատվության միջոցներ:

Զինված ուժերի բնագավառում զինվորական ծառայության բնականոն ընթացքն ապահովող կարևորագույն միջոցը տույմերի կիրառումն է, ինչը չի բացառում իրավական պատասխանատվության այլ միջոցների կիրառումը:

Ինչպես նախորդ ենթահարցերում, այստեղ մեկ անգամ ևս կարող ենք շեշտել, որ բնագավառը կարգավորող օրենսդրական դաշտը օժտված է բազմաթիվ խութերով, որոնք ուղեկցված են բազմիմաստ, երբեմն որևէ իրավաբանական նշանակություն չունեցող եզրույթներով: Հաշվի առնելով զինված ուժերի բնագավառը կարգավորող օրենսդրական ակտերի ընդունման ժամանակագրական մեծ տարրերությունները՝ բնականաբար օրենսդիրն այստեղ պետք է կարողանա նախկինում ընդունված ակտերը համապատասխանեցնել ժամանակի պահանջներին:

Տույմերը պատասխանատվության միջոցներ են, որոնք կիրառվում են զինծառայողների կողմից իրենց վրա դրված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում: Մինչ տույմերին անդրադառնալը, նախ մեկ դիտարկում ևս՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի⁹ համաձայն՝ սույն Կանոնագիրքը սահմանում է զինված ուժերի զինծառայողների ընդհանուր իրավունքներն ու պարտականությունները, նրանց փոխհարթերությունները, գնդի և նրա ստորաբաժանումների հիմնական պաշտոնատար անձանց պարտականությունները, ինչպես նաև ներքին կարգուկանունը:

Նույն կանոնագիրքը սահմանում է զինծառայողի իրավունքներն ու պարտականությունները, որոնք ուղղակիրեն չեն բխում ՀՀ սահմանադրության նորմերից: Այսպես. Կանոնագրքի 8-րդ հոդվածի համաձայն՝ զինծառայողների իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության բովանդակությունն ու ծավալը կախված են այն բանից, թե արդյոք նրանք զինվորական ծառայության պարտականություններ են կատարում, թե ոչ:

Զինծառայողների պարտականությունների կատարում ասելով հասկացվում է՝ մարտական գործողություններին մասնակցելը, պաշտոնեական պարտականությունների, մարտական հերթապահության կատարումը, զորավարժություններին մասնակցելը, աշխատակարգով սահմանված ծառայության ժամանակամիջոցում զորամասի տարածքում կամ, եթե դա թելադրված է ծառայության անհրաժեշտությամբ, ծառայողական գործուղման կամ բուժման մեջ գտնվելը, ծառայության վայր բուժման մեկնելը կամ վերադառնալը, զինվորական հավաքներին մասնակցելը, գերության մեջ (բացառությամբ կամավոր գերի հանձնվելու դեպքերը), պատանդի կամ ներկալվածի վիճակում գտնվելը, անհայտ բացակայությունը՝ մինչև զինծառայողին օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող ծանաչելը կամ մեռած հայտարարելը, անհատի կյանքի, առողջության, պատվի ու արժանապատվության

⁹ Կանոնագիրքը հաստատվել է «Զինված ուժերի կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքով Ազգային ժողովի կողմից 1996 թվականի դեկտեմբերի 3-ին:

պաշտպանությունը, օրինականության և իրավակարգի ապահովման գործում իրավապահ մարմիններին օգնություն ցույց տալը, զինծառայողների այլ գործողություններ, որոնք դատարանի կողմից ճանաչվել են որպես հասարակության ու պետության շահերից բխող:

Որպես զինվորական ծառայության պարտականությունները կատարող չեն ճանաչվում այն զինծառայողները, որոնք կատարում են քրեական օրենսդրությամբ նախատեսված հանրորեն վտանգավոր արարքներ:

Կանոնագրքի 9-րդ հոդվածը թվարկում է զինծառայողի հետևյալ իրավունքները. ոչ ոք իրավասու չէ սահմանափակել զինծառայողների իրավունքներն ու պարտականությունները, որ սահմանված են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենսդրությամբ:

Զինծառայողների կողմից իրենց իրավունքների օգտագործումը չպետք է վնաս հասցնի հասարակության, պետության իրավունքներին և օրինական շահերին, զինվորական ծառայությանը, ուրիշ զինծառայողների և այլ քաղաքացիների իրավունքներին:

Բոլորովին անհասկանալի է Կանոնագրքի 18-րդ հոդվածի բովանդակությունը, որի համաձայն՝ ծառայության հարցերով զինծառայողը պարտավոր է դիմել իր անմիջական պետին և հետո միայն, նրա թույլտվությամբ՝ կոչումով հաջորդ ավագ պետին: Անձնական հարցերով ևս զինծառայողը պետք է դիմի անմիջական պետին, իսկ հաստուկ անհրաժեշտության դեպքում՝ ավագ պետին: Առաջարկությունների, դիմումների և բողոքների (գանգատների) դեպքում զինծառայողը դեկավարվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագրքի դրույթներով:

Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ մարդն ազատ է իր հայեցողությամբ խախտված իրավունքները վերականգնելու նպատակով դիմել համապատասխան մարմիններին, ապա քննարկվող հոդվածի առաջին մասը չի բխում այդ սկզբունքից, իսկ ինչ վերաբերում է երկրորդ մասին, ապա հարկ է նշել, որ << զինված ուժերի կարգապահական կանոնագրքի դրույթներն առանձնապես չեն կարգավորում զինծառայողների առաջարկությունների, դիմումների և բողոքների քննարկման կարգը, հետևաբար, կանոնագրքի այս դրույթն իրականում չի կիրառվելու:

Առաջարկում ենք վերանայել Կանոնագրքի սույն հոդվածը և դրանում շարադրվածը համապատասխանեցնել սահմանադրական նորմերին: Կամ, ինչ է նշանակում միայն անմիջական պետի թույլտվությամբ կարող եք դիմել հաջորդ ավագ պետին: Իսկ եթե զինծառայողը հենց դժգոհում է իր անմիջական սպայից, արդյոք վերջինս թույլ կտա որ շարքային զինծառայողը դիմի հաջորդ ավագ պետին: Մեն գտնում ենք, որ մարդու իրավունքների խախտման դեպքեր, ինչու չէ նաև սպայի կողմից արժանապատվությունը նվաստացնելու արժանանալու հիմնական պատճառներից մեկն է:

Կանոնագրքը նախատեսում է նաև պատասխանատվության որոշ դրույթներ, որոնց համաձայն՝ բոլոր զինծառայողները, անկախ զինվորական կոչումից ու պաշտոնից, հավասար են օրենքի առնչությամբ և կրում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սահմանված պատասխանատվություն՝ հաշվի առնելով նրանց իրավական վիճակի առանձնահատկությունները:

Հասարակական ներգործության միջոցներ կարող են գործադրվել զինվորական կարգապահության և հասարակական կարգի խախտման հետ կապված զանցանքների համար: Զանցանքների քննարկումը կատարվում է. ենթասպաններինը՝ ժողովներում, սպաներինը՝ սպայական ժողովներում: Բացի դրանից, սպաների զանցանքները կարող են քննարկվել պատվո դատարանների կողմից:

Թե՛ իրավական վերլուծությունները, և թե՛ իրավակիրառ պրակտիկան փաստում են, որ նշված պատվո դատարաններ որպես այդպիսին գոյություն չունեն, իսկ թվարկված ժողովները զանցանքների քննարկման առումով ամբողջապես իրականության հետ աղերսներ չունեն: Գտնում ենք, որ նշված դրույթը նույնպես վերանայման ու լրամշակման կարիք ունի:

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅԵՐԻ ՊԱՇՏՊԱՍՈՐՅԱԼ ՀԻՄԱԽԱՂԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱԼ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

Զինծառայողների կողմից կատարված հակաիրավական գործողությունների համար օրենսդիրը նախատեսել է պատասխանատվության հետևյալ տեսակները.

Կարգապահական պատասխանատվություն. զինծառայողները կրում են Հայաստանի Հանրապետության գինված ուժերի Կարգապահական կանոնագրքով սահմանված կարգով՝ զինվորական կարգապահության խախտման համար:

Վարչական պատասխանատվություն. զինծառայողները կրում են ընդհանուր հիմունքներով՝ վարչական իրավախսութումների մասին օրենսդրությանը համապատասխան:

Քաղաքացիաիրավական պատասխանատվություն. զինծառայողները կրում են քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված պարտականությունները չկատարելու կամ անբարեխիղ կատարելու, պետությանը, իրավաբանական անձանց, քաղաքացիներին վնաս հասցնելու և օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

Նյութական պատասխանատվություն. զինծառայողները կրում են զինվորական ծառայության կատարման ժամանակ պետությանը հասցված նյութական վնասի համար՝ օրենքով սահմանված կարգով:

Քրեական պատասխանատվություն. զինծառայողները կրում են հանցագործություն կատարելու համար՝ ՀՀ քրեական օրենսդրությանը համապատասխան:

Թույլ տված իրավախսութումների համար զինծառայողները, որպես կանոն, ենթարկվում են մեկ տեսակի պատասխանատվության: Իսկ իրավախսութում թույլ տալու կապակցությամբ կարգապահական տույժի ենթարկված զինծառայողները չեն ազատվում այդ իրավախսախտման համար քրեական պատասխանատվությունից:

Նյութական վնաս պատճառելու հետ կապված իրավախսութում թույլ տալու դեպքում զինծառայողները հատուցում են վնասը, անկախ պատասխանատվության այլ ձևերի ենթարկվելուց կամ հասարակական ներգործության միջոցների գործադրությունից:

Զինծառայողների նկատմամբ հասարակական ներգործության միջոցներ կարող են կիրառվել զինվորական կարգապահության և հասարակական կարգի խախտումների հետ կապված զանցանքների համար: Պատասխանատվության ենթարկելիս չի թույլատրվում վիրավորել զինծառայողների պատիվն ու արժանապատվությունը:

Ինչ վերաբերում է զինծառայողներին տրվող կարգապահական տույժերին, անհրաժեշտ է նշել, որ կարգապահական տույժը համարվում է պատասխանատվության միջոց և կիրառվում է՝ նպատակ ունենալով իրավախսության կատարած անձին դաստիարակել զինվորական ծառայության կանոնագրքերի ու այլ օրենքների պահանջները պահպանելու, համակեցության կանոնները հարգելու ոգով, ինչպես նաև կանխել ինչպես իր իսկ՝ իրավախսախի, այնպես էլ այլ անձի կողմից նոր իրավախսութումների կատարումը:

Այստեղ շատ կարևոր է, որ զինծառայողի կողմից կարգապահական խախտում թույլ տալու դեպքում հրամանատարը (պետք) պարտավոր է հիշեցնել զինծառայողի պարտականություններն ու զինվորական պարտքը և կիրառել կարգապահական տույժ: Ընդ որում, կարգապահական տույժը, որպես կարգապահության ամրապնդման ու դաստիարակման միջոց, պետք է համապատասխանի կարգապահական խախտման ծանրությանը և զինծառայողի մեղքի աստիճանին:

Զինծառայողին նոյն կարգապահական խախտման համար մեկից ավելի կարգապահական տույժ չի կարող տրվել:

Օրենսդիրը տալիս է նաև կարգապահական խախտման հասկացությունը, ըստ որի, կարգապահական խախտում (զանցանք) է համարվում զինվորական ծառայության կարգի դեմ ուսնագործ հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործութ-

յունը, որի համար սույն օրենքով նախատեսված է կարգապահական պատասխանատվություն: Կարգապահական խախտում է համարվում նաև սպայական կազմի գինծառայողի կողմից հաշվետու կամ ուսումնական տարվա արդյունքներով ծառայողական գործառույթները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ սպայի պատվի կանոնների խախտումը: Սպայի պատվի կանոնները սահմանվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանով:

Սույն օրենքով նախատեսված իրավախախտումների համար կարգապահական պատասխանատվություն առաջանում է անկախ այն հանգամանքից, որ այդ խախտումները իրենց բնույթով առաջացնում են քրեական պատասխանատվություն:

Վարչական իրավախախտում թույլ տված գինծառայողները պատասխանատվության են ենթարկվում Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված կարգով:

Համաձայն «Զինված ուժերի կարգապահական կանոնագիրը» <<օրենքի 23-րդ հոդվածի՝ շարքային կազմի և կրտսեր ենթասպայական կազմի պարտադիր գինծառայողներին կարող են տրվել հետևյալ կարգապահական տույժերը.

- 1) նկատողություն
- 2) խիստ նկատողություն
- 3) զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում՝ մինչև 1 ամիս ժամկետով
- 4) աշխատանքի արտահերթ վերակարգի նշանակում՝ մինչև 5 վերակարգ (միայն շարքային կազմին)
- 5) հիմնական արձակուրդի տրման հետաձգում՝ մեկ ամսից մինչև երեք ամիս ժամկետով
- 6) կարգապահական վաշտ ուղարկելը՝ տասն օրից մինչև մեկ ամիս ժամկետով
- 7) գերատեսչական կրծքանշանից զրկում
- 8) պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով
- 9) զինվորական կոչման իջեցում՝ մեկ աստիճանով
- 10) հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետի կասեցում՝ մեկ ամսից մինչև վեց ամիս ժամկետով:

Կին զինծառայողների նկատմամբ չեն կիրառվում սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ և 6-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերը:

Վերը նշված տույժի տեսակներից ոչ բոլորն են կիրառելի գործնականում, ավելին, թվարկված ներից որոշների վերաբերյալ կան նաև որոշ նկատառումներ: Նախ մինչև այդ նկատառումներին անդրադառնալը, հարկ է նշել, որ նոր կարգապահական կանոնագրքի ընդունմամբ, իբր ժողովրավարացնելու նպատակով <<զինված ուժերում կարգապահական կալանք տույժի տեսակին փոխարինելու է եկել կարգապահական վաշտում պահելը տույժը, ինչի արդյունավետության նույնիսկ սաղմերը տեսանելի չեն:

Բացի այդ, Կանոնագիրը սահմանում է, թե ինչպիսի տույժեր կարելի է կիրառել՝ կախված խախտում թույլ տված զինծառայողի կարգավիճակից:

Տույժերի ցանկից անհրաժեշտ է առանձնացնել հետևյալները՝ զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում՝ մինչև 1 ամիս ժամկետով, աշխատանքի արտահերթ վերակարգի նշանակում՝ մինչև 5 վերակարգ (միայն շարքային կազմին), կարգապահական վաշտ ուղարկելը՝ տասն օրից մինչև մեկ ամիս ժամկետով. զինվորական կոչման իջեցում՝ մեկ աստիճանով և այլն: Եվ անկախ նրանից, թե ներպետական օրենսդրությամբ «կարգապահական կալանք» եզրույթը փոխարինվել է «կարգապահական վաշտում պահել» եզրույթով, կամ ինչպիսի անվանում է տրվում կարգապահական տույժի մյուս տեսակներին, այնուամենայնիվ, Մարդու իրավունքների եվրոպական

դատարանը դրանք դիտում է պատժիչ բնույթի, որոնց դեպքում կիրառելի է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի 5-7-րդ հոդվածների լուսի ներքո, և պարտադիր կերպով պետք է հաշվի առնեն սահմանված այնպիսի երաշխիքներ, ինպիսիք են իրավական որոշակիությունը, որոշ տույժերում դատարանների ներգրավումը, արդար դատաքննությունը և այլն:

Իրավական որոշակիությունը նախ ենթադրում է զինծառայողի պարտականությունների հստակ սահմանում, որոնց չկատարումը առաջացնում է կարգապահական պատասխանատվություն: Դրանք չպետք է տեղի դատարանում մեկնաբանության, ընդ որում, կարգապահական զանցանքի բովանդակությունը կարող է հստակ ամրագրվել ինչպես օրենքով (sensus largo), այնպես էլ՝ վեր հանվել հստակեցվել դատական պրակտիկայի կամ իրամանատարների կողմից կիրառելի կարգապահական քաղաքականության վերլուծության արդյունքում¹⁰:

Իրավական որոշակիության սկզբունքը վերաբերում է նաև կարգապահական տույժերի բովանդակությանը, դրանց կիրառման անհրաժեշտության, կիրառվող տույժի և կատարված իրավախախտման համարժեքության քննարկմանը: Իսկ նման իրավիճակներն առաջանում են, եթե զինծառայողի կատարած գործողություններին տրվում են գնահատողական բնույթի հասկացություններ, որոնք պետք է որևէ իրավական ակտի մակարդակով ամրագրված լինեն: Օրինակ, ինչ է նշանակում ավելի խստացնող պատիժ, եթե նրա գործողությունները հանգեցրել են կարգուկանոնի էական խախտման: Այստեղ անհրաժեշտ է հստակեցնել՝ ինչ ենք հասկանում կարգուկանոնի էական խախտում, էական ասելով ինչ ենք հասկանում և այլն:

Հաջորդ խնդիրը վերաբերում է կարգապահական վաշտում պահելու տույժին: Նոր Կանոնագրքի ընդունումից հետո կարգապահական վաշտում պահելու կիրառելիության հետ կապված խնդիրները բազմաթիվ են: Նախ սկսենք նրանից, որ կարգապահական վաշտ կոչվածը այօր շարունակում է գործել նոյն <<ՊՆ ՌՈ Նախկին մեկուսարաններում, բացի այդ, սահմանափակ ազատության գոյությունը նույնպես Եվրոպական Կոնվենցիայի և սահմանադրական նորմի խախտում է, քանի որ ազատությունից գրեթե հետ կապված պատիժ կարող է նշանակել դատարանը: Ենթադրվում էր, որ կարգապահական վաշտում գտնվող զինծառայողները էականորեն կգտնեին տարբերություններ իրենց հիմնական գորամասում և նշված վաշտում իրականացվող ծառայությունների միջև: Կանոնագրքի դրույթներն ուղղակի անտրամաբանական են ու պրակտիկայում ոչ կիրառելի:

Համաձայն <<զինված ուժարկելը» տույժը տրվում է մեկից ավելի անգամ դիտավորությամբ կարգապահական խախտումներ թույլ տալու համար կարգապահական տույժերի ենթարկված կամ մեկ կոպիտ խախտում թույլ տված զինծառայողին, կիրառվում է հրամանով և կարող է հայտարարվել անհատապես կամ համապատասխան շարքի առաջ: «Կարգապահական վաշտ ուղարկելը» տույժ տրվում է զորամասի հրամանատարից ոչ ցածր պաշտոն զբաղեցնող հրամանատարների (պետերի) հրամանով: «Կարգապահական վաշտ ուղարկելը» տույժի ենթարկված զինծառայողներն ուղարկվում են համապատասխան կարգապահական վաշտեր, որոնք ստեղծվում են կայազորային սկզբունքով: Կարգապահական վաշտերում իրականացվում է օրվա խստացված կարգացուցակով ծառայություն: Կարգապահական վաշտերի ցանկը և օրվա խստացված կարգացուցակը սահմանվում են Հայաստա-

¹⁰ Այդ մասին մանրամասն տես, Մարդու իրավունքների պաշտպանությունը <<Զինված ուժերում կարգապահական քաղաքականություն իրականացնելիս, Արտաերթ Զեկույց (<<մարդու իրավունքների պաշտպան»), Երևան 2009, էջ 6-8: Սույն ուսումնասիրությունը կատարվել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի փորձագետների և <<Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից համատեղ ստեղծված աշխատանքային խմբի ջանքերի շնորհիվ՝ ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի և <<Մարդու իրավունքների պաշտպանի միջև 2008 թվականի հոկտեմբերի 6-ին կնքված հուշագրի շրջանակներում:

Նի Հանրապետության պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանով:

Նախ, այսօրվա դրությամբ դեռևս որևէ «խստացված» ծառայություն չի իրականացվում, բայց այդ, որքանով է նպատակահարմար անձին կարգապահական վաշտ ուղարկել ընդամենը զորամասի հրամանատարի հրամանով, այն դեպքում, երբ արակտիկայում վերջիններս պահվում են մեկուսարանային խցերում: Վերոնշյալ պայմանների հաշվառմամբ, գտնում ենք, որ «կարգապահական վաշտ ուղարկելը» հակասահմանադրական տույժի տեսակ է, իսկ մարդու իրավունքների տեսանկյունից իրենցում խախտման մեծ ռիսկայություն է պարունակում: Եվ ի վերջո, մինչ օրս պաշտպանության նախարարի նորմատիվ հրամաններ գոյություն չունեն, որոնք կկարգավորեն կարգապահական վաշտում ծառայություն իրականացնող գինծառայողները: Մեկուսացումը և պահումը կարգապահական մեկուսարանում իրենից ներկայացնում է ազատազրկման յուրօրինակ դրսնորում, ինչը դեռևս 1976 թվականին հավաստվել է Մարդու իրավունքների Եվրոպական հանձնաժողովի կողմից (Engel/ Netherlands, 8 հունիս, 1976թ.):

Մեր ուսումնասիրությունները վկայում են, որ Կանոնագրքով նախատեսված տույժի տեսակներից առավելապես կիրառվում են կամ նկատողությունը, կամ էլ կարգապահական վաշտ ուղարկելը: Բայց այդ, տույժեր նշանակելու համար կարևոր նախապայման է ծառայողական քննության անցկացումն ու պատշաճ նյութերի նախապատրաստումը, որոնց արդյունքում նշանակված տույժը նախ պետք է լինի արդարացի, բայց ոչ չափազանց մեղմ, հակառակ դեպքում անիմաստ կդառնա կիրառվող տույժի տեսակը և գործ կլինի կանխարգելիչ գործառույթից. իսկ կարգապահական տույժն էլ պետք է կիրառվի ժամանակին:

Կարգապահական տույժերի նշանակման մասին որոշումները ցույց են տալիս, որ հրամանատարները չեն հիմնավորում տույժի անհրաժեշտությունը, չկա որևէ նշում, թե ինչու է ընտրված տույժի տեսակը համապատասխանում զանցանքի ծանրությանը և մեղքի աստիճանին: Մեր խորին համոզմամբ, ծառայողական քննությամբ կարգապահական տույժ նշանակելու գործընթացը բխում է իրավականության սկզբունքից, չնայած, ի տարբերություն անցած վերջին տարիներին, առավել տարածում է ստացել այդ գործընթացը սկսած 2011 թվականից:

2. << զինված ուժերում հաջախ կիրառվող տույժերը ըստ սոցիոլոգիական հարցման տվյալների

Չնայած << զինված ուժերի կարգապահական կանոնագիրքը նախատեսում է մոտ մեկ տասնյակի տույժի տեսակներ, այնուամենայնիվ << զինված ուժերում իրենց հաջախակիության և արդյունավետության առումով առանձնանում են որոշ տույժի տեսակներ: Դրանք հիմնականում պայմանավորված են այն հանգամանքով, որ տույժ նշանակող հրամանատարական կազմը պատշաճ կարգով քննության չառնելով կատարված խախտումը, բնականաբար չի քննարկում նշված տույժերից որն է վերաբերելի, չնայած կանոնագրքի ընդհանուր սկզբունքները պետք է պահպանվեն:

Տույժի վերացման գործընթացը նախատեսված է << զինված ուժերի կարգապահական կանոնագրքով, որի 30-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ զինծառայողները համարվում են կարգապահական տույժ չունեցող՝ կարգապահական տույժը կրելու ժամկետը լրանալու կամ որպես խրախուսանք կարգապահական տույժը հանվելու դեպքում:

Կանոնագիրքը միաժամանակ ամրագրում է, որ կարգապահական տույժը կրելու ժամկետը համարվում է լրացած՝

1) «նկատողություն» կարգապահական տույժի տրման օրվանից 3 ամիս հետո

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅՈՒՆԻ ՊԱՇՏՊԱՍՈՒԹՅԱՆ ՀԻՄԱԿՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺՐՈՒՄ

- 2) «խիստ նկատողություն» կարգապահական տույժի տրման օրվանից 4 ամիս հետո
- 3) «զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում» կարգապահական տույժով սահմանված ժամկետը լրանալուց հետո
- 4) «աշխատանքի արտահերթ վերակարգի նշանակում» կարգապահական տույժի տրման օրվանից 2 ամիս հետո
- 5) «հիմնական արձակուրդի տրման հետաձգում» կարգապահական տույժով սահմանված ժամկետը լրանալուց հետո
- 6) «կարգապահական վաշտ ուղարկելը» տույժի տրման օրվանից 6 ամիս հետո
- 7) «գերատեսչական կրծքանշանից զրկում» կարգապահական տույժի տրման օրվանից 6 ամիս հետո
- 8) «նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին» կարգապահական տույժի տրման օրվանից 1 տարի հետո
- 9) «պաշտոնի իջեցում մեկ աստիճանով» տույժի տրման օրվանից 1 տարի հետո.
- 10) «զինվորական կոչման իջեցում մեկ աստիճանով» կարգապահական տույժի տրման օրվանից 1 տարի հետո.
- 11) «հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետը կասեցնելը» կարգապահական տույժով սահմանված ժամկետը լրանալուց հետո:

Սույն հետազոտության շրջանակներում անցկացված սոցիոլոգիական հարցումների արդյունքում պարզվել է հետևյալը. բանակում կարգապահության մակարդակը որոշելու նպատակով հարցաշարում ներառված է այն հարցը, թե արդյոք հարցման ենթարկվածը ծառայության ընթացքում ենթարկվել է տույժի, դրական պատասխան են տվել հարցվածների **32.6 %**-ը, իսկ **67.4 -ը** որևէ տույժի չի ենթարկվել (տես աղյուսակ 38.1):

Աղյուսակ 38.1.

Արդյոք ծառայության ընթացքում Դուք ենթարկվել եք տույժերի	
Այո	67.4%
Ոչ	32.6%
Հնդամենը	100.0%

Ընդ որում, առավել տարածված է նկատողության և խիստ նկատողության հայտարարում կարգապահական տույժի տեսակներ՝ 61.8 %, (տես աղյուսակ 38.2): Մտահոգիչ է այն, որ յուրաքանչյուր 10-ից մեկը ենթարկվել է «կարգապահական վաշտ ուղարկելու» տույժին (10 օրից մինչև 1 ամիս տևողությամբ): Ցուրաքանչյուր 6-ից 1-ը ենթարկվել է կարգապահական տույժի՝ արտահերթ մինչև 5 վերակարգի նշանակման տեսակի:

Աղյուսակ 38.2

Ծառայության ընթացքում Դուք ենթարկվել եք ինչպիսի տույժերի	
1.	Նկատողություն
2.	Խիստ նկատողություն
3.	Աշխատանքի արտահերթ վերակարգի նշանակում՝ մինչև 5 վերակարգ

4.	Կարգապահական վաշտ ուղարկելը՝ տասն օրից մինչև մեկ ամիս ժամկետով	11%
5.	Զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում՝ մինչև 1 ամիս ժամկետով	4.9%
6.	Հիմնական արձակուրդի տրման հետաձգում՝ մեկ ամսից մինչև երեք ամիս ժամկետով	3.3%
7.	Զինվորական կոչման իջեցում՝ մեկ աստիճանով	1.5%
8.	Պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով	1%
9.	Այլ	0.6%
	Ընդամենը	100%

Տույժերի կիրառման պատճառ է հանդիսանում յուրաքանչյուր 5-ից մեկի կարծիքով՝ միջանձնային կոնֆլիկտները, կարգապահական կանոնների խախտումները (անկարգապահություն, շարքից ուշանալ, արտաքին տեսքի խախտում, մարտական հերթապահության կանոնների խախտում, կայազորային կանոնների խախտում, հեռախոսով խոսելու համար և այլն) կազմում են 30.8 % (տես աղյուսակ 39), վատ ծառայության կամ հրամանների չկատարման պատճառով (25.3 %):

Աղյուսակ 39.

1.	Վատ ծառայության/հրամանի չկատարում	25.3%
2.	Կոնֆլիկտի/կռիվ անելու համար	20.6%
3.	Զորամասի ինքնակամ լրման	9.1%
4.	Անկարգապահության համար	9.1%
5.	Հրաժարվում են պատասխանել	8.7%
6.	Շարքից ուշանալու/բացակայելու համար	6.3%
7.	Արտաքին տեսքի խախտման	5.9%
8.	Դիրքերում կամ հերթապահության ընթացքում քնելու համար	5.1%
9.	Դժվարանում են պատասխանել	2.4%
10.	Անհիմն պատճառով	2%
11.	Կայազորային պահակային կանոնները խախտելու	1.6%
12.	Հեռախոսով խոսելու համար	1.6%
13.	Արձակուրդից ուշ գորամաս վերադառնալու համար	1.2%
14.	Ոգելիչ խմիչք օգտագործելու համար	1.2%
	Ընդամենը	100%

Միևնույն ժամանակ հարցման մասնակիցների մոտ 57 %-ը հայտնում է, որ ծառայության ընթացքում արժանացել է խրախուսանքի (տես աղյուսակ 40):

Աղյուսակ 40.

ՀՀ զինված ուժերում գինծառայության ընթացքում արդյոք Դուք ստացել եք խրախուսում	
Այո	56.9%
Ոչ	43.1%
Ընդամենը	100.0%

Տվյալների համադրումից տեսնում ենք, որ յուրաքանչյուր 3-ից մեկը ծառայության ընթացքում ենթարկվել է տույժի, միևնույն ժամանակ խրախուսանքները տրամադրվել են կեսից փոքր-ինչ ավելիին: Հարցվածների մոտ 93 %-ը օգտվել է արձակուրդից, այսինքն՝ կարգապահական տույժերը ոչ բոլոր դեպքերում են ազդել օրենքով սահմանված հերթական արձակուրդից օգտվելու իրավունքի վրա: Միևնույն ժամանակ տույժերի նման մեծ քանակի դեպքում ինչ ազդեցություն են ունեցել խրախուսանքները մնում է անհասկանալի: Հատկապես, եթե հաշվի առնենք, որ միայն խրախուսանք ստացածների 3.6 %-ն է հայտնում սահմանված կարգապահական տույժի վերացման մասին (տես աղյուսակ 41):

Աղյուսակ 41.

ՀՀ զինված ուժերում գինծառայության ընթացքում ինչպիսի խրախուսում եք Դուք ստացել	
1.	Ծնորհակալության հայտարարում
2.	Զինվորական պարտականությունների օրինակելի կատարման և ստացած խրախուսանքների մասին գինծառայողի ընտանիքին տեղեկացում
3.	Լրացուցիչ արձակուրդի տրամադրում
4.	Գերատեսչական կրծքանշաններով պարզեցում
5.	Գերատեսչական պատվոգրով պարզեցում
6.	Արժեքավոր նվերով կամ միանվագ գումարով պարզեցում
7.	Զորամասի տեղաբաշխման վայրից արտահերթ արձակում
8.	Հաստիքով նախատեսվածից մեկ աստիճանով բարձր հերթական զինվորական կոչման շնորհում
9.	Վաղաժամկետ հերթական զինվորական կոչման շնորհում
	Սահմանված կարգապահական տույժի վերացում
10.	Գերատեսչական մեղալներով պարզեցում
11.	Զորամասի բացված մարտական դրոշի մոտ գինծառայողի լուսանկարում
12.	Զորամասի պատվո գրքում գինծառայողի լուսանկարի գետեղում և անվան, հայրանվան ու ազգանվան գրառում
13.	Այլ
	Ընդամենը

Այն հրամանատարները, ովքեր գրավոր հրամաններ տալու իրավասություն չունեն, ենթակա գինծառայողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու դեպքում ոչ ուշ, քան 1-օրյա ժամկետում, կիրառված տույժի, կարգապահական խախտման բնույթի, տվյալ կարգապահական տույժը

կիրառելու հիմնավորվածության և զինծառայողի մեղքի աստիճանի վերաբերյալ տեղեկատվությամբ գրառում են կատարում զինծառայողի հաշվառման (ծառայողական) քարտում: Իսկ նշված մատյան-ները, չնայած որևէ գաղտիք չպարունակող տեղեկություններ են, այնուամենայնիվ հասարակության լայն զանգվածին ոչ հասանելի են և պարզ չեն, առդյոք նշված սպաները նման գրառումներ կատարում են թե ոչ:

Հարկ է նշել, որ երբեմն տույժ նշանակվում է այն զինծառայողների նկատմամբ, ովքեր ականատես լինելով կամ չլինելով զորամասում կատարված հանցագործությանը, նախաքննության կամ հետաքննության մարմնի պահանջով, իբր խախտում թույլ տալու պատճառաբանությամբ զինծառայողի նկատմամբ կիրառում էին կարգապահական կալանք և մեկուսարանում գտնվելու ընթացքում արդեն քննիչը կամ հետաքննիչը փորձում է «աշխատել» իրավախախտ զինծառայողի հետ, որը հանդիսանում է մարդու իրավունքների կոպիտ խախտում:

Հարցվածներից 9.1 %-ը տույժի առաջադրման պատճառ է նշել անկարգապահությունը, և յուրաքանչյուր 11-ից մեկը՝ զորամասը ինքնակամ լրելու պատճառը: Սակայն, հարցվող յուրաքանչյուր 3-ից մեկն է նշել, որ լրել է զորամասի տարածքը: Այսինքն, ինքնակամ լրողների թիվը մոտ 3 անգամ ավելի մեծ է, (տես աղյուսակ 42.1) քան այդ հիմքով կարգապահական տույժի ենթարկվածների թիվը:

Աղյուսակ 42. 1

Երբևէ զորամասը ինքնակամ լրել եք	
Այո	29.2
Ոչ	69.3
Դժվարանում եմ պատասխանել	0.3
Հրաժարվում եմ պատասխանել	1.3
Ընդամենը	100.0

Զորացրվածները զորամասի տարածքը ինքնակամ լրելու առաջին պատճառ են համարել ընտանեկան պատճառները և կարոտը: (տես աղյուսակ 42.2):

Յուրաքանչյուր 5-ից մեկը հայտնում է, որ ցանկացել է հանդիպել ընկերներին:

Անձնական կարիքների և ժամանցային պատճառներով զորամասը լրել են հարցվողների 28.1 %-ը: Ի դեպ նշենք, որ սպաների կողմից ձնշումների և ոչ կանոնադրային վերաբերմունքի պատճառով զոչամասը ինքանակամ լրելու մասին նշում են հարցվողների միայն 1.3 %-ը: Հատկանշական է, որ այս հարցին հրաժարվել են պատասխանել 7.9 %-ը:

Աղյուսակ 42.2.

Ինչ պատճառով եք ինքնակամ լրել զորամասը	
Ընտանեկան պատճառով (կարոտ)	36.4
Ընկերների հետ հանդիպելու պատճառով	21.8
Խանութից գնումներ կատարելու	13.0
Զբոսնելու, հանգստանալու համար	13.4
Բժշկի մոտ գնալու համար	0.4

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅՈՒՆԻ ՊԱՇՏՊԱՍՈՒԹՅԱՆ ՀԻՄԱԿԱԴՐՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

Խնջոյքի, ձաշկերույթի մասնակցելու համար	1.7
Սպայակազմի կողմից ձնշումների և ոչ կանոնադրային վերաբերմունքի	1.3
Դժվարանում եմ պատասխանել	4.2
Հրաժարվում եմ պատասխանել	7.9
Ընդամենը	100.0

Զինծառայողների նկատմամբ տույժի միջոցներ կիրառելիս պետք է հաշվի առնել, որ իրավախախտ զինծառայողի նկատմամբ նախ պետք է կիրառության մեջ դրվեն համոզման մեթոդը և միայն դրա անարդյունավետության դեպքում կիրառեն հարկադրանքի մեթոդը, որը դրսնորվում է տարբեր տույժերի տեսքով:

Հաշվի առնելով, որ հարցման ենթարկվածները 2012 թվականին զորացրված զինծառայողներն են և նկատի ունենալով, որ << զինված ուժերի կարգապահական կանոնագիրն ընդունվել է 2012 թ. մարտին՝ հետևաբար ծառայության սկզբնական շրջանում դեռևս կիրառվել է կարգապահական կալանքը: Այդ պատճառով հարցաշարում առկա հարցերի մի մասը վերաբերել է կարգապահական կալանքի կիրառմանը, դրա բողոքարկման և արդյունավետությանը:

Ի տարբերություն կարգապահական կալանքի, կարգապահական վաշտում «պատիժ» կրած զինծառայողները այդքան էլ դժգոհություններ չեն ներկայացրել, իսկ դրա պատճառներից մեկն էլ այն է, որ հարցվածների մեծ մասի վրա կիրառված է եղել կարգապահական կանոնադրության դրույթները:

Հարցվածների ընդամենը **8%-ն** է ծառայության ընթացքում ենթարկվել կարգապահական կալանքի (տես աղյուսակ 43.1): Իսկ պատճառները եղել են տարբեր (տես աղյուսակ 43.2), որոնցից մի մասի համար նման տույժի ենթարկվելը դիտում ենք ոչ համաշափ պատժի նշանակում: Օրինակ, Զորամասը ինքնակամ լրելու /30.6%/ , կովելու և վիճաբանելու /37.8%/ պատճառներից մինչև ոգելից խմիչք օգտագործելու համար /8.1%/ և ոչ շարային կեցվածքի համար /12.9%/: Նշենք, որ կարգապահական կալանքի են ենթարկվել նաև սպաների կողմից ներքին ծառայողական կանոնների դեմ ընդվզելու պատճառով /3.2%/:

Համադրելով աղյուսակ 42.1 և 43.1-ի տվյալները՝ տեսնում ենք, որ զորամասը ինքնակամ լրելու մասին հայտնել է յուրաքանչյուր 3 զինծառայողից 1-ը, սակայն կարգապահական կալանքի ենթարկվել է ընդհանուր հարցվողների 8%-ը: Միևնույն ժամանակ, զորամասը ինքնակամ լրելու հիմքով կարգապահական կալանքի ենթարկվածները՝ թվով 19 հարցվող, կազմում է ընդհանուր հարցվածների ընդամենը 2%-ը: Այսինքն զորամասը ինքնակամ լրած զինծառայողներից 10-ից մեկն է ենթարկվել կարգապահական կալանքի:

Աղյուսակ 43.1

Դուք << զինված ուժերում ծառայության ընթացքում ենթարկվել եք կարգապահական կալանքի	
Այո	8.0
Ոչ	92.0
Ընդամենը	100.0

Մտահոգիչ է ոչ շարային կեցվածքի հիմքով կարգապահական կալանքի ենթարկելու հանգամանքը՝ յուրաքանչյուր 8-ից մեկը /տես աղյուսակ 43 ա/: Ինչպես նաև սպայի կողմից ներքին ծա-

ուայողական կանոների խախտման դեմ ընդվզելու հիմքով կարգապահական կալանքի կիրառման պրակտիկան: Այսինքն՝ կարգապահական կալանքը որոշ դեպքերում կիրառվել է անհամաշափ՝ յուրաքանչյուր 6-ից մեկի դեպքում:

Աղյուսակ 43.2.

Ինչի համար եք Դուք ենթարկվել կարգապահական կալանքի	
Զորամասը ինքնակամ լրելու	30.6
Կովելու/վիճաբանելու համար	38.7
Ոգելից խմիչք օգտագործելու համար	8.1
Ոչ շարային կեցվածքի	12.9
Սպայի կողմից ՆԾԿ խախտման դեմ ընդվզելու	3.2
Ազատ արձակումից զորամաս ուշ վերադառնալու համար	1.6
Հրաժարվում եմ պատասխանել	4.8
Ընդամենը	100.0

Դիտարկելով կարգապահական կալանքի կրման վայրերը՝ /տես աղյուսակ 44/ տեսնում ենք, որ կարգապահական կալանքի ենթարկվածների միայն 5-ից մեկն է այն կրել կարգապահական վաշտում:

Աղյուսակ 44.

Որտեղ եք կրել կարգապահական կալանքը	
Զորամասում	40.3
ՌՈ (ռազմական ոստիկանություն) բաժնում	33.9
ՌՈ վարչության կարգապահական վաշտում	19.4
Զորամասում և ՌՈ բաժնում	4.8
Կորպուսում	1.6
Ընդամենը	100.0

Աղյուսակի տվյալներից առավել տարօրինակ է զորամասում կարգապահական կալանք կրելը:

Չնայած ներպետական օրենսդրությամբ ազատությունից փաստացի գրկելը և այդ թվում նախկինում կարգապահական կալանք նշանակելը կարող էր տրվել որպես տույժի տեսակ զորամասի հրամանատարի պաշտոնից ոչ ցածր զինվորականի կողմից, այնուամենայնիվ ըստ հարցվածների՝ կարգապահական կալանքի են ենթարկվել ջոկի, դասակի հրամանատարի տեղակալի, բժշկի, վաշտի ավագի, դասակի հրամանատարի և այլնի կողմից, ինչն ակնհայտ խախտում է, ինչպես նաև կոռուպցիա ծնող պատճառ: Հարցվածների մեծ մասի պնդմամբ՝ կարգապահական կալանքի ենթարկվել են իրավասու հրամանատարական կազմի կողմից, այնուամենայնիվ, մոտ 30 %-ի դեպքում կալանք նշանակող սպաները խախտել են օրենսդրության պահանջը, որը պետք է հանդիսանա <<ՊՆ ռազմական ոստիկանության քննության առարկա»:

Կարգապահական կալանք կրելու մասին որոշումը բողոքարկել է հարցման ենթարկվածների միայն 8%-ը, կալանքի ենթարկված զինծառայողների 91.9%-ը կարգապահական կալանք կրելու մասին որոշումը չեն բողոքարկել /տես աղյուսակ 45/, իսկ բողոքարկողների շուրջ 60%-ը դիմել է վերա-

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅՈՒՆԻ ՊԱՇՏՊԱՍՈՂՅԱՅ ՀԻՄԱԽԱԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՂՅԱՅ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

դաս հրամանատարին, **20%-ը՝** դատարան, և **20%-ը%-ը՝** դիմել է «լավ ծանոթի կամ փողի»:

Աղյուսակ 45.

Բողոքարկել եք արդյոք կարգապահական կալանք կրելու մասին որոշումը	
Այո	8.1
Ոչ	91.9
Ընդամենը	100.0

Մինչդեռ ինչպես նշել ենք վերևում, կարգապահական կալանքը կիրառվել է անահամաչափ: Բողոքարկածներ գերակշիռ մասը հայտնում են, որ նախատեսվածից քիչ են կրել կարգապահական կալանքը /տես աղյուսակ 46/:

Աղյուսակ 46.

Ինչ արդյունքի եք հասել՝ բողոքարկելով	
Ոչ մի, շարունակել եմ կրել կարգապահական կալանքը	20.0
Նախատեսվածից քիչ եմ կրել կարգապահական կալանքը	80.0
Ընդամենը	100.0

Ցավալի է նաև այն հանգամանքը, որ ինչպես արդեն նշել ենք, բանակում դեռևս առավելություն-ներ ունեն այդպիսի երևույթներ, իսկ նման պայմաններում կարգապահության խստիվ ապահովումն ուղղակի անհրատեսական է: Վիճակն ավելի մտահոգիչ է, քանի որ հարցվածների **20%-ի** տեղեկաց-մամբ՝ բողոքարկումը որևէ արդյունք չի տվել:

Կարելի է ենթադրել, որ ըստ վերաբասության բողոքարկման մեխանիզմը արդյունավետ է, մյուս կողմից մտահոգիչ է, թե՛ կարգապահական կալանքի կիրառման վերաբերյալ որոշումների, թե՛ նրանց վերացման վերաբերյալ հարցերում սուբյեկտիվ գործոնների առկայությունը:

Կարգապահական կալանքի նման մանրամասնությամբ քննարկելն ու վերլուծելը պայմանավոր-ված է նաև այն հանգամանքով, որ կալանքի ենթարկված անձը շատ դեպքերում հնարավորություն չի ունեցել բարձրածայնել այն խնդիրները, որոնք գոյություն են ունեցել: Այդ իսկ պատճառով, ամբողջա-կան պատկերացում կազմելու համար շատ կարևոր է իմանալ, որ հարցվածների **67.8%-ի** պնդմամբ կարգապահական կալանք կրելու ընթացքում լավ կամ շատ լավ վերաբերմունքի է արժանացել, **30%-ից** ավելի պնդմամբ էլ նրանք արժանացել են վատ կամ շատ վատ վերաբերմունքի: Նշված պայ-մաններում անհրաժեշտ է վերհանել պատճառները, ինչպես նաև ներկայացնել առաջարկություններ, որպեսզի նման վատ վերաբերմունքի չարժանանան կարգապահական վաշտ ուղարկված գինծառա-յողները, առավել ևս, որ կարգապահական վաշտի նպատակը պետք է տարբերվեր կարգապահ-կան կալանքից:

Հետաքրքիր է, որ կարգապահական կալանքը կրածների մեկ երրորդը բուժզննություն չեն ան-ցել, իսկ բուժզննություն անցածների միայն մոտ կեսն են հայտնել, որ այն ունեցել է մանրակրկիտ բնույթ /տես աղյուսակ 47.1 և 47.2/:

Աղյուսակ 47.1

Կարգապահական կալանքը կրելուց առաջ ենթարկվել եք արդյոք բուժզննման	
Այո	66.7
Ոչ	33.3
Ընդամենը	100.0

Աղյուսակ 47.2.

Ըստ Ձեզ՝ արդյոք կատարվել է մանրամասն բուժզննում	
Այո, կատարվել է մանրամասն բուժզննում	44.8
Բուժզննումը կատարվել է ոչ այնքան մանրամասնորեն	20.7
Բուժզննումը կրել է ձևական բնույթ	34.5
Ընդամենը	100.0

3. Խրախուսանքների հասկացությունը, տեսակները, կիրառության արդյունավետությունը

Ինչպես արդեն նշվել է, զինվորական կարգապահությունն ապահովում է յուրաքանչյուր զինծառայողի կողմից Հայաստանի Հանրապետության պաշտպանության, զինվորական պարտքի և իր պարտականությունների կատարման համար անձնական պատասխանատվության գիտակցմամբ, ինչպես նաև հրամանատարների (պետերի) կողմից իրենց լիազորությունների շրջանակներում տրված հրամանների ծզգրիտ ու ժամանակին կատարմամբ:

Ընդ որում, շատ կարևոր է, որպեսզի յուրաքանչյուր զինծառայող իրազեկ լինի զինծառայողներին տրվող խրախուսանքներին, ինչպես նաև կարգապահական տույժերին:

Իսկ խրախուսանքը զինվորական կարգապահության ամրապնդման և զինծառայողների դաստիարակման միջոց է:

Ցուրաքանչյուր հրամանատար (պետ) սույն օրենքով, այլ օրենքներով ու իրավական ակտերով վերապահված իրավունքների սահմաններում պարտավոր է խրախուսել ենթակա զինծառայողներին՝ ծառայության մեջ աչքի ընկնելու և ծառայողական պարտականությունները ջանասիրաբար կատարելու, անձնական հատուկ վաստակի և դրական նախաձեռնություն ցուցաբերելու համար:

Համաձայն «Զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի՝ շարքային կազմի և կրտսեր ենթասպայական կազմի պարտադիր զինծառայողներին կարող են տրվել հետևյալ խրախուսանքները

- 1) տրված կարգապահական տույժի հանում
- 2) շնորհակալության հայտարարում
- 3) զինվորական պարտականությունների օրինակելի կատարման և ստացած խրախուսանքների մասին զինծառայողի ընտանիքին տեղեկացում
- 4) գերատեսչական պատվոգրով պարգևատրում
- 5) արժեքավոր նվերով կամ միանվագ գումարով պարգևատրում
- 6) զորամասի բացված մարտական դրոշի մոտ զինծառայողի լուսանկարում
- 7) լրացուցիչ արձակուրդի տրամադրում
- 8) զորամասի տեղաբաշխման վայրից արտահերթ արձակում

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅՈՒՆԻ ՊԱՇՏՊԱՍՈՒԹՅԱՆ ՀԻՄԱԿԱՂԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

- 9) գերատեսչական կրծքանշաններով պարզեատրում
- 10) գերատեսչական մեղալներով պարզեատրում
- 11) զորամասի պատվո գրքում զինծառայողի լուսանկարի գետեղում և անվան, հայրանվան ու ազգանվան գրառում
- 12) վաղաժամկետ հերթական զինվորական կոչման շնորհում
- 13) հաստիքով նախատեսվածից մեկ աստիճանով բարձր հերթական զինվորական կոչման շնորհում:

Բացի այդ, զինվորական պարտքը կատարելիս ցուցաբերած արիության ու խիզախության, զորքերի օրինակելի դեկավարման և Հայաստանի Հանրապետությանը, զինված ուժերին ու այլ զորքերին մատուցած ակնառու այլ ծառայությունների, մարտական պատրաստականության գործում դրսնորած բարձր ցուցանիշների համար զինծառայողները կարող են օրենքով սահմանված կարգով ներկայացվել պետական պարզեաներով պարզեատրման:

Խրախուսումն այն ժամանակ է արդյունավետ լինում, եթե համածառայակիցը կամ մեկ այլ զինծառայող գալիս է այն համոզման, որ հրամանատարի կողմից նշանակված թե՛ տույժերը, և թե՛ խրախուսանքները կիրառվել են օբյեկտիվ և թափանցիկ, հակառակ պարագայում՝ դժգոհությունների տեղիք են տալու:

Այժմ փորձենք ներկայացնել, թե << զինված ուժերում խրախուսանքների համակարգը ինչպես է կիրառվում և որքանով է արդյունավետ: Այսպես, հարցվածների 56.9%-ը հայտնել է, որ ծառայության ընթացքում ստացել է խրախուսում /տես աղյուսակ 48.1/:

Աղյուսակ 48.1.

<< զինված ուժերում զինծառայության ընթացքում արդյոք Դուք ստացել եք խրախուսում	
Այո	56.9%
Ոչ	43.1%
Ընդամենը	100.0%

Հարցվածների կողմից թվարկված խրախուսումները եղել են բազմաթիվ ու տարբեր, և բնականաբար հետաքրքիր դիմամիկայով: Առավելագույն տոկոս կազմող խրախուսանքի տեսակը, ինչպես տեսնում ենք աղյուսակ 48.2-ից, շնորհակալության հայտարարումն է՝ **31.1%**, այնուհետև, զինվորական պարտականությունների օրինակելի կատարման և ստացած խրախուսանքների մասին զինծառայողի ընտանիքին տեղեկացնելը՝ **18.2%**, լրացուցիչ արձակուրդի տրամադրում՝ **9.8%**, գերատեսչական կրծքանշաններով պարզեատրում՝ **7.6%**, արժեքավոր նվերով կամ միանվագ գումարով պարզեատրում՝ **5.1%**, սահմանված կարգապահական տույժի վերացումը՝ **3.6%** և այլն:

Աղյուսակ 48.2

<< զինված ուժերում զինծառայության ընթացքում ինչպիսի խրախուսում եք Դուք ստացել		
1.	Շնորհակալության հայտարարում	31.1%
2.	Զինվորական պարտականությունների օրինակելի կատարման և ստացած խրախուսանքների մասին զինծառայողի ընտանիքին տեղեկացում	18.2%

3.	Լրացուցիչ արձակուրդի տրամադրում	9.8%
4.	Գերատեսչական կրծքանշաններով պարզեցնելում	7.6%
5.	Գերատեսչական պատվորով պարզեցնելում	6.5%
6.	Արժեքավոր նվերով կամ միանվագ գումարով պարզեցնելում	5.1%
7.	Զորամասի տեղաբաշխման վայրից արտահերթ արձակում	5%
8.	Հաստիքով նախատեսվածից մեկ աստիճանով բարձր հերթական զինվորական կոչման շնորհում	5%
9.	Վաղաժամկետ հերթական զինվորական կոչման շնորհում	4.3%
	Սահմանված կարգապահական տույժի վերացում	3.6%
10.	Գերատեսչական մեղալներով պարզեցնելում	1.6%
11.	Զորամասի բացված մարտական դրոշի մոտ զինծառայողի լուսանկարում	1.5%
12.	Զորամասի պատվու գրքում զինծառայողի լուսանկարի գետեղում և անվան, հայրանվան ու ազգանվան գրառում	0.4%
13.	Այլ	0.3%
	Ընդամենը	100%

Իհարկե, հարցման արդյունքերով պարզվել է, որ ստացված խրախուսանքների պատճառները նույնպես տարբեր են եղել, բայց զորացրվածների զգալի մասի՝ 65.8 %-ի կարծիքով խրախուսանքի արժանանալու պատճառ է հանդիսացել գերազանց ծառայությունը (տես աղյուսակ 49):

Աղյուսակ 49.

Ինչի համար եք Դուք խրախուսում ստացել		
1.	Գերազանց ծառայական համար	65.8%
2.	Գիտելիքների համար	13.3%
3.	Զինավարժությունների ժամանակ լավ դրսեվորելու համար	7.9%
4.	Մրցումներում հաղթելու համար/ֆիզիկական լավ պատրաստվածության համար	4.5%
5.	Հակառակորդին ոչնչացնելու համար	3.8%
6.	Զինաշքերթում մասնակցելու համար	2.5%
7.	Դժվարանում եմ պատասխանել	1.6%
8.	Այլ զինծառայողի կյանքը փրկելու համար	0.5%
	Ընդամենը	100%

Իսկ թե ինչ ենք հասկանում գերազանց ծառայություն ասելով՝ մեր խորին համոզմամբ դեռևս դրա չափանիշները գոյություն չունեն: Նշվածին հաջորդում են մյուս պատճառները, մասնավորապես՝ գիտելիքների համար, զինավարժությունների ժամանակ լավ դրսեւորելու, զինաշքերթին մասնակցելու համար և այլն: Բայց ինչպես տույժերի դեպքում գերակշռող և հետևողաբրիր հետևողաբրիր վերաբե-

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅՈՒՆԻ ՊԱՇՏՊԱՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

Դում էին կարգապահական կալանքին կամ նկատողությանը, ապա նման առավելություններ ունի նաև արձակուրդի տրամադրումը: Իհարկե ցավալի է, եթե զինծառայողը իր լավ ծառայության գրավականը ոչ թե հայրենիքին ծառայելու մեջ է տեսնում, այլ ուղղակի հնարավորինս հերթական և արտահերթ արձակուրդներ ստանալը: Ամեն դեպքում, այս խնդիրը՝ կապված արձակուրդների տրամադրման հետ, բավականին լուծվել է, ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ արձակուրդը դա ոչ թե զինծառայողի իրավունքն է, այլ նրան ընձեռնված հնարավորությունը, ինչու չէ նաև հրամանատարի հայեցողական լիազորությունը: Բայց այսօր պաշտպանական գերատեսչությունը այդ հարցով բավականին մեծ լիբերալություն է ցուցաբերել, և փորձում են հնարավորինս բոլոր բարեխիղծ ծառայողներին տրամադրել արձակուրդ: Դա են վկայում նաև հարցման արդյունքները: Այսպես, արձակուրդ գնացել է հարցման մասնակից զորացրվածների 93 %-ը (տես աղյուսակ 50.1), որոնցից միայն մեկ անգամ՝ մոտ կեսը, իսկ յուրաքանչյուր երեքից միայն մեկն է գնացել արձակուրդ 2 անգամ (տես աղյուսակ 50.2):

Աղյուսակ 50.1

Ծառայության ընթացքում Դուք երբևէ գնացել եք արձակուրդ	
Այո	92.9%
Ոչ	7.1%
Հնդամենը	100.0%

Աղյուսակ 50.2

Քանի անգամ եք գնացել արձակուրդ		
1.	1 անգամ	50.6%
2.	2 անգամ	35.7%
3.	3 անգամ	9.4%
4.	Դժվարանում եմ պատասխանել	1.9%
5.	4 անգամ	1.5%
6.	5 անգամ	0.8%
	Հնդամենը	100.0%

Արձակուրդից օգտվածների 68.7 %-ը օգտվել է հերթական արձակուրդի իրավունքից: Որպես խրախուսանք արձակուրդ տրամադրվել է յուրաքանչյուր 10-ից մեկ զորացրվածին (տես աղյուսակ 21):

Աղյուսակ 51.

Ինչպիսի արձակուրդ եք գնացել		
1.	Հերթական	68.7%
2.	Արտահերթ, խրախուսանքի պատճառով	10.4%
3.	Արտահերթ, լավ ծանոթի զանգով կամ միջամտությամբ	10.4%
4.	Արտահերթ, ընտանեկան պատճառներով	8.3%
5.	Դժվարանում եմ պատասխանել	1%
6.	Արտահերթ, առողջական պատճառներով	0.8%
7.	Հերթական և արտահերթ, լավ ծանոթի զանգով կամ միջամտությամբ	0.2%

8.	Հերթական և արտահերթ, խրախուսանքի պատճառով	0.2%
	Հնդամենը	100%

Օրենսդրությունը գինծառայողին հնարավորություն է տալիս արձակուրդի հետևյալ ձևերից օգտվել՝ հերթական, արտահերթ ընտանեկան պատճառով, արտահերթ առողջական պատճառով և արտահերթ օրենքով նախատեսված դեպքերում։ Իսկ գերակշիռ մասի պնդմամբ հիմնականում օգտվել են իրենց հերթական արձակուրդից, ինչը նշանակում է օրենքով սահմանված համապատասխան ժամկետը լրանալուց հետո գինվորին տրվել է հերթական արձակուրդ, որը իրականացվում է երկու ձևով՝ մարտական հերթապահություն իրականացնող գինծառայողներին արձակուրդ տրվում է երկու փուլով, ընդհանուր՝ տասնինգ օր ժամկետով, իսկ ուզերվային գորամասերում գտնվող գինծառայողներին մեկ անգամ՝ նորից տասնինգ օր ժամկետով։

Հարցվողների 10.6 %-ը հայտնում է, որ հերթական և արտահերթ արձակուրդը ստացել է լավ ծանոթի զանգով կամ միջամտությամբ։ Չնայած արձակուրդների տրամադրման ուղղությամբ պաշտպանության նախարարության կողմից կոռուպցիոն ռիսկերի նվազեցման քայլերին՝ պետք է արձանագրել, որ դրանք չեն վերացել։

Արձակուրդից չօգտվածների գերակշիռ մասը՝ 96 %-ը, (տես աղյուսակ 52), այդ հարցով երբևէ չի դիմել իրամանատարին։

Աղյուսակ 52.

Եթե չեք գնացել արձակուրդ, ապա երբենք դիմել եք իրամանատարին այդ հարցով	
Ոչ	96.0%
Այո	3.2%
Դժվարանում եմ պատասխանել	0.8%
Հնդամենը	100.0%

Իսկ այն փոքր տոկոս կազմող զանգվածը հարցման ընթացքում հայտնել է, որ չնայած արձակուրդի հնարավորությունից չի օգտվել, այնուամենայնիվ դիմել է իրամանատարին։ Այս պարագայում հավանականությունն այն է, որ տվյալ գինծառայողները ունեցել են տույժեր, կամ որևէ այլ օբյեկտիվ պատճառով, քանի որ, ինչպես նշեցինք, օրենքով նախատեսված խրախուսանքներից ամենարդյունավետը արձակուրդների տրամադրումն է, ընդ որում նշվածը արդյունավետության առումով երկուստեք է, այսինքն, նախ իրամանատարությունն է փորձում բոլորին տրամադրել արձակուրդ, իսկ գինծառայողներն էլ իրենց հերթին փորձում են կանոնավոր ծառայել, որպեսզի չզրկվեն հերթական ու արտահերթ արձակուրդներից։

5. ԲՈԼԺՄԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԲՈԼԺՈԳՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

1. Բուժսպասարկման և բուժօգնության իրավական ամրագրման հիմունքները

Անձի բժշկական օգնության և բուժսպասարկման իրավունքը նախ և առաջ ամրագրված է ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածով, համաձայն որի՝ *յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնության և սպասարկում ստանալու իրավունք*:

Նույն հոդվածի 2-րդ մասն արդեն նշում է, որ *յուրաքանչյուր ոք ունի անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունք*: *Դրանց ցանկը և մատուցման կարգը սահմանվում են օրենքով*:

Վերլուծելով սահմանադրական նորմի պահանջները՝ պետք է նշել, որ զինվորական ծառայության մեջ գտնվող անձինք նույնպես օգտվում են նշված հոդվածով նախատեսված հնարավորությունից, այնուամենայնիվ կան որոշ առանձնահատկություններ:

Որպես ՀՀ Սահմանադրության նորմի պահանջ, **1998 թ. հոկտեմբերի 27-ին ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվել է օրենք՝ «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին»**, որտեղ, ի թիվս այլ սոցիալական իրավունքների, կարգավորվում են զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների բուժօգնության և բուժսպասարկման հարցերը: Մասնավորապես՝ համաձայն նշված օրենքի 33-րդ հոդվածի՝ զինծառայողները և նրանց ընտանիքների անդամներն ապահովվում են անվճար որակյալ բժշկական օգնությամբ՝ համապատասխան գերատեսչական բժշկական հիմնարկներում: Ծառայության անցկացման վայրում նման բժշկական հիմնարկների բացակայության, ինչպես նաև անհետաճգելի դեպքերում զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին անհրաժեշտ բժշկական օգնություն ցույց է տրվում Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կարգի բժշկական հիմնարկներում՝ համապատասխան մարմինների միջոցների հաշվին՝ բուժման ծախսերի հետագա փոխհատուցմամբ, որի կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Բժշկական ցուցումների առկայության դեպքում զինծառայողներին տրվում է անվճար առողջարանային բուժման իրավունք: Առողջարանային բուժման ուղեգորի արժեքի, ինչպես նաև բուժման վայր մեկնելու և վերադառնալու հետ կապված ծախսերը փոխհատուցվում են համապատասխան մարմինների՝ այդ նպատակով հատկացրած միջոցների հաշվին՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով և պայմաններով:

Զինծառայողներին բժշկական օգնություն տրամադրվում, իսկ սպասարկում իրականացվում է երկու եղանակով՝ զորամասային պայմաններում և հոսպիտալային:

Զորամասային պայմաններում բուժօգնությունը և սպասարկումը կատարվում է զորամասի բժիշկ մասնագետների կողմից, իսկ դրանց բացակայության կամ նեղ մասնագիտական միջամտություն ցուցաբերելու դեպքում ծառայությունները մատուցվում են հոսպիտալային եղանակով: Գոյություն ունեն ՀՀ ՊՆ կազմում գտնվող Կենտրոնական կինհիկական զինվորական հոսպիտալ /ԿԿԶՀ/, Երևանի կայազորային զինվորական հոսպիտալ և, իհարկե, հանրապետության վարչատարածքային բաժանման կանոններից ենթելով գործում են կայազորային զինվորական հոսպիտալներ Վանաձորում, Վարդենիսում, Միսիանում և այլն, որոնց թե՛ մարդկային մասնագիտական ռեսուրսը, և թե՛ սարքավորումների հագեցվածությունը անհամեմատ ավելի մեծ է: Չնայած գոյություն ունեն իրավիճակներ, երբ զինծառայողին բուժօգնություն տրամադրելու կամ բուժսպասարկում իրականացնելու համար անհրաժեշտ

բժիշկ-մասնագետի կամ համապատասխան սարքավորման բացակայության խնդիր է առաջանում, և նման դեպքերում այն իրականացվում է քաղաքացիական բժշկական հաստատություններում:

Ի կատարումն վերը նշված օրենքի, << Կառավարության կողմից 2000 թվականի օգոստոսի 28-ին ընդունվել է թիվ 517 «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր բժշկական հաստատություններում զինծառայողների հետազոտման և բուժման՝ ծախսերի հետագա փոխհատուցմամբ, կարգը հաստատելու մասին» որոշումը, որով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր բժշկական հաստատություններում՝ պետական առողջապահական նպատակային ծրագրերի շրջանակներում, այդ հաստատությունների միջոցների հաշվին՝ զինծառայողների հետազոտման և բուժման՝ ծախսերի հետագա փոխհատուցմամբ, անհրաժեշտ բժշկական օգնություն ցույց տալու կարգը և պայմանները:

Համաձայն նշված Կարգի՝ զինծառայողները բժշկական օգնություն ստանալու համար բժշկական հաստատություններ ուղեգրվում են այն դեպքում, եթե նրանց ծառայության վայրում բացակայում են համապատասխան գերատեսչական բժշկական հաստատությունները, ինչպես նաև շտապ ու անհետաձգելի դեպքերում:

Հիվանդ զինծառայողներին բժշկական հաստատություններ հոսպիտալացման և ամբողատորպոլիկինիկական հետազոտման նպատակով ուղեգրել կարող են՝ ա) << ՊՆ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալը (գ/մ՝ 14203), թ) << ՊՆ երևանի կայազորային հոսպիտալը՝ միայն մաշկավեներական և հոգեբուժական հիվանդություններով տառապող հիվանդներին (գ/մ՝ 88865), գ) << ոստիկանության բժշկական վարչության հոսպիտալը, դ) << ազգային անվտանգության ծառայության պոլիկլինիկան:

Բժշկական հաստատությունը հիվանդ զինծառայողներին հիվանդանոցային պայմաններում հետազոտման և բուժման համար տալիս է ուղեգրի՝ 3 օրինակից, իսկ ամբողատոր-պոլիկլինիկական մասնագիտական հետազոտման համար՝ 2 օրինակից: Հիվանդ զինծառայողները բժշկական հաստատություններ ամբողատոր-պոլիկլինիկական մասնագիտական հետազոտման ներկայանում են զորամասի ներկայացուցչի ուղեկցությամբ (ունենալով ուղեգրի՝ 2 օրինակից): Ուղեգրի մեկ օրինակը որպես հիմք մնում է բուժիաստատությունում՝ հետազոտման համար, մյուս օրինակը՝ հետազոտող բժշկի ստորագրությամբ և հաստատության կնիքով կնքված վերադարձվում է ուղեգրող հիմնարկի ներկայացուցչին: Հիվանդ զինծառայողների դուրսգրումը կատարվում է միայն ուղեգրող հաստատության ներկայացուցչի ներկայությամբ՝ նախօրոք (3 օր առաջ) դրա մասին հայտնելով տվյալ հաստատությանը:

2. << Զինված ուժերում բուժսպասարկման և բուժօգնության որակն ու խնդիրները, բուժօգնություն տրամադրող անձանց մասնագիտական որակը ըստ սոցիոլոգիական հարցման տվյալների

Բժշկական օգնության և բուժսպասարկման որակին վերաբերող հարցերը կարելի է դասակարգել երկու խմբի. 1) ինչ առողջական վիճակով են զորակոչվել << զինված ուժեր, և 2) ինչ առողջական խնդիրներ են առաջացել հենց զինվորական ծառայության ընթացքում: Այսպես.

Հարցման մասնակիցներից յուրաքանչյուր 6-ից մեկը հայտնում է մինչ զորակոչը ունեցած առողջական խնդիրների մասին, իսկ արդեն ծառայության ընթացքում առողջական խնդիրներ ունեցել են մոտ կեսը /տես աղյուսակ 55/:

Աղյուսակ 55.

Մինչև զորակոչվելը առողջական խնդիրներ ունեցել եք		Ծառայության ընթացքում առողջական խնդիրներ ունեցել եք
Այո	17.2%	50.4%
Աչ	82.8%	49.6%
Ընդամենը	100.0%	100.0%

Կարելի է եզրակացնել, որ կամ մինչ զորակոչը պատշաճ կերպով չի իրականացվում բուժզննությունը՝ բացահայտելու զորակոչիկների առողջական վիճակի իրական պատկերը, կամ զինծառայության ընթացքում պատշաճ կերպով չի իրականացվում զինծառայողների առողջական վիճակի հսկողությունը:

Հարկ է ընդգծել, որ զինծառայության ընթացքում յուրաքանչյուր 3 զինծառայողից մեկի մոտ առողջական խնդիրների առաջացումը պայմանավորված է ոչ թե զինծառայության բնույթով, այլ մինչ զորակոչը ունեցած առողջական խնդիրներով, որոնք սրվում կամ բացահայտվում են զինծառայության ընթացքում /տես աղյուսակ 56/:

Աղյուսակ 56.

ՍՌՎԻ-ՆԵՐ ՈՒ ՍՌՀ-ՆԵՐ	19.7%
Վիրուսային հիվանդություններ	17.6%
Տրավմաներ	8.4%
Մաշկային խնդիրներ, ինֆեկցիա	7%
Սրտային ու անոթային	7%
Թոքաբորբ	5.2%
Բերանի խոռոչի հիվանդություն	5%
Վիրաբուժական միջամտություն	4.7%
Տոնզիլիտներ	4.4%
Աղեստամոքսային խնդիրներ	3.8%
Տեսողական օրգանների, աչքի խնդիրներ	3%
Հենաշարժիչ համակարգի խնդիրներ	3%
Ստորին շնչուղիների խնդիրներ	1.9%
Հարքային խոռոչների բորբոքում	1.9%
Լուղության օրգանների խնդիրներ	1.7%
Ալերգիկ ռեակցիաներ	1.6%
Նկրալգիաներ ու նկրիտներ	1.2%
Միզասեռական համակարգի խնդիրներ	0.7%
Ցրտահարություն	0.7%
Կիստաներ	0.5%
Հրազենային վիրավորումներ	0.2%
Արևահարություն	0.2%
Մենինգիտ	0.2%
Ռևմատիզմ	0.2%
Գիշերամիզություն	0.2%
Ընդամենը	100%

Հստ առողջական խնդիրների առաջացման պատճառների կամ հիվանդությունների տեսակների՝ առավել հաճախ հանդիպում են տրավմաները: Սա կազմում է մոտ 44 %-ը /տես աղյուսակ 57/, որը կարող է առաջանալ ինչպես ֆիզիկական բռնությունների, այնպես էլ անվտանգության կանոնների խախտումների հետեւանքով:

Նաև հարց է առաջանում, արդյոք եղած բոլոր տրավմաները պատշաճ կարգով գրանցվել են, անցկացվել են ծառայողական քննություններ, թե ոչ, ինչով է պայմանավորված նման հաճախականությամբ առաջացող տրավմաները և այլն: Մեր խորին համոզմամբ, տրավմաների մի մասը հենց ոչ կանոնադրային հարաբերությունների արդյունք են՝ ծեծ կամ խոշտանգում, իսկ նման կասկածները փարատելու լավագույն միջոցը զորամասում արձանագրված տրավմաների դեպքերը չթաքցնելն է:

Զինվորական ծառայության ընթացքում ունեցած առողջական խնդիրներից որպես առաջնային դիտվել են երեքը, որոնց յուրաքանչյուրի հաճախելիության վերաբերյալ ներկայացնում ենք հետևյալ աղյուսակը.

Աղյուսակ 57.

Հաճախակիությունը	ՍՌՎԻ-ՆԵՐ ՈՒ ՍՌՀ-ՆԵՐ 19,7%	ՎԻՐՈՍԱՅԻՆ ԻԻՎԱՆ-ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 17,6%	ՎՆԱՍՎԱԾԲՆՆԵՐ / ՏՐԱՎՄԱ / 8,4%
Շատ հաճախ	9,73%	1,16%	14,49%
Հաճախ	14,05%	12,79%	28,99%
Հազվադեպ	42,7%	15,70%	21,74%
Միանվագ/մեկ անգամ	33,51%	70,35%	34,78%
Ընդամենը՝	100%	100%	100%

Հարցվածների 66%-ը, որոնք ունեցել են առողջական խնդիրներ, հայտնում են, որ իրենց տրամադրվել է համապատասխան բուժօգնության /տես աղյուսակ 58.1/, միևնույն ժամանակ զգալի թիվ է կազմում բժշկական օգնության չտրամադրման փաստը՝ 34.5 %-ը, այսինքն՝ յուրաքանչյուր 3-ից մեկը: Հետաքրքիր է, որ ըստ հիվանդությունների տեսակների առավել մեծ թիվ են կազմում տրավմաների եւ վիրուսային հիվանդությունների դեպքում պատշաճ բուժօգնության չտրամադրումը /տես աղյուսակ 58.2/:

Աղյուսակ 58.1

Հստ Ձեզ՝ արդյոք Ձեզ տրամադրվել է համապատասխան բուժօգնություն	
Այո	65.5%
Ոչ	34.5%
Ընդամենը՝	100%

Աղյուսակ 58.2.

ՍՌՎԻ-ՆԵՐ ՈՒ ՍՌՀ-ՆԵՐ		ՎԻՐՈՍԱՅԻՆ ԻԻՎԱՆ-ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՏՐԱՎՄԱՆԵՐ
Այո	78.80%	67.25%	67.12%
Ոչ	21.20%	32.75%	32.88%
Ընդամենը՝	100%	100%	100%

Հստ հարցվածների հիմնական բժշկական օգնությունը տրամադրվում է զորամասի բուժկետի անձնակազմի կողմից՝ 61.2 %: Յուրաքանչյուր 5-ից մեկը բուժօգնություն ստացել է հոսպիտալի բժշկի

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅՈՒՆԻ ՊԱՇՏՊԱՌՈՂՅԱՍ ՀԻՄԱԽԱԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՂՅԱՍ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՂՄ

Կողմից: Բժշկական օգնություն տրամադրում են նաեւ բուժակները՝ յուրաքանչյուր 7-ից մեկին /տես աղյուսակ 59.1/:

Աղյուսակ 59.1

Զորամասի բուժկետի անձնակազմ	61.2%
Հոսպիտալի բժիշկ	21.6%
Բուժակ	14.8%
Սպայակազմ և համածառայակիցներ	1.3%
Քաղաքացիական բժիշկ	0.8%
Դժվարանում եմ պատասխանել	0.3%
Ընդամենը	100%

Ըստ հիվանդությունների տեսակների՝ պատկերը փոքր-ինչ փոխվում է /տես աղյուսակ 59.2/:

Աղյուսակ 59.2.

	ՍՈՒՎԻ-ՆԵՐ ՈՒ ՍՈՒՀ-ՆԵՐ	Վիրուսային հիվանդություններ	Տրավմաներ
Բուժակ	17.69%	9.82%	34.69%
Զորամասի բուժկետի անձնակազմ	72.31%	76.79%	57.14%
Հոսպիտալի բժիշկ	10.00%	13.39%	8.16%
Ընդամենը	100%	100%	100%

Տրավմատիկ հիվանդությունների բուժման մեջ առավել մեծ դեր են ունենում զորամասի բուժկետի անձնակազմը՝ 57.14 % եւ բուժակները՝ 34.69 %: Ի տարբերություն մյուս հիվանդությունների, որոնցում զորամասի բուժկետի անձնակազմի դերը մեծ է /սուր ուսապիրատոր վիրուսային ինֆեկցիաներ՝ ՍՈՒՎԻ-ՆԵՐ եւ սուր ուսապիրատոր հիվանդություններ՝ ՍՈՒՀ-ՆԵՐ՝ 72.31 %, վիրուսային հիվանդություններ՝ 76.79 %/: Պետք է եզրակացնել, որ տրավմատիկ հիվանդություններով զինծառայողները ավելի քիչ են ներկայացվում հոսպիտալ, քան մյուս առողջական խնդիրների դեպքում:

Որոշակի տարբերություններ ունեն նաև տրամադրվող բժշկական օգնության որակի վերաբերյալ գնահատականները. Հարցվածների միայն 4.1%-ն է գնահատում այն վատ և շատ վատ, մոտ 79 %-ը գնահատում են լավ եւ շատ լավ /տես աղյուսակ 60/:

Աղյուսակ 60.

Լավ	59.3%
Շատ լավ	19.2%
Միջին	15.9%
Վատ	3.6%
Շատ վատ	1%
Դժվարանում եմ պատասխանել	1%
Ընդամենը	100%

Մինչդեռ, ըստ հիվանդությունների տեսակների բժշկական օգնության որակը վատ և շատ վատ գնահատում են ՍՈՒՎԻ-ՆԵՐԻ եւ ՍՈՒՀ-ՆԵՐԻ վերաբերյալ հարցվածների 17 %-ը, իսկ տրավմաների դեպքում 11 %-ը /տես աղյուսակ 61/:

Աղյուսակ 61.

	ՍՈՒՎԻ-ՆԵՐ ԵՒ ՍՈՒՀ-ՆԵՐ	ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ԻԻՎԱՆԴՈՒԹԵՅՈՒՆՆԵՐ	ՏՐԱՎՄԱՆԵՐ
Ծատ լավ	41.46%	12.82%	20.75%
Լավ	34.15%	70.09%	52.83%
Միջին	7.32%	15.38%	15.09%
Վատ	12.20%	1.71%	9.43%
Ծատ վատ	4.88%	0.00%	1.89%
Դժվարանում եմ պատասխանել	0.00%	0.00%	0.00%
Հնդամենը	100%	100%	100%

Զորամասի բուժկետի պայմանները գերազանց և լավ համարել են հարցվողների մոտ կեսը /տես աղյուսակ 62/:

Աղյուսակ 62.

Զորամասի բուժկետը ինչպիսի պայմաններ է ունեցել	
Լավ	42.5%
Միջին /բավարար	39.6%
Վատ	9.5%
Գերազանց	7.7%
Ծատ վատ	0.7%
Հնդամենը	100.0%

Առողջական խնդիրների վերաբերյալ բարձրածայնելուց հետո անմիջապես արձագանքում են 50 %-ի կարծիքով, երկու օրվա ընթացքում՝ 22.3 %-ի կարծիքով, և 17 %-ի կարծիքով՝ 11 օր հետո /տես աղյուսակ 63.1/: Այսինքն, յուրաքանչյուր 6-ից մեկի դեպքում առողջական խնդիրներին արձագանքում են բավականին ուշ:

Աղյուսակ 63.1

Ձեր գանգատը ներկայացնելուց որքան ժամանակ հետո են արձագանքել (նշել օրերով)	
Անմիջապես	50%
2օր	22.3%
11 օր	17%
Դժվարանում եմ պատասխանել	2.3%
3 օր	1.3%
27 օր	1.3%
30 օր	1%
25 օր	0.8%
29 օր	0.8%
20 օր	0.5%

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅՈՒՆԻ ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄԱԿԱԴՐՈՒԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

Չեն արձագանքել	0.5%
23 օր	0.5%
28 օր	0.5%
5 օր	0.3%
24 օր	0.3%
26 օր	0.3%
31 օր	0.3%
Ընդամենը	100%

Հետաքրքիր է ըստ հիվանդությունների տեսակների բժշկական արձագանքման պատկերը. առավել ուշ արձագանքում են տրավմաների և վիրուսային հիվանդությունների դեպքում՝ համապատասխանաբար 56 և 54 % /տես աղյուսակ 63.2/:

Աղյուսակ 63.2

	ՍՌՎՀ-ՆԵՐ ԵՒ ՍՌՀ-ՆԵՐ	ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՏՐԱՎՄԱՆԵՐ
ԱՆՄԻՉՈՎԱԿԵԱ	64.83%	45.61%	44.00%
2 օր	13.79%	38.60%	24.00%
11 օր	20.00%	15.79%	32.00%
Չեն արձագանքել	1.38%	0.00%	0.00%
ԴԺՎԱՐԱՆՈՒՄ ԵՄ պատասխանել	0.00%	0.00%	0.00%
Ընդամենը	100%	100%	100%

Այսպիսով, և բուժօգնության որակի և արձագանքի առավել «խոցելի» են համարվում տրավմաները եւ վիրուսայինն հիվանդությունները:

Զինվորական ծառայության ընթացքում բժշկական ծառայության որակը բացահայտվել է մի քանի հարցերի միջոցով: Բուժաշխատողների, սանհրահանգիչների, բուժակների աշխատանքը լավ և շատ լավ գնահատում են հարցման մասնակիցների համապատասխանաբար 68 և 77 %-ը: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր 8-9 հարցվողից մեկը սանհրահանգիչների և բուժակների աշխատանքը վատ եւ շատ վատ է գնահատում: Հարցվողների 16 %-ը հայտնում են, որ ընդհանրապես սանհրահանգիչ չեն ունեցել /տես աղյուսակ 64/:

Աղյուսակ 64.

Ինչպես եք գնահատում ձեր ստորաբաժանման սանհրահանգիչների, բուժակների
աշխատանքը /եթե ստորաբաժանումը համապատասխան հաստիքներն ունի/

	ՍԱՆՀՐԱՀԱՆԳԻՉ	ԲՈՒԺԱԿ
Շատ լավ	10.9%	11.5%
Լավ	57.1%	65.2%
Վատ	9.6%	8.6%
Շատ վատ	3.2%	2.9%
Այդպիսի ստորաբաժանում չկար	15.9%	8.7%
ԴԺՎԱՐԱՆՈՒՄ ԵՄ պատասխանել	3.2%	3.1%
Ընդամենը	100.0%	100.0%

Իսկ տրամադրվող բուժօգնության որակը լավ և շատ լավ գնահատում է հարցվողների 63 %-ը, իսկ մոտ 22 %-ը գտնում է, որ զորամասում տրամադրվող բուժօգնության որակը գնահատել է վատ և շատ վատ /տես աղյուսակ 65/:

Աղյուսակ 65.

Ինչպես կգնահատեք Ձեր զորամասում տրամադրվող բուժօգնության որակը	
Լավ	55.0%
Չեմ առնչվել	14.1%
Վատ	16.3%
Շատ լավ	8.2%
Շատ վատ	5.8%
Դժվարանում եմ պատասխանել	0.5%
Հնդամենը	100.0%

Բուժօգնության որակը առավել բարձր է գնահատվում կայազորային հոսպիտալներում, որը լավ և շատ լավ գնահատել են առնչություն ունեցածների 82 %-ը: Միևնույն ժամանակ 16 %-ը այն գնահատել է վատ և շատ վատ /տես աղյուսակ 66.1 և 66.2/:

Աղյուսակ 66.1.

Ինչպես եք գնահատում զորամասը սպասարկող կայազորային հոսպիտալում տրամադրվող բուժօգնության որակը	
Չեմ առնչվել	60.3%
Լավ	23.5%
Շատ լավ	9.1%
Վատ	4.4%
Շատ վատ	2.3%
Դժվարանում եմ պատասխանել	0.4%
Հնդամենը	100.0%

Աղյուսակ 66.2.

Ինչպես եք գնահատում <<ՊՆ կենտրոնական կլինիկական կամ զինվորական հոսպիտալում տրամադրվող բուժօգնության որակը	
Չեմ առնչվել	71.9%
Լավ	18.9%
Շատ լավ	6.0%
Վատ	2.3%
Շատ վատ	0.6%
Դժվարանում եմ պատասխանել	0.3%
Հնդամենը	100.0%

ՊՆ կենտրոնական կլինիկական կամ զինվորական հոսպիտալում տրամադրվող բուժօգնության որակը լավ և շատ լավ համարում են առնչություն ունեցածների 88 %-ը: Եթե դիտարկենք կայազորային հոսպիտալում և կենտրոնական կլինիկական կամ զինվորական հոսպիտալում առնչություն ունեցածների թվաքանակը, ապա տեսնում ենք, որ զինծառայողների մոտ 40 %-ը առողջական խնդիրների հետ կապված բուժում է անցել կայազորային հոսպիտալում և մոտ 30 %-ը կենտրոնական

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅՈՒՆԻ ՊԱՇՏՊԱՍՈՐՅԱՍ ՀԻՄԱԽԱՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՍ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

Կլինիկական կամ զինվորական հոսպիտալում: Այսինքն, յուրաքանչյուր 3-ից մեկը ունեցել է այնպիսի առողջական խնդիրներ, որի համար անհրաժեշտ է եղել առավել համակողմանի բուժօգնություն /տես աղյուսակ 66.2/:

Չնայած մեր կողմից վերը նշված բոլոր հետազոտություններն ու վերլուծությունները կապված առողջական խնդիրների հետ վերաբերում են զորամասում ծառայություն անցնող անձանց՝ այնուամենայնիվ, որոշակի առանձնահատկություններ են եղել մինչև կարգապահական վաշտերի ստեղծումը զինծառայողին կարգապահական կալանքի ենթարկելուց հետո նրան մեկուսարան տանելիս: Հստ Կանոնակարգի՝ մեկուսարանը իրավախախտ զինծառայողին ընդունելիս պարտավոր էր կատարել արտաքին գննում՝ նրա մարմնի վրա հետքերը, կապտումները, սպիտերն ու բերծվածքները արձանագրելու նպատակով, մինչդեռ այդպիսի գործողություններ ոչ հաճախ են իրականացվել: Կրկին անդրադառնալով սոցիոլոգիական հարցումների արդյունքներին, պարզվել է, որ հարցաշարում առկա հարցին, թե «կարգապահական կալանքը կրելուց առաջ ենթարկվել եք արդյոք բուժզննման», պատասխանել են «այո» հարցվածների 66.7%-ը, «ոչ»՝ 33.3%-ը: Բացի այդ, հարցվածների ընդամենը 44.8%-ն է հայտնել որ կատարվել է մանրամասն բուժզննում, իսկ 20.7%-ի կարծիքով բուժզննումը կարգապահական կալանք կրելուց եղել է ոչ այնքան մանրամասնորեն, եվ վերջապես 34.5 %-ի կարծիքով՝ բուժզննումը կրել է ձևական բնույթ:

Այսինքն՝ մեր համոզմունքն էլ ավելի փաստարկված է դառնում հենց նշված վիճակագրական տվյալներով, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ չնայած կարգապահական կալանքի ձևական վերացմանն ու կարգապահական վաշտի գաղափարի ձևավորմանը, այնուամենայնիվ մենք գտնում ենք, որ նշված երկու եզրույթների միջև գրեթե բովանդակային փոփոխություն չի կատարվել, ուստի, առաջարկվում է միջոցներ ձեռնարկել այսուհետ կարգապահական վաշտ ուղարկված զինծառայողներին օբյեկտիվ, մանրազնին բուժզննության ենթարկելու ուղղությամբ:

Կարգապահական կալանք կրող զինծառայողներին տրամադրվող թե բուժօգնության, և թե բուժսպասարկման որակի վերաբերյալ ստացված թվական տվյալները ավելի մտահոգիչ են, որովհետև ի տարբերություն կարգապահական կալանք կրած զինծառայողների բուժօգնության որակի՝ ընդհանուր բուժօգնությունը զինված ուժերում փոքր-ինչ բավարար մակարդակի վրա է, մինչդեռ նոյն հարցվածների 49%-ի պնդմամբ՝ կարգապահական կալանք կրելու ընթացքում բժիշկ ընդհանրապես չի այցելել, 24.5%-ի փոխանցմամբ՝ բժիշկն այցելել է իր սեփական նախաձեռնությամբ, իսկ միայն գանգատ ներկայացնելիս բժիշկ այցելելու վերաբերյալ տեղեկություն հայտնել է հարցվածների 26.5%-ը:

3. Առողջական վիճակի վերաբերյալ կայացված ակտերի հասանելիության և դրանց բողոքարկման հիմնախնդիրները

Ընդհանրապես ոչ միայն առողջական վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը կամ փաստաթուղթն է կարևոր հասանելի լինի քաղաքացուն, այլ որպես սահմանադրական նորմի պահանջ անձն իրավասու է ստանալ իրեն վերաբերող ցանկացած տեղեկություն: Նշվածն ավելի պարզ ամրագրված է << Սահմանադրության 23-րդ հոդվածի երրորդ մասում, համաձայն որի, յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունք:

Չնայած նման նորմի գոյությանը՝ << զինված ուժերում այս իրավունքի իրացումը դեռևս մնում է թղթի վրա: Բոլոր մակարդակներում, զինծառայողներին իրենց թե առողջական վիճակի, և թե դրա վերաբերյալ կայացված ակտերին, ըստ էության, զինծառայողներին չեն էլ իրազեկում, իսկ դրանով

խախտում են անձի << Սահմանադրությամբ ամրագրված ևս մի քանի իրավունք, մասնավորապես՝ իրավական արդյունավետ պաշտպանության, դատական պաշտպանության իրավունքները:

Ցանկացած պարագայում հետազոտման ենթարկված զինծառայողի առողջական վիճակի վերաբերյալ պատկեր ստանալուց հետո բուժգննության ենթարկող բժիշկ մասնագետը պարտավոր է իրեն տեղեկացնել նրա առողջական վիճակի և կայացված ակտի, որոշման մասին: Խոսքը մասնավորապես վերաբերում է << ՊՆ ռազմաբժշկական (ՌԲՀ) և կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովների (ԿՌԲՀ) գործելառօճին, որի ընթացքում հանձնաժողովներին ներկայացված զինծառայողի ոչ միայն որևէ կարծիք հաշվի չի առնվում, այլև զինծառայողն այդպես էլ չի տեղեկանում, թե նշված հանձնաժողովները իր առողջական վիճակի վերաբերյալ ինչպիսի որոշում են կայացրել:

Ինչպես արդեն նշել ենք, զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգը սահմանվում էր պաշտպանության նախարարի 26.02.2010 թ. N 175 հրամանով, սակայն 2013 թվականի ապրիլի 8-ի N410 հրամանով սահմանվել է նոր կարգ: Մեր հետազոտության շրջանակներում << պաշտպանության նախարարի նոր ընդունված հրամանին չենք անդրադառնում միայն մեկ պարզ պատճառով, քանի որ մեր ուսումնասիրության դաշտում նախորդ տարվա ընթացքում զորացրված զինծառայողներից ստացված տեղեկություններն են, չնայած նոր և հին հրամանների միջև սկզբունքայի տարբերություններ չկան:

Զինծառայողների առողջական վիճակի վերաբերյալ գրավոր վերջնական որոշում կայացնելու լիազորությամբ օժտված է << ՊՆ Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովը, չնայած մինչ այդ գրավոր եզրակացություն է ներկայացնում ռազմաբժշկական հանձնաժողովը, որոնք, ըստ Էության, հոսպիտալային մակարդակներում ծևավորված հանձնաժողովներն են: ԿՌԲՀ-ն, բժշկական փորձաքննության ղեկավար մարմին է և հաշվետու է << պաշտպանության նախարարին և << ԶՈՒ գլխավոր շտաբի պետին:

ԿՌԲՀ-ն այնուամենայնիվ կայացնում է վերջնական որոշում, սակայն դրա մասին իրազեկելու և որոշման պատճենը զինծառայողին հանձնելու պրակտիկա գոյություն չունի, ինչը սահմանադրական նորմի խախտում է:

Առանձին դեպքերում ըստ առողջական վիճակի ոչ ճիշտ գորակոչված և առաջին 3 ամիսների ընթացքում զորացրված յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ ԿՌԲՀ-ն գեկուցում է վերադաս հրամանատարությանը, իսկ հանրապետական զինկոմիսարիատը << առողջապահության նախարարության և ԿՌԲՀ-ի հետ համատեղ այդ փաստի կապակցությամբ կատարում է ծառայողական քննություն: Իհարկե սա էլ իր բացասական հետևանքներն է ունենում, քանի որ տեղեկացված լինելով նման դրույթի մասին, միջոցներ ծեռնարկելով ժամանակ շահելու համար, որպեսզի իրենց կողեգաները պատասխանատվության չենթարկվեն, շատ հաճախ՝ չնայած զինծառայողի մոտ գոյություն ունեցող խնդրի սրացմանը, ԿՌԲՀ-ում նրա զինվորական ծառայության համար հետագա պիտանելիության հարցի անընդհատ ձգձգվում է տևական ժամանակով բուժում ստանալու հիմնավորմամբ:

<արցումների արդյունքներով պարզվել է, որ առողջական վիճակի վերաբերյալ բժշկական փաստաթղթերին ծանոթացել են հարցվածների 54%-ը /տես այլուսակ 67.1/, իսկ իրենց առողջության վերաբերյալ փաստաթղթերին չծանոթացածների զգալի մասը չեն էլ պատկերացրել դրանց գոյության մասին /տես այլուսակ 67.2/:

Աղյուսակ 67.1

Արդյոք Դուք ծանոթացել եք Ձեր առաջական վիճակի վերաբերյալ ակտերին	
Այո	54.0%
Ոչ	43.9%
Դժվարանում եմ պատասխանել	2.1%
Հնդամենը	100.0%

Աղյուսակ 67.2

Եթե ոչ, ապա ինչու	
Չեմ իմացել դրանց առկայության մասին	88.0%
Դժվարանում եմ պատասխանել	10.5%
Չեմ հետաքրքրվել	1.5%
Հնդամենը	100.0%

Նման թվական տվյալների պատկերը հիմնավորում է, որ մեր գինծառայողների կեսը ուղղակի զրկված է իր առողջական վիճակի վերաբերյալ ակտին ծանոթանալու հնարավորությունից, ինչը բնականաբար պետք է ունենա իր պատճառները: Պարզվել է, որ չիմացողների 88%-ն ուղղակի չի իմացել դրանց առկայության մասին, 1.5%-ը չի հետաքրքրվել, իսկ որքան էլ տարօրինակ է 10.5%-ը դժվարացել է պատասխանել:

Վերոշարադրյալի հաշվառմամբ կարող ենք փաստել, որ գինծառայողների առողջական վիճակի վերաբերյալ կայացված ակտերի հասանելիության ցածր մակարդակը ինքնըստինքյան հանգեցնում է բողոքարկման անարդյունավետությանը, քանի որ, չունենալով համապատասխան որոշումը, բնականաբար զինծառայողը չի ունենում նաև հնարավորություն, թեկուզ սուբյեկտիվորեն գնահատելու այն: Պետք է նկատի ունենալ, որ տվյալ պարագայում <<ՊՆ ԿՈԲՀ-Ն համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» <<օրենքի 2-րդ հոդվածի ուժով վարչարարություն իրականացնող մարմին է, հետևաբար պարտավոր է կայացնել վարչական ակտ, իսկ վերջինս էլ պարտադիր կերպով պետք է հասանելի լինի հենց ակտի հասցեատիրոջը: Ուստի, որպես իրատապինդիր մեր կողմից առաջարկվում է համապատասխան գերատեսչությանը՝ պարտավորեցնել <<ՊՆ ԿՈԲՀ-ին, կայացված նիստի ընթացքում ընդունված ցանկացած որոշման օրինակը հանձնել հասցեատիրոջը, մշակել այդ ակտերի բողոքարկման գործուն մեխանիզմներ, իսկ արդեն դատական կարգով բողոքարկման ժամանակ կիրառել <<վարչական դատավարության օրենսգիրքը:

4. << գինված ուժերում սննդի, ջրի որակը և սանիտարահիգիենիկ պայմանները ըստ հարցման տվյալների

Զինծառայողների առողջական վիճակի վրա էական ազդեցություն ունեն սննդի, ջրի որակը և սանիտարահիգիենիկ պայմանները: Հարցման մասնակիցների 66-67%-ը սննդի և ջրի որակը զորամասում գնահատում է լավ և շատ լավ: Այսինքն, զինծառայություն անցած յուրաքանչյուր 3-ից մեկը զորամասերում ջրի և սննդի որակը համարում է վատ և շատ վատ: Մոտավորապես նոյն պատկերն է նաև զորանցներում տիրող սանիտարահիգիենիկ վիճակի վերաբերյալ. Լավ և շատ լավ

գնահատում են 74%-ը, իսկ վատ և շատ վատ՝ 24.5%-ը /տես աղյուսակ 68-70/:

Աղյուսակ 70.

Ինչպես եք գնահատում զորանոցի սանիտարահիգիենիկ վիճակը (մաքրություն, կրծողներ, ոջիլ հանդերձարան և այլն)

Լավ	53.2%
Շատ լավ	21.5%
Վատ	21.9%
Շատ վատ	3.0%
Դժվարանում եմ պատասխանել	0.5%
Ընդամենը	100.0%

6. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով զինված ուժերում կարգապահությունը, տույժերն ու խրախուսանքները, բողոքարկման մեխանիզմները և արդյունավետ իրավական պաշտպանությունը, բժշկական օգնությունը ու ծառայությունը կարգավորող օրենսդրության և դրա կիրառման վերաբերյալ ուսումնասիրության տվյալները՝ կարող ենք ձեւակերպել զինծառայողների իրավունքների պաշտպանության ապահովման նպատակով հետևյալ խնդիրների լուծումը.

Օրենսդրության բնագավառում

1. «Հինված ուժերի կանոնագրքերում, մասնավորապես՝ «ՀՈՒ կարգապահական կանոնագրքում սահմանել զինծառայողների իրավունքների ցանկը՝ ըստ մարդու իրավունքների սկզբունքների»
2. Հստակեցնել կարգապահական վաշտում զինծառայողների իրավունքները և պարտավորությունները, որպեսզի այն չնոյնականացվի կարգապահական կալանքի հետ
3. Վերացնել ներքին ծառայության, պահակային և կայազորային ծառայության, զինված ուժերի և կարգապահական կանոնագրքերի միջև առկա իրավական հակասություններն ու անհամապատասխանությունները
4. Սահմանել «ՊՆ ԿՌԲՀ-ի որոշման օրինակի պարտադիր տրամադրումը անձին
5. Ամրագրել զինծառայողի վերաբերյալ ընդունվող յուրաքանչյուր իրավական ակտի (իրամանի, խրախուսանքի, տույժի, գեկուցագրի և այլնի) պարտադիր ծանուցումը և օրինակի տրամադրումը զինծառայողին կամ նրա մերձավոր բարեկամին
6. Սահմանել իրամանատարի, սպայի գործողությունը, անգործությունը բողոքարկող զինծառայողի անվտանգության և ապահովության երաշխիքները
7. Սահմանել բժշկական օգնության տրամադրման դեպքում օգնություն ստացող անձի կողմից հաստատումը ստորագրության միջոցով

Օրենսդրության կիրառման բնագավառում

1. Բացառել 24 ամսից ավելի զինծառայության դեպքերը
2. Զորամասերի բուժկետերը ապահովել համապատասխան մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսներով
3. «ՀՀ կառավարության կողմից զինծառայության ժամկետի երկարացման վերաբերյալ որոշումները համապատասխանեցնել «իրավական ակտերի մասին»՝ «օրենքի որոշյաներին»
4. Ապահովել զինծառայողների իրազեկվածությունը իրենց իրավունքների եւ դրանց պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ
5. Մշակել անձնակազմի հետ տարվող աշխատանքների մեթոդական ձեռնարկներ զինծառայողների հետ սոցիալ-հոգեբանական աշխատանքների իրականացման, նրանց իրավական կրթության ապահովման նպատակով
6. Ապահովել տույժերի և խրախուսանքների կիրառման նպատակով ընդունվող որոշումների համապատասխանությունը «իրավական ակտերի մասին»՝ «օրենքի պահանջներին»
7. Խրախուսանքների և տույժերի կիրառման վերաբերյալ ընդունվող որոշումներում ամրագրել դրանց բողոքարկման ուղիներն ու մեխանիզմները և անձին տրամադրել որոշման օրինակը
8. Բացառել առողջական որևէ խնդիր ունեցող անձի զորակույթը
9. Ապահովել առողջական խնդիր ունեցող զինծառայողների անհապաղ զորացրումը օրենքով

սահմանված ժամկետներում

10. Առողջական խնդիր ունեցող զինծառայողների վաղաժամկետ զորացրման դեպքում անձին ապահովել պատշաճ փոխհատուցմամբ
11. Բժշկական օգնության տրամադրման բոլոր դեպքերը պարտադիր և պատշաճ գրանցել համապատասխան մատյաններում
12. Հրապարակել << զինված ուժերում կարգապահական տույժերի, խրախուսանքների, բժշկական օգնության տրամադրման վերաբերյալ վիճակագրությունը:

7. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Տեղամաս	Հարցազրուցավար

Երբ է անցկացվել			Հարցման սկիզբը և ավարտը	
Օր	Ամիս	Տարի	Ժամ-րոպե	Ժամ-րոպե
01				

ՀԱՐՑԱԹԵՐԹ

Բարև Ձեզ, ես _____ եմ՝ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունից:

Մենք իրականացնում ենք հասարակական կարծիքի ուսումնասիրություն ՀՀ գինված ուժերում առկա խնդիրների, զինծառայողների իրավունքների խախտումների վերաբերյալ: Ձեր մասնակցություն այս հարցմանը կամավոր է, սակայն մեզ համար շատ կարևոր է Ձեր կարծիքը, քանի որ Ձեր անկեղծ պատասխանները մեծապես կնպաստեն հետազոտության արդյունքների հուսալիությանը: Ձեր պատասխանները առանձին չեն հրապարակվելու, այլ վերլուծության են ենթարկվելու մնացած պատասխանների հետ միասին:

Ընորհակալություն համաձայնության համար:

Հրահանգ հարցազրուցավարին

Բոլոր այն հարցերում, որտեղ չկա լրացուցիչ ցուցում, օրինակ՝ «Ընդունել մինչև 3 տարբերակ», ընդունվում է միայն մեկ պատասխանի տարբերակ:

Ոչ մի հարցում չկարդալ «98. Դժվարանում եմ պատասխանել», «99. Հրաժարվում եմ պատասխանել» տարբերակները:

Բոլոր այն հարցերում, որտեղ հարցվողը կնշի «Այլ» տարբերակ, բառացի գրել հարցվողի խոսքերը:

1. Որքան ժամանակ եք Դուք ծառայել ՀՀ գինված ուժերում որպես պարտադիր ժամկետային զինծառայող

1. 1-6 ամիս
2. 6-12 ամիս
3. 12-18 ամիս
4. 18-24 ամիս /2 տարի (անցնել Հարց 4)
5. 24 ամսից ավել

2. Ինչու եք Դուք այդքան ժամանակ ծառայել ՀՀ գինված ուժերում

1. Ծնվել է 2-րդ երեխաս
2. ՀՀ գինված ուժերում ծառայության ընթացքում ձեռք եմ բերել հիվանդություն, որի պատճառով ժամկետից շուտ եմ զորացրվել
3. Զինծառայության ընթացքում կատարված անօրիանական գործողությունների պատճառով իմ գինվորական ծառայության ժամկետը երկարաձգվել է
4. Այլ (նշել) _____

3. Որքան է տևել գինվորական ծառայությունից վաղաժամկետ զորացրելու մասին որոշման ստացումը

1. Նույն օրը
Այլ նշել օրերով _____
98. Դժվարանում եմ պատասխանել

4. Դուք ՀՀ գինված ուժեր զորկոչվելիս ձանաչվել եք

1. Պիտանի շարային ծառայության համար
 2. Պիտանի ոչ շարային ծառայության համար
 3. Պիտանի ծառայության համար սահմանափակումով (նշել այդ սահմանափակումը)
-

5. Եթե Դուք հնարավորություն ունենայիք չծառայել ՀՀ գինված ուժերում որպես պարտադիր ժամկետային գինծառայող, ապա Դուք՝

1. Չեիք գնա ծառայության
2. Այնուամենայնիվ կգնայիք ծառայության (անցնել Հարց 7)
98. Դժվարանում եմ պատասխանել

6. Ինչու չեիք զորակոչվի ՀՀ Զինված ուժեր (ընդունել բոլոր հնարավոր տարբերակները)

1. Ոչ կանոնադրային հարաբերությունների, գինված ուժերում բռնությունների, բռնարարքների և նման այլ պատճառներով,
2. ՀՀ գինված ուժերում բախումների ընթացքում վիրավորվելու/մահանալու հավանականության պատճառով,
3. Անբավարար կենցաղային և սանիտարահիգիենիկ պայմանների, վատորակ սննդի պատճառներով,
4. Ոչ պատշաճ բժշկական սպասարկման պատճառով,
5. Զինված ուժերի հանդեպ իշխանության ոչ պատշաճ, անպատասխանատու և անհեռատես քաղաքականություն վարելու պատճառներով,
6. Զինված ուժերում մարդկային հարաբերություններում բացասական կարծրատիպերի ներդրման պատճառով (օրինակ՝ հարբեցողության և թմրամոլության)

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅԵՐԻ ՊԱՇՏՊԱՍՈՂԱՅԱ ՀԻՄԱԿՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՂԱՅԱ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՂ

7. Զինված ուժերում հանցագործության թվաքանակի ավելացման և հաճախակիացման, զինծառայողներին հանցագործությունների մեջ ներգրավելու պատճառով,
8. Զինված ուժերում զինծառայության ժամանակահատվածը անհմաստ ժամանակի վատնում է,
9. Ծառայության ժամկետի երկարատեսության պատճառով (2 տարին շատ է)
10. Չէի ցանկանա այլ պատճառներով՝ _____
11. Չէի ցանկանա այլ պատճառներով՝ _____

98. Դժվարանում եմ պատասխանել

7. Կարծիք կա, որ << զինված ուժերում գերակշռում են ոչ կանոնադրային հարաբերությունները, որքանով եք Դուք համամիտ այդ մտքի հետ

1. Լիովին համամիտ եմ
2. Որոշ չափով համամիտ եմ
3. Այդքան էլ համամիտ չեմ
4. Բոլորովին համամիտ չեմ

8. Կցանկանայք արդյոք, որ Ձեր բարեկամը կամ ընկերը ներկայումս ծառայեր << զինված ուժերում

1. Այո (անցնել <արց 10)
2. Ոչ

9. Եթե չէիք ցանկանա որ Ձեր բարեկամը կամ ընկերը ներկայումս ծառայեր << զինված ուժերում, ապա ինչու (ընդունել բոլոր հնարավոր տարբերակները)

1. Ոչ կանոնադրային հարաբերությունների, զինված ուժերում բռնությունների, ձնշումների (բռնարարքների կամ այլ պատճառներով) և նման այլ պատճառներով,
2. << զինված ուժերում բախումների ընթացքում վիրավորվելու/մահանալու հավանականության պատճառով,
3. Անբավարար կենցաղային և սանիտարահիգիենիկ պայմանների, վատորակ սննդի պատճառներով,
4. Ոչ պատշաճ բժշկական սպասարկման պատճառով,
5. Զինված ուժերի հանդեպ իշխանության ոչ պատշաճ, անպատասխանատու և անհեռատես քաղաքականություն վարելու պատճառներով,
6. Զինված ուժերում մարդկային հարաբերություններում բացասական կարծրատիպերի ներդրման պատճառով (օրինակ՝ հարբեցողության և թմրամոլության)
7. Զինված ուժերում հանցագործության թվաքանակի ավելացման և հաճախակիացման, զինծառայողներին հանցագործությունների մեջ ներգրավելու պատճառով,
8. Զինված ուժերում զինծառայության ժամանակահատվածը անհմաստ ժամանակի վատնում է,
9. Ծառայության ժամկետի երկարատեսության պատճառով (2 տարին շատ է)
10. Չէի ցանկանա այլ պատճառներով՝ _____
11. Չէի ցանկանա այլ պատճառներով՝ _____

98. Դժվարանում եմ պատասխանել

10. Հստ Ձեզ՝ ձեր ծառայության ժամկետի ավարտին՝ ծառայության ժամկետի սկզբի համեմատ զինծառայողների իրավունքների պաշտպանվածության վիճակը լավացել է, վատացել է, թե մնացել է նոյնը:

1. Լավացել է
2. Մնացել է նոյնը (չի փոփոխվել)
3. Վատացել է

98. Դժվարանում եմ պատասխանել

11. Հստ Ձեզ՝ այսօր զինծառայողների ծառայության պայմանները (նկատի ունենք ֆիզիկական, մտավոր, հոգեբանական և մասնագիտական ծանրաբեռնվածությունը) ծանրացել են, թեթևացել են, թե մնացել են անփոփոխ:

1. Թեթևացել են
2. Մնացել են նոյնը (չեն փոփոխվել)
3. Ծանրացել են

98. Դժվարանում եմ պատասխանել

12. Հստ Ձեզ՝ որոնք են << զինված ուժերում, զինծառայողի համար երեք առաջնային խնդիրներն այսօր: Դասակարգեք դրանք ըստ առաջնահերթության (դասակարգումը նշել տարբերակի դիմաց):

13. Հստ Ձեզ՝ որոնք են << զինված ուժերում, զինծառայողի համար երեք առավել տարածված խնդիրներն այսօր: Դասակարգեք դրանք ըստ առաջնահերթության (դասակարգումը նշել տարբերակի դիմաց):

Առաջնային խնդիրներների ցանկ	Հարց 12	Հարց 13
1. Զինված ուժերում ոչ կանոնադրային հարաբերությունների առկայությունը		
2. Բռնությունների կամ բռնարարքների առկայությունը, պատշաճ կարգապահության բացակայությունը		
3. Սպայակազմի մասնագիտական որակի և պրոֆեսիոնալիզմի բացակայությունը		
4. Զինված ուժերում ծառայության ժամկետը		
5. Զինված ուժերում ծառայության պարտադիր լինելը		
6. Խախտումներով գործորդված գորակոչը		
7. << զինված ուժերում կաշառակերությունը, կոռուպցիան, գողությունը		
8. Հասարակության շրջանում << զինված ուժերի նկատմամբ անվստահությունը/ ցածր հեղինակությունը		
9. Զինծառայողներին հասանելի գումարներ չտրամադրելը		
10. Զինված ուժերի ոչ բավարար կենցաղային պայմանները, վատ սնունդը		
11. Զինծառայողների նկատմամբ խիստ/բիրտ վերահսկողությունը		

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅՈՒՆԻ ՊԱՇՏՊԱՍՈՒԹՅԱՆ ՀԻՄԱԿԱՂԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԻՆՎԱԾ ՈՒժԵՐՈՒՄ

12. Սպայակազմի կողմից անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը		
13. Մահվան դեպքերը /սպանություններ, ինքնասպանություններ/		
14. Զինված ուժերի խնդիրները ինձ չեն անհանգստացնում		
15. Այլ _____		
98. Դժվարանում եմ պատասխանել		

14. Եթե Դուք հնարավորություն ունենայիք, առաջին հերթին ինչը կփոխեիք << զինված ուժերում: Դասակարգեք դրանք ըստ առաջնահերթության (դասակարգումը նշել տարբերակի դիմաց, նշել մինչեւ 3 տարբերակ):

Առաջնային խնդիրների ցանկ	
1. Զինված ուժերում ոչ կանոնադրային հարաբերությունների առկայությունը	
2. Բոնությունների կամ բոնարարքների առկայությունը, պատշաճ կարգապահության բացակայությունը	
3. Սպայակազմի մասնագիտական որակի և պրոֆեսիոնալիզմի բացակայությունը	
4. Զինված ուժերում ծառայության ժամկետը	
5. Զինված ուժերում ծառայության պարտադիր լինելը	
6. Խախտումներով գործորդված զորակոչը	
7. << զինված ուժերում կաշառակերությունը, կոռուպցիան, գողությունը	
8. <Հասարակության շրջանում << զինված ուժերի նկատմամբ անվաստահությունը/ցածր հեղինակությունը	
9. Զինծառայողներին հասանելի գումարներ չտրամադրելը	
10. Զինված ուժերի ոչ բավարար կենցաղային պայմանները, վատ սնունդը	
11. Զինծառայողների նկատմամբ խիստ/բիրտ վերահսկողությունը	
12. Սպայակազմի կողմից անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը	
13. Մահվան դեպքերը /սպանություններ, ինքնասպանություններ/	
14. Զինված ուժերի խնդիրները ինձ չեն անհանգստացնում	
15. Այլ _____	
98. Դժվարանում եմ պատասխանել	

15. Դուք ծանոթ եք << Զինված ուժերի կանոնագրքերին եւ կանոնակարգերին

1. Այո
2. Մասամբ
3. Ոչ (անցնել <արց 17)

16. Ինչպես եք ծանոթացել այդ կանոնագրքերին եւ կանոնակարգերին

1. Զորամասում անցկացված հատուկ դասընթացների ժամանակ
2. Սպայակազմի կողմից (ոչ դասընթացների ժամանակ)
3. Այլ զինծառայողների միջոցով
4. Բոլոր նշված միջոցներով
5. Այլ _____

17. ՀՀ զինված ուժերում զինծառայության ընթացքում արդյոք Դուք ստացել եք խրախուսում

1. Այո
2. Ոչ (անցնել <արց 20>)

18. Եթե այո, ապա ինչպիսի (նշել մինչև 5 տարբերակ)

1. Սահմանված կարգապահական տույժի վերացում
2. Ծնորհակալության հայտարարում
3. Զինվորական պարտականությունների օրինակելի կատարման և ստացած խրախուսանքների մասին զինծառայողի ընտանիքին տեղեկացում
4. Գերատեսչական պատվոգրով պարգևատրում
5. Արժեքավոր նվերով կամ միանվագ գումարով պարգևատրում
6. Զորամասի բացված մարտական դրոշի մոտ զինծառայողի լուսանկարում
7. Լրացուցիչ արձակուրդի տրամադրում
8. Զորամասի տեղաբաշխման վայրից արտահերթ արձակում
9. Գերատեսչական կրծքանշաններով պարգևատրում
10. Գերատեսչական մեդալներով պարգևատրում
11. Զորամասի պատվո գրքում զինծառայողի լուսանկարի գետեղում և անվան, հայրանվան ու ազգանվան գրառում
12. Վաղաժամկետ հերթական զինվորական կոչման շնորհում
13. Հաստիքով նախատեսվածից մեկ աստիճանով բարձր հերթական զինվորական կոչման շնորհում
14. Անվանական զենքով պարգևատրում
15. Այլ _____

19. Ինչի համար (նշել)

20. Ծառայության ընթացքում Դուք երբնէ գնացել եք արձակուրդ

1. Այո
2. Ոչ (անցնել <արց 22>)

20.2. Քանի անգամ եք գնացել արձակուրդ (նշել)

21. Ինչպիսի արձակուրդ եք գնացել (նշել մինչեւ 3 տարբերակ)

1. <երթական
2. Արտահերթ, ընտանեկան պատճառներով
3. Արտահերթ, առողջական պատճառներով
4. Արտահերթ, խրախուսանքի պատճառով
5. Արտահերթ, լավ ծանոթի զանգով կամ միջամտությամբ
6. Այլ _____

22. Եթե չեք գնացել արձակուրդ, ապա երբեմն դիմել եք իրամանատարին այդ հարցով

1. Այո
2. Ոչ

23. Արդյոք ծառայության ընթացքում Դուք ենթարկվել եք տույժերի

1. Այո
2. Ոչ (անցնել <արց 26>)

24. Եթե այո, ապա ինչպիսի (նշել մինչև 5 տարբերակ)

1. Նկատողություն
2. Խիստ նկատողություն
3. Զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում՝ մինչև 1 ամիս ժամկետով
4. Աշխատանքի արտահերթ վերակարգի նշանակում՝ մինչև 5 վերակարգ
5. <հիմնական արձակուրդի տրման հետաձգում՝ մեկ ամսից մինչև երեք ամիս ժամկետով
6. Կարգապահական վաշտ ուղարկելը՝ տասն օրից մինչև մեկ ամիս ժամկետով
7. Գերատեսչական կրծքանշանից զրկում
8. Նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին
9. Պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով
10. Զինվորական կոչման իջեցում՝ մեկ աստիճանով
11. Այլ _____

25. Ինչի համար (նշել)

26. Երբեմն զորամասը ինքնակամ լրել եք

1. Այո

2. Ոչ (անցնել Հարց 28)

99. Հրաժարվում եմ պատասխանել
98. Դժվարանում եմ պատասխանել

27. Ինչ պատճառով (նշել)**28. Դուք << զինված ուժերում ծառայության ընթացքում ենթարկվել եք կարգապահական կալանքի**

1. Այո

2. Ոչ (անցնել Հարց 39)**29. Ինչի համար եք Դուք ենթարկվել կարգապահական կալանքի
(նշել)****30. Որտեղ եք կրել կարգապահական կալանքը**

1. Զորամասում
2. ՌՈ (ռազմական ոստիկանություն) բաժնում
3. ՌՈ վարչության կարգապահական վաշտում
4. Այլ

31. Քանի օր է տևել կարգապահական կալանքը (նշել օրերի քանակը)**32. Ում հրամանով կամ որոշմամբ եք ենթարկվել կալանքի**

1. Գումարտակի, դիվիզիոնի, ավիաէսկադրիլիայի, առանձին վաշտի հրամանատարների
2. Գնդի և բրիգադի հրամանատարների
3. Կորպուսի և դիվիզիոնայի հրամանատարների
4. Բանակի հրամանատարի
5. Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետի
6. Զոկի հրամանատարի
7. Դասակի հրամանատարի տեղակալի
8. Վաշտի ավագի և դասակի (խմբի) հրամանատարի
9. Այլ

98. Դժվարանում եմ պատասխանել

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅԵՐԻ ՊԱՇՏՊԱՍՈՂԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱԴՐԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՂԹՅԱՆ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

33. Ինչպիսի վերաբերմունքի եք արժանացել կարգապահական կալանք կրելու ընթացքում

1. Շատ լավ

2. Լավ

3. Վատ

4. Շատ վատ

99. Հրաժարվում եմ պատասխանել

98. Դժվարանում եմ պատասխանել

34. Բողոքարկել եք արդյոք կարգապահական կալանք կրելու մասին որոշումը

1. Այո

2. Ոչ (անցնել <արց 37)

35. Որ մեխանիզմով եք Դուք բողոքարկել կարգապահական կալանք կրելու մասին որոշումը

1. Դատական

2. Դիմելով վերադաս իրամանատարին

3. Լավ ծանոթի

4. Այլ

99. Հրաժարվում եմ պատասխանել

36. Ինչ արդյունքի եք հասել՝ բողոքարկելով

1. Ոչ մի, շարունակել եմ կրել կարգապահական կալանքը

2. Նախատեսվածից քիչ եմ կրել կարգապահական կալանքը

3. Այլ

98. Դժվարանում եմ պատասխանել

99. Հրաժարվում եմ պատասխանել

37. Կարգապահական կալանքը կրելուց առաջ ենթարկվել եք արդյոք բուժզննման

1. Այո

2. Ոչ (անցնել <արց 38)

37.2. Էստ Ձեզ՝ արդյոք կատարվել է մանրամասն բուժզննում

1. Այո, կատարվել է մանրամասն բուժզննում

2. Բուժզննումը կատարվել է ոչ այնքան մանրամասնորեն

3. Բուժզննումը կրել է ձևական բնույթ

4. Այլ

98. Դժվարանում եմ պատասխանել

38. Կարգապահական կալանքը կրելու ընթացքում բժիշկը Ձեզ ինչ դեպքերում է այցելել

1. Միայն գանգատ ներկայացնելիս
2. Բժշկի սեփական նախաձեռնությամբ
3. Ընդհանրապես չի այցելել

39. Զորամաս ընդունվելուց մինչև զորացրվելը քանի անգամ եք առանձնազրույց ունեցել ստորաբաժանման հրամանարի հետ

Նշել _____
98. Դժվարանում եմ պատասխանել

40. Կարծիք կա, որ զինծառայողները հնարավորություն ունեն անկաշկանդ բողոքարկելու իրենց հրամանատարների հրամանները, վիճարկելու դրանց օրինականությունը: Որքանով եք համամիտ այդ կարծիքի հետ:

1. Լիովին համամիտ եմ
2. Որոշ չափով համամիտ եմ
3. Այդքան էլ համամիտ չեմ
4. Բոլորովին համամիտ չեմ

41. Դուք կամ Ձեր համածառայակիցները բողոքարկել եք Ձեր հրամանատարի որոշումները և/կամ հրամանները

1. Այո
2. Ոչ (անցնել <արց 49>
98. Դժվարանում եմ պատասխանել
99. Հրաժարվում եմ պատասխանել

42. Եթե այո, ապա որքան հաջախ

1. Ծատ հաջախ
 2. Հաջախ
 3. Հազվադեպ
- 98. Դժվարանում եմ պատասխանել*

43. Ինչ եղանակով եք/են (ինչպես) Դուք կամ Ձեր համածառայակիցները բողոքարկել Ձեր հրամանատարի որոշումները և/կամ հրամանները

1. Բանավոր
2. Գրավոր
3. Այլ _____
98. Դժվարանում եմ պատասխանել

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅԵՐԻ ՊԱՇՏՊԱՍՈՂԱՅԱ ՀԻՄԱԽԱՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՂԱՅԱ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

44. Ինչպես եք/են բողոքարկել (բողոքարկման որ մեխանիզմն եք օգտագործել)

1. Վերադաս հրամանատարին
2. Դատարան
3. Հավ ծանոթի
4. Այլ _____

98. Դժվարանում եմ պատասխանել

45. Ինչպիսի խնդիրների էին վերաբերվում բողոքները (նշել)

46. Որքանով են լուծվել այդ բողոքում/երում եղած խնդիրները

1. Լիովին (անցնել <արց 48)
2. Մասամբ (անցնել <արց 48)
3. Չեն լուծվել
4. Չեն լուծվել և ավելի վատթարացել են

98. Դժվարանում եմ պատասխանել

47. Եթե չեն լուծվել, ապա Դուք կամ Ձեր համաձառայակիցները ինչ եք/են արել

1. Ոչինչ
2. Դիմել եմ դատարան
3. Դիմել եմ վերադաս հրամանատարին
4. Դիմել եմ լավ ծանոթի մեխանիզմին
5. Այլ _____

48. Ինչպես եք/են տեղեկացել բողոքարկման արդյունքներին

1. Գրավոր
2. Բանավոր
3. Այլ _____

98. Դժվարանում եմ պատասխանել

49. Արդյոք զինված ուժերում կան հրամանների և որոշումների բողոքարկման մեխանիզմներ

1. Այո
2. Ոչ (անցնել <արց 52)

98. Դժվարանում եմ պատասխանել (անցնել <արց 52)

50. Որքանով են արդյունավետ հրամանների և որոշումների բողոքարկման մեխանիզմները << զինված ուժերում

1. Լիովին արդյունավետ են
2. Ավելի շատ արդյունավետ են
3. Ավելի շատ անարդյունավետ են
4. Բոլորովին անարդյունավետ են

98. Դժվարանում եմ պատասխանել

51. Որքանով են բողոքարկման մեխանիզմները մատչելի ժամկետային գինծառայողների համար

1. Լիովին մատչելի են
2. Ավելի շատ մատչելի են
3. Ավելի շատ մատչելի չեն
4. Բոլորովին մատչելի չեն

98. Դժվարանում եմ պատասխանել

52. Եթեսէ որևէ հարցով դիմել եք Ձեր ստորաբաժանման կամ զորամասի հրամանատարին

1. Այո (անցնել <արց 54)
2. Ոչ (անցնել <արց 53, ինչից հետո անցնել հարց 56)

53. Եթե չեք դիմել, ապա ինչու

1. Դրա կարիքը չեմ ունեցել (անցնել <արց 56)
2. Մեզ արգելում էին անձամբ դիմել հրամանատարությանը (անցնել <արց 56)
3. Դիմելու դեպքում մեր վիճակն ավելի էր վատթարանում (անցնել <արց 56)
4. Այլ _____ (անցնել <արց 56)

54. Եթե այո ապա հիմնականում ինչ հարցերով

1. Ստորաբաժանման սպաների կողմից անհարգալից վերաբերմունքի կամ այլ բռնարարքի արժանանալու դեպքում
2. Շարքային այլ գինծառայողների կողմից անհարգալից վերաբերմունքի կամ այլ բռնարարքի արժանանալու դեպքում
3. Առողջական վիճակի վատթարացման և գինվորական հոսպիտալ ուղարկելու դեպքում
4. Արձակուրդ գնալու դեպքում
5. Այլ _____

55. Ինչպիսի լուծում է ունեցել

1. Լիովին լուծվել են
2. Մասամբ լուծվել են
3. Չեն լուծվել
4. Չեն լուծվել և ավելի վատթարացել են

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅԵՐԻ ՊԱՇՏՊԱՍՈՂԱՅԱ ՀԻՄՆԱԿԱԴՐԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՂԱՅԱ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

56. Մինչև զորակոչվելը առողջական խնդիրներ ունեցել եք

1. Այո
2. Ոչ

57. Ծառայության ընթացքում առողջական խնդիրներ ունեցել եք

1. Այո
2. Ոչ (անցնել Հարց 67)

58. Ինչ խնդիրներ (նշել)

1. _____
2. _____
3. _____

59. Որքան հաճախ են եղել

	1-ին առողջական խնդիր	2-րդ առողջական խնդիր	3-րդ առողջական խնդիր
Ծառ հաճախ			
Հաճախ			
Հազվադեպ			
Միանվագ/մեկ անգամ			

60. Նշված առողջական խնդիրներով ում եք դիմել (նշել)

1. _____
2. _____
3. _____

61. Հստ Ձեզ՝ արդյոք Ձեզ տրամադրվել է համապատասխան բուժօգնություն

	1-ին առողջական խնդիր	2-րդ առողջական խնդիր	3-րդ առողջական խնդիր
1. Այո			
2. Ոչ (անցնել Հարց 68)			

62. Ում կողմից (նշել պաշտոնը)

1. _____
2. _____
3. _____

63. Գնահատեք այդ օգնության որակը

	1-ին առողջական խնդիր	2-րդ առողջական խնդիր	3-րդ առողջական խնդիր
Ծատ լավ			
Լավ			
Միջին			
Վատ			
Ծատ վատ			

64. Զորամասի բուժկետը ինչպիսի պայմաններ է ունեցել

Գերազանց	
Լավ	
Միջին /բավարար	
Վատ	
Ծատ վատ	

65. Ձեր գանգատը ներկայացնելուց որքան ժամանակ հետո են արձագանքել (նշել օրերով)

	1-ին առողջական խնդիր	2-րդ առողջական խնդիր	3-րդ առողջական խնդիր
1. Անմիջապես (նշել օրերով)			
98. Դժվարանում եմ պատասխանել			

66.1 Արդյոք Դուք ծանոթացել եք Ձեր առաղջական վիճակի վերաբերյալ ակտերին

1. Այո

2. Ոչ

98. Դժվարանում եմ պատասխանել

66.2 Եթե ոչ, ապա ինչո՞ւ _____

67. Ինչպես եք գնահատում ձեր ստորաբաժանման սանհրահանգիչների, բուժակների աշխատանքը /Եթե ստորաբաժանումը համապատասխան հաստիքներն ունի/

	1. Սանհրահանգիչ	2. Բուժակ
Ծատ լավ		
Լավ		

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅՈՒՆԻ ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄԱԿՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

Վատ		
Ծատ վատ		
Այդպիսի ստորաբաժանում չկար		
98. Դժվարանում եմ պատասխանել		

68. Եղել են դեպքեր, երբ առողջական գանգատներ եք ունեցել, սակայն վերադաս հրամանատարությունն արգելել է դիմել բուժծառայության աշխատողին

1. Այո
2. Ոչ (անցնել Հարց 70)
98. Դժվարանում եմ պատասխանել

69. Եթե այո, ապա որքան հաճախ

1. Ծատ հաճախ
 2. Հաճախ
 3. Հազվադեպ
 4. Երբեք
98. Դժվարանում եմ պատասխանել

70. Ինչպես կգնահատեք Ձեր զորամասում տրամադրվող բուժօգնության որակը

1. Ծատ լավ
 2. Լավ
 3. Վատ
 4. Ծատ վատ
 5. Չեմ առնչվել
98. Դժվարանում եմ պատասխանել

71. Ինչպես եք գնահատում զորամասը սպասարկող կայազորային հոսպիտալում տրամադրվող բուժօգնության որակը

1. Ծատ լավ
 2. Լավ
 3. Վատ
 4. Ծատ վատ
 5. Չեմ առնչվել
98. Դժվարանում եմ պատասխանել

72. Ինչպես եք գնահատում ՀՀ ՊՆ կենտրոնական կլինիկական կամ զինվորական հոսպիտալում տրամադրվող բուժօգնության որակը:

1. Ծատ լավ
2. Լավ
3. Վատ
4. Ծատ վատ
5. Չեմ առնչվել

98. Դժվարանում եմ պատասխանել

73. Ինչպես եք գնահատում զորամասի սննդի որակը

1. Ծատ լավ
2. Լավ
3. Վատ
4. Ծատ վատ

98. Դժվարանում եմ պատասխանել

74. Ինչպես եք գնահատում զորամասի ջրի որակը

1. Ծատ լավ
2. Լավ
3. Վատ
4. Ծատ վատ

98. Դժվարանում եմ պատասխանել

**75. Ինչպես եք գնահատում զորանոցի սանիտարահիգիենիկ վիճակը
(մաքրություն, կրծողներ, ոջիլ, հանդերձարան և այլն)**

1. Ծատ լավ
2. Լավ
3. Վատ
4. Ծատ վատ

98. Դժվարանում եմ պատասխանել

Սոցիալ-ժողովրդագրական տվյալներ

76. Ձեր տարիքը

1. 19-21 տարեկան
2. 22-25 տարեկան
3. 26-28 տարեկան
4. 29 տարեկան և բարձր

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅԵՐԻ ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅԱՍ ՀԻՄԱԿԱԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՍ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

77. Ձեր կրթությունը

1. Չունեմ տարրական կրթություն
2. Տարրական
3. Թերի միջնակարգ (8-ամյա)
4. Միջնակարգ (10-12-ամյա)
5. Միջնակարգ մասնագիտական (տեխնիկում)
6. Թերի բարձրագույն
7. Բարձրագույն
8. <նետրուհական (գիտական աստիճան)

78. Ներկայումս Դուք աշխատո՞ւմ եք (Եթե ունի մի քանի աշխատանք, ապա գրել հիմնականի մասին)

1. Այս, ունեմ վարձատրվող աշխատանք	Լրիվ դրույքով աշխատող	1.
	Կես դրույքով աշխատող	2.
	Ինքնազբաղված	3.
2. Ոչ, չունեմ վարձատրվող աշխատանք	Թոշակառու	4.
	Ուսանող	6.
	Գործազուրկ	7.

79. Խնդրում եմ նշեք, թե ստորև բերված դատողություններից որն է առավել լավ բնութագրում Ձեր ընտանիքի տնտեսական դրությունը մինչև << զինված ուժեր զորակոչվելը

1. Գումարը չէր բավարարում սնունդ գնելու համար,
2. Գումարը բավարարում էր միայն սնունդ գնելու համար
3. Գումարը բավարարում էր սնունդ և հագուստ գնելու համար
4. Գումարը բավարարում էր սնունդ, հագուստ և այլ ապրանքներ գնելու համար

80. Խնդրում եմ նշեք, թե ստորև բերված դատողություններից որն է առավել լավ բնութագրում Ձեր ընտանիքի տնտեսական դրությունը ներկա պահին

1. Գումարը չի բավարարում սնունդ գնելու համար,
2. Գումարը բավարարում է միայն սնունդ գնելու համար
3. Գումարը բավարարում է սնունդ և հագուստ գնելու համար
4. Գումարը բավարարում է սնունդ, հագուստ և այլ ապրանքներ գնելու համար

ՃՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ



**ՀԵԼՍԻՆԿԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՍԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՋՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE**

2001 Հայաստանի
Հանրապետություն, Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (Փաք) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am
Ե/2013- 20.06/323
20.06.2013 թ.

**ՀՀ պաշտպանության նախարար
Ս. Օհանյանին**

Հարգելի պարոն Օհանյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում եմ մեր կազմակերպությանը տրամադրել տեղեկություններ հետևյալ հարցերի մասին 2011, 2012 և 2013 թթ-ի վերաբերյալ, ըստ տարեթվերի:

1. քանի՝ ժամկետային զինծառայող է ենթարկվել կարգապահական տույժերի՝ ըստ տույժեր տեսակների
2. քանի՝ հոգու է տրամադրվել իրախուսանք՝ ըստ տեսակների
3. զինծառայության ընթացքում քանի՝ ժամկետային զինծառայող է բողոքարկել իր նկատմամբ կիրառված կարգապահական տույժը
 - ա. ըստ վերադասության
 - բ. դատական կարգով
4. բողոքարկման արդյունքում քանի՝ կարգապահական տույժ է վերացվել, փոփոխվել Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ուստի, ենելով վերը նշվածից, խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Ընդհակալություն համագործակցության համար:

Կազմակերպության նախագահ՝

Կատարող՝ Ա. Սահիկյան
asadikyan@hcav.am

Արթուր Ասրունց





**ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՉՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE**

2001 Հայաստանի
Հանրապետություն, Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (Փաստ) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am
Ե/2013- 20.06/ 326
20.06.2013 թ.

**ՀՀ պաշտպանության նախարար
U. Օհանյանին**

Հարգելի պարոն Օհանյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում եմ մեր կազմակերպությանը տրամադրել տեղեկություններ հետևյալ հարցերի մասին 2011, 2012 և 2013 թթ.-ի վերաբերյալ.

1. ըստ տարեթվերի քանի ժամկետային զինծառայողի է տրամադրվել հերթական արձակուրդ
2. քանի ժամկետային զինծառայողի է տրամադրվել մեկ և քանիսին երկու հերթական արձակուրդ
3. ըստ տարեթվերի քանի ժամկետային զինծառայողի է տրամադրվել լրացուցիչ արձակուրդ
4. դրանցից քանիսը զինվորական ուսման կամ ծառայության բարձր ցուցանիշների համար և քանիսը՝ ելնելով ընտանեկան պայմաններից
5. ըստ տարեթվերի քանի ժամկետային զինծառայողի է տրամադրվել հիվանդության արձակուրդ
6. ըստ տարեթվերի քանի ժամկետային զինծառայողի է տրամադրվել արձակուրդ՝ որպես խրախուսանք

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերը նշվածից, խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Շնորհակալություն համազործակցության համար:

կազմակերպության նախագահ՝

Կատարաղ՝ Ա. Սադիկյան
asadikyan@hcav.am

Արքուր Ասքունց





**ՀԵԼՍԻՆԿԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՉՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE**

2001 Հայաստանի
Հանրապետություն, Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաք) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am
Ե/2013- 20.06/ 324
20.06.2013 թ.

**ՀՀ պաշտպանության նախարար
Ս. Օհանյանին**

Հարգելի պարոն Օհանյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում եմ մեր կազմակերպությանը տրամադրել տեղեկություններ հետևյալ հարցերի մասին.

1. քանի կազմակերպություն է մասնակցել 2012 և 2013 թթ.-ին զինված ուժերին խոզի մսի մատակարարման մրցույթին
2. որ կազմակերպություններն են հաղթող ճանաչվել մրցույթում և իրականացրել խոզի մսի մատակարարումը զինված ուժերին 2012 և 2013 թթ.-ին

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերը նշվածից, խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Շնորհակալություն համագործակցության համար:

կազմակերպության նախագահ՝

Կատարող՝ Ա. Սադիկյան
asadikyan@hcav.am

Արքուր Ասքունց





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈԱՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

«01» 08
2013թ.
ՀԿ/570-ԽԶ-427

**«ՀԵԼՍԻՆԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՉՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ»
կազմակերպության նախագահ
Ա.ՍԱՔՈՒՆՑԻՆ**

Հարգելի պարոն Սաքունց

Ի պատասխան Ձեր 20.06.2013 Ե/2013-20.06/323, Ե/2013-20.06/326 և Ե/2013-20.06/327 գրությունների՝ հայտնում եմ.

Ե/2013-20.06/323 գրություն

Համաձայն զորամասերից ստացված և << ԶՈՒ ԱՀՏԱ վարչությունում հաշվառված տվյալների՝

- Ծառայողական քննության արդյունքում նշանակվել է 2011 թվականին՝ 17342, 2012 թվականին՝ 14728 և 2013 թվականին (հովհանու 11-ի դրությամբ)՝ 6131 դեպքերով կարգապահական տույժ:

Ըստ տույժերի տեսակների՝ քանակական պատկերը հետևյալն է.

Կարգապահական տույժերի տեսակները	2011թ.	2012թ.	2013թ.
Նկատողություն	6679	6963	2945
Խիստ նկատողություն	2762	2404	1154
զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից գրկում	925	1085	570
աշխատանքի արտահերթ վերակարգի	2954	2841	925

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅՈՒՆԻ ՊԱՇՏՈԱՌՈՒԹՅԱՆ ՀԻՄԱԿԱԴՐՈՒԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

Նշանակում			
հիմնական արձակուրդի տրման հետազոտում		116	362
կարգապահական վաշտ ուղարկելը /մեկուսացում և պահում կարգապահական մեկուսարանում/	3862	1148	72
գերատեսչական կրծքանշանից զրկում	35	46	13
պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով	31	28	15
զինվորական կոչման իջեցում՝ մեկ աստիճանով	94	97	75

- 2011 թվականին կիրառվել է 69706, 2012 թվականին՝ 67286 և 2013 թվականին (հույսի 11-ի դրույթամբ՝) 26233 խրախուսանքի միջոց:

Ըստ խրախուսանքների տեսակների՝ քանակական պատկերը հետևյալն է.

Խրախուսանքների տեսակները	2011թ.	2012թ.	2013թ.
տրված կարգապահական տույժի հանում	6170	3946	710
շնորհակալության հայտարարում	31602	28599	10894
զինվորական պարտականությունների օրինակելի կատարման և ստացած խրախուսանքների մասին զինծառայողի ընտանիքին տեղեկացում	14501	15540	4058
գերատեսչական պատվոգրով պարզեցնելու պարագաներում	2679	2472	1804
արժեքավոր նվերով կամ գումարով պարզեցնելու պարագաներում	1322	1498	732
զորամասի բացված մարտական դրոշի մոտ լուսանկարում	352	596	313
լրացուցիչ արձակուրդի տրամադրում	6525	5724	2201
զորամասի տեղաբաշխման վայրից արտահերթ արձակում		1875	2852
գերատեսչական կրծքանշաններով, մեղախներով պարզեցնելու պարագաներում	2532	2884	1607
զորամասի պատվո գրքում գրանցում	81	115	48

հերթական զինվորական կոչման շնորհում	3942	4037	1014
--	------	------	------

- Նշված ժամանակահատվածում ժամկետային զինծառայողի նկատմամբ կիրառված կարգապահական տույժի՝ դատական կարգով կամ վերադասության սկզբունքով բողոքարկման դեպք չի գրանցվել:

Ե/2013-20.06/326 գրություն

Համաձայն զորամասերից ստացված և << ԶՈՒ ԱՀՏԱ վարչությունում հաշվառված տվյալների՝

- Հերթական (հիմնական) արձակուրդ է տրվել 2011 թվականին շուրջ 9400 պարտադիր ժամկետային զինծառայողի, որոնցից մոտ շուրջ 6200-ին՝ մեկ անգամ, շուրջ 3200-ին՝ երկու անգամ, 2012 թվականին՝ շուրջ 9100 պարտադիր ժամկետային զինծառայողի, որոնցից մոտ 6100-ին՝ մեկ անգամ, 3000-ին՝ երկու անգամ և 2013 թվականին (հուլիսի 11-ի դրությամբ)՝ շուրջ 6300 պարտադիր ժամկետային զինծառայողների:

- Լրացուցիչ արձակուրդ է տրվել 2011 թվականին՝ շուրջ 6500, 2012 թվականին՝ մոտ 5700, և 2013 թվականին (հուլիսի 11-ի դրությամբ)՝ շուրջ 2200 պարտադիր ժամկետային զինծառայողների:

- Պարտադիր ժամկետային ծառայողներին՝ զինվորական ուսման կամ ծառայության մեջ դրսևորած բարձր ցուցանիշներից, ինչպես նաև ընտանեկան պայմաններից ելնելով հերթական արձակուրդի տրամադրման հաշվառում չի իրականացվում/ գործող կարգով չի իրականացվում:

- << ՊՆ ԿՈԲՀ որոշմամբ հիվանդության արձակուրդ է տրամադրվել 2011 թվականին՝ 233, 2012 թվականին՝ 744 և 2013 թվականին (հուլիսի 17-ի դրությամբ)՝ 403 պարտադիր ժամկետային զինծառայողների:

Ե/2013-20.06/327 գրություն

- «Հ ԶՈՒ 2012թ. կարիքների համար խոզի մսի գնման գործընթացին, որն իրականացվել է սահմանափակ ընթացակարգով, մասնակցել են 3, իսկ 2013թ. շրջանակային համաձայնագրերի կնքման ընցակարգով՝ 8 կազմակերպություններ:
- 2012թ. գնման գործընթացում հաղթող է ճանաչվել «Ա.Օհանջանյան» ՍՊ ընկերությունը, իսկ 2013թ. «Ելիտ կապիտալ» ՍՊ ընկերությունը:

«ՊԱՇՏՊԱՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական

Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ



**ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՍԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՉՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE**

2001 Հայաստանի
Հանրապետություն, Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաք) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am
Ե/2013- 25.07/ 397
25.07.2013 թ.

**ՀՀ պաշտպանության նախարար
Ս. Օհանյանին**

Հարգելի պարոն Օհանյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում եմ մեր կազմակերպությանը տրամադրել տեղեկություններ այն մասին, թե

1. 2007 թ-ից մինչեւ 2012 թ-ը սպայական կազմի քանի անդամ է ենթարկվել կարգապահական տույժի, մասնավորապես:
 - նկատողություն
 - խիստ նկատողություն
 - նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին
 - պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով
 - զինվորական կոչման իջեցում՝ մեկ աստիճանով
 - հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետի կասեցում՝ մեկ ամսից մինչև վեց ամիս ժամկետով
 - ռազմաւումնական հաստատությունից հեռացում
 - զինվորական ծառայությունից արձակում:
2. 2007 թ-ից մինչեւ 2012 թ-ը սպայական կազմի քանի անդամ է արժանացել խրախուսանքների, մասնավորապես:
 - տրված կարգապահական տույժի հանում
 - շնորհակալության հայտարարում
 - գերատեսչական պատվորով պարզեատրում
 - արժեքավոր նվերով կամ միանվագ գումարով պարզեատրում
 - գերատեսչական մեղալներով պարզեատրում
 - զորամասի պատվո գրքում զինծառայողի լուսանկարի գետեղում և անվան, հայրանվան ու ազգանվան գրառում
 - վաղաժամկետ հերթական զինվորական կոչման շնորհում
 - հաստիքով նախատեսվածից մեկ աստիճանով բարձր հերթական զինվորական կոչման շնորհում
 - անվանական գենքով պարզեատրում:

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅՈՒՆԻ ՊԱՇՏՊԱՍԾՈՒԹՅԱՆ ՀԻՄԱԿՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

Խնդրում եմ տրամադրել տեղեկատվությունը ըստ հետևյալ խմբերի:

1. Կրտսեր սպայական կազմ

- լեյտենանտ
- ավագ լեյտենանտ,
- կապիտան

2. Ավագ սպայական կազմ

- մայոր
- փոխգնդապետ
- գնդապետ

3. Բարձրագույն սպայական կազմ

- գեներալ-մայոր
- գեներալ-լեյտենանտ
- գեներալ-գնդապետ
- բանակի գեներալ

Միաժամանակ ցանկանում եմ հայտնել որ, ըստ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի՝ եթե զրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, զրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:


Ընդհակալություն համագործակցության համար:

կազմակերպության նախագահ՝

Արթուր Ասրունց

Կատարող՝ Ա. Սադիկյան

asadikyan@hcav.am





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

«23» 08
ԶԵԿՈՒՅՑ-ՀՀՀ-987 2013թ.

**«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱԹԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՋՈՐԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՍԱՔՈՒՆՑԻՆ**

Հարգելի պարոն Սաքունց

Ի պատախան Ձեր՝ 2007-2012թ.թ. սպայական կազմին տրված տույժերի և խրախուսանքների մասին (Ե/2013-25.07.397, առ 25.07.2013թ.) հարցման, տեղեկացնում եմ, որ այն ուսումնասիրվել է «ՊՆ համապատասխան ստորաբաժանումներում: Համաձայն հաշվառված տվյալների՝ 2007-2012թ.թ. կարգապահական տույժի են Ենթարկվել շուրջ 4200 սպաներ: Կրտսեր սպայական կազմում տույժի Ենթարկված սպաների թիվը շուրջ 2200 է, ավել սպայական կազմում՝ 2000, բարձրագույն սպայական կազմում՝ 10 սպա:

2007-2012թ.թ. խրախուսվել են շուրջ 7200 սպաներ: Կրտսեր սպայական կազմից խրախուսվել են շուրջ 3500, ավել սպայական կազմից՝ 3600, բարձրագույն սպայական կազմից՝ 40 սպաներ:

Հարգանքով՝

«ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական

Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

